

ՀՈՎՃ. ԹՈՒՍԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ
ՅԵՐԿԵՐ

ՀԵՐԿԵՐ

891.99

Բ-89



6 NOV 2011



ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

891.99

Բ-89

Կ. Մ. ՀՈՎԶ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



գրք. Թումանյան

ԸՆՏԻՐ ՅԵՐԿԵՐ



Հ Ա Յ Պ Ե Շ Ր Ա Տ
1940



Ն Ա Ռ Ե Ր Գ Ա Ն Ք

Լեռներ՝, ներշնչված դարձյալ ձեզանով,
Թընդում ե հողիս աշխուժով լըցված,
Ու ջերմ ըղձերըս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախուռն յերամով:

Ձե՛ղ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կյանքի տըխրության ամպերի տակից
Յես ձայն եմ տալիս ու ծանրաթախիժ
Հողուս ձայները ձեզ բերում նըվեր:

Քեզ մոտ եմ դալիս, իմ հի՛ն տրամություն,
Վեհափառ դայակ մանուկ որերիս,
Այնժամ ել չեյիր ինձ հանդեստ տալիս,
Սըրախ ականջին խոսելով թաքուն...

Ո՛վ, վոր կանչում ես դիշեր ու ցերեկ
Հազար ցավերով, հազար ձեւերով,—
Վողեվորության հըզոր թևերով
Քեզ մոտ եմ դալիս, հայրենի՛ք իմ հեք:

Գալիս եմ, բայց վոչ ուրախ յերդերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
Եղ անդընդախոր ձորերըդ լըցնեմ:

Ձորե՛ր, ա՛յ ձորեր, սե, լայնաբերան,
Սըրտիս ես խորունկ վերքերի նրման.
Աստծու հարվածի հեռքերն եք դուք ել,
Ձեզ մաս եմ դալիս, ուզում եմ յերգել:

Դուք ել խոսեցե՛ք, դուք ել պատմեցե՛ք,
Ձեր անդունդներով յեկեք շափվեցե՛ք,
Դուք ե՞լ եք, տեսնեմ, ենքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիժն ահափոր...

1890

ՀԻՆ ՈՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շքրջան կազմած,
Քեֆ էյին անուժ
Յեկ ուրախանում
Մեր հըսկա պապերն ու մեր հայրերը՝
Գյուղի տերերը:

Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Յերեք դասընկեր,
Նըրանց առաջին զըլխարաց կանդնած,
Ձեռքներս խոնարհ սըրտներիս դըրած,
Զի՛լ, ուժեղ ձենով նըրանց ըսպատում—
Տաղ էյինք ատում:

Յերբ պլարթաձայն մեր յերզը լըռեց,
Մըռայլ թամազեն բեխերն վըլորեց,
Նըրա հեռ վերցրին լիք բաժակները
Բուրբ մեծերը
Ու մեզ որհնեցին.— «Ապրե՛ք, յերեխեք,
Բայց մեզ պես չապրե՛ք...»

Ժամանակ անցավ, նըրանք ել անցան,
Զըվարթ յերզերս վըշտալի գարձան.
Ու յես հիշեցի մեր որը լալիս,
Թե մեզ սրհնելիս
Ինչու ասացին.— «Ապրե՛ք, յերեխեք,
Բայց մեզ պես չապրե՛ք...»

Խաղաղությո՛ւն՝ ձեզ, մեր անբա՛խտ պապեր,
Ձեզ տանջող ցավը մեզ ել ե պատել:
Այժ՛ըմ, արևրության թե քեֆի ժամին,
Մենք ել՝ սրհնելիս մեր զավակներին՝
Ձեր խո՛սքն ենք ասում — Ապրե՛ք, յերեխեք,
Բայց մեզ պես չապրե՛ք...

1887

ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԸ

Արի՛, դուժան, վարի՛, դուժան,
Որն եկել ե, ճաչ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Որհնյալ ե աստված, հորովե՛լ:

Քաշի՛, յեզը, ուսիդ մատաղ,
Քաշի՛, քաշենք, վար անենք.
Ճիպտի՛ն արա, քըշի՛, հոտաղ,
Մեր սև որին ճար անենք:

Պարտքատերը դանդառ դընաց,
Քյոխվեն կը դա, կը ծեծի,
Տերտերն որհնեց, անվարձ մընաց,
Կը բարկանա, կանիծի:

Են որն եկան թովջի արին,
Հարկ են ուզում տերության.
Ի՞նչ տամ կոռին ու բեզյարին...
Վարի՛, վարի՛, իմ դուժան:

Ձեռքս պակաս, ուժքս հատած,
Հազար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Արի՛, դուժան, վարի՛, դուժան,
Որն եկել ե, ճաչ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Որհնյալ ե աստված, հորովե՛լ:

1887

Հ Ա Մ Ե Ր Գ

Վրտակը ժայռից ներքև և թրուշում,
Թափ առած ընկնում քարերի դըլխին,
Զարկում ավազին, շաչում և, ճչում,
Ճըչում անհանդիստ, փըրփուրը բերնին:

Ինչպես ծերունին, ձենով պատաված,
Զայնակցում և ժիր թոռնիկի յերզին,
Այնպես և ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալի ջրի ազմուկին:

Այն ինչ բնության զրոյարթ համերզի
Ունկնդիրն անխոս, հավիտենական,
Ժայռը մըտախոհ՝ իր մըտայի մըտքի
Յեռուից ընկած լըսում և նըրան:

1890

ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ

Եյ, աստղե՛ր, աստղե՛ր,
Յերկընքի աչքեր,
Վոր այդպես վառ վառ
Ժըպտում եք պայծառ.
Ժըպտում էյիք դուք,
Յերբ յես դեռ մանուկ
Աշխույժ ու կայտառ,
Ձեզ նըման պայծառ
Թըրփըտում էյի
Ու ցավ չունեյի...

Ժըպտում եք այտր,
Յերբ թույլ ու անզոր,
Կորած հույսերիս
Կրակիծն եմ լալիս...
Կը ժըպտաք նաև
Շիրիմիս վերև...

1890

ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

Գալիս եմ, ահա, ասում ե աստված,
Ողնեմ աղքատին իր ծանրը կըլովում.
Ձեմ թողնի նրան հավիտյան լըքված,
Նա ինձ ապավեն կանչեց նեղ սրում:

Վա՛յ ձեզ, հրդորներ, վոր իր խըրճիթում
Ճընչեցիք խեղճին, այրուն ու վորրին,
Ու՛ վեա, անպատիժ, ասիք ձեր սըրտում—
Ո՛վ ե վերեկց նայում մեր ճամփին:

Մի՞թե կ'սրծում եք՝ չեր տեսնում, լըսում,
Նա, վոր ստեղծեց աչքեր ու ախանջ.
Մի՞թե կարծում եք ուժն եր պակասում,
Յեթե համբերեց դատելուց առաջ:

Իմ աչքերն անթարթ ձեր ճամբի վրա
Հըսկել եմ արթուն յես ձեր դործերին,
Ել չեմ դանդաղի. գալիս եմ ահա՛,
Յե՛ս, տե՛ր դորությանց, և հուրն իմ ձեռին:

Յես հուր եմ ձըլում ճընչվածի հողին,
Նրա համարձակ լեղվով ձեզ դատեմ,
Յես ուժ եմ տալիս աղքատի բազկին,
Նրա թիկունքին՝ գալիս եմ ձեր դեմ:

1902

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն դիչեր,
Ու մենք անհատնում
Են անլույս մըթնում
Յերկար դարերով գընում ենք դեպ վեր,
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր դանձերն անդին,
Մեր դանձերը ծով,
Ինչ վոր դարերով
Յերկնել ե, ծընել մեր խորունկ հողին,
Հայոց լեռներում,
Բարձր լեռներում:

Բայց քանի անգամ չեկ անապատի
Որդուները սե
Իրարու յետե
Յեկան դարկեցին մեր քարվանն աղնիվ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում:

Ու մեր քարվանը չըփոթ, սոսկահար,
Թալանված, ջարդված
Ու հատված, հատված,
Տանում ե իրեն վերքերն անհամար,
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռու աստղերին,
Յերկրների ծերին,
Թե յե՞րբ կը բացվի պայծառ առափոս՝
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:

1902

1569
40

Հայոց վիշաք անհուն մի ծով,
Պափար մի ծով ահադին,
Են սև ծովում տառապելով,
Լող ե տալիս իմ հողին:

Մերթ դայրացկոտ ծառս ե լինում
Մինչև յերկինք կապուտակ,
Ու մերթ հողնամ սուղվում, իջնում
Դեպի խորքերն անհատակ:

Վոչ հատակն ե գտնում անվերջ
Ու վոչ հասնում յերկինքին...
Հայոց վշտի սև ծովի մեջ
Տառապում ե իմ հողին:

1903



Ժամանակն անվերջ, տիեզերքն անհուն.
Ու նրանց միջում հավիտյան սիրուն
Կյանքը՝ հարաշարժ հոսանք է վարար...
Նորանոր ույթեր ճնշում են իրար,
Յերնում են թափով,
Իջնում տաղնապով,
Ու կենդան, կայտառ,
Միշտ նոր ձևի մեջ,
Անդուլ, անդադար
Հոսում են անվերջ...

Են լայն հոսանքի, մեծ աղմուկի տակ
Հավիտյան անշարժ, համբ ու անգիտակ,
Անտարբեր է՛ն տաք, յետուն պայքարին,
Անցնող սրերին, ապրող աշխարհին՝
Հզորն ու տկար
Ընդմիշտ հավասար,
Անխտիր հալվում՝
Մեծ հանգրստի մեջ,
Հալվում են, ձուլվում,
Հանգչում են անվերջ...

1907

Ը Ն Տ Ր Յ Ա Լ Ը

Հոգու սրբազան կրթակով վառված
Իջնում եր Մովսես լեռան դադաթից,
Իջնում եր ասեղ պատգամներն առած,
Շղջթայից հանող աստուծո մոտից:

Ու մինչ կանխատես աչքովն իր հոգու
Տեսնում եր դալոցն իր փողովբրդի,
Ու մինչ հըրճվում եր... ասա ներքևից
Չայներ բարկության ու խառն աղմուկի...

Ու տեսա՞լ Մովսես լեռան բարձունքից,
Փողովուրդն ենտեղ ներքև, հովիտում՝
Աստված է շինել վոսկուց, արծաթից,
Պարում է շուրջը ու հարբած դոռում:

— Ինչո՞ւ մեկ բերավ Մովսես անապատ,
Լի Յեզիպտոսից ինչո՞ւ հանեց մեկ...
Ո՞ւր է մեր սըխտորն ու սոխը առատ...
Ենտեղ հանգիստ եր ու լիքն եր ենպե՛ս...»

Գոռում է եսպես ու հարբած պարում:
Ու... սուրբ Սինայի մըռայլ ամպերում
Կանդնեց մարգարեն, նայեց դեպի վեր,
— «Մի՞թե այս ամբոխն իմ յեղբայրն է, Տե՛ր...»

— Լըսում եմ ձայնը լեռների գլխին,
Ծովեր եմ պատում, անցնում անապատ,
Հըրեղեն սյունով տանում իր ուղին,
Նա մի՛շտ կասկածոտ, նա մի՛շտ հուսահատ...

Տանջանքի միջից նըկատում եմ յես
Յերկիրն ավետյաց հեռո՛ւ մըշուշում,
Իսկ նա փոքրոզի, կույր ու կարճատես,
Գերության սըխտորն ու սոխն ե հիշում...

Յե՛վ յերբ ամպերում խոսում եմ քեզ հետ,
Քեղնից փըրկության պատգամ եմ բերում,
Նա ենտեղ ցածում մոլի՛, անհեթե՛թ
Վոսկի յե պաշտում ու հարբած պարում...

Ինչո՞ւ յեն, աստվա՛ծ, քո վեհ պատգամներ,
Իմ տանջանքն ինչո՞ւ... դոչեց զայրացած,
Ու մեծ խորհուրդի քարյա տախտակներ
Ժայռերի զըլխից թողեց դեպի ցած...

Բայց... մյուս առավոտ, յերբոր դեռ քընած,
Հանգչում եր ամբոխն աղմուկից հոգնած,
Իր ցուպը ձեռքին բարձրանում եր նա
Դարձյալ միայնակ վե՛ր դեպի Սինա:

1907

Վ Ա Յ Ր Ե Ջ Ք

Քառասուն տարի բընած ճանապարհ՝
Շիտակ, անվեհեր
Գընում եմ յես վեր—
Դեպ Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ:

Քառասուն տարի ճամփովն ահարկու
Անցել եմ Եպես
Ու հասել եմ յես,
Խաղաղությանն եմ հասել յես հոգու:

Թողել եմ ներքև, մեծ լերան տակին,
Յե՛վ փառքը, և՛ դանձ,
Յե՛վ քեն, և նախանձ,—
Սմենը, ինչ վոր ճընշում ե հողին:

Յե՛վ են ամենը, արդ նայում եմ յես—
Տեսնում եմ նորից
Իմ լերան ծերից.—
Շնպես հասարակ, դատարկ են կնպե՛ս...

Յե՛վ յես իմաստուն ու բեռը թեթև,
Անհող ծիծաղով,
Յերբով ու տաղով
Իջում եմ զըվարթ իմ լերան յետև:

1909

PARODIA

Հովհ. Հովհաննիսյանի՝ «Իմ հայրենիքը տեսե՞լ ես,
ասա՛...» բանաստեղծության:

«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛...»

Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական դարուն,
Ուր թաքնում են մերոնք ու ույլերը,
Ուր հոսում է միշտ արցունք ու արյուն:

Տեսե՞լ ես արդյոք այն այգիները,
Ուր իբրև դո՛հար խաղողն է հասնում,
Վորից դատարկ են նրստում տերերը,
Վոր միշտ ցեցերի դրոպանն է յըցնում:

Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով
Կատաղած անցնելիս գետը փրփրած.
Վասի՞նք ես անցնել կտարած կամուրջով,
Նստե՞լ ես արդյոք ափին մոլորված:

Տեսե՞լ ես դյուղը հովտի մեջ մենակ
Ու շուրջը փրշված հին աղբակույտեր.
Տեսե՞լ ես վո՛նց է այնտեղ շարունակ
Կըռվում, կեղեքում քոխվեն ու տերտեր:

Յեվ դու տեսե՞լ ես նրա գանձն անդին,
Հարալի դուստրը— խղճուկ արարած,
Լքուլթյան կնիքն իրեն չբթունքին
Ու ինքը ամբողջ կեղտի մեջ կտրած:

Տեսե՞լ ես նրա յեպիսկոպոսին
Դեմքին դո՛հալթյան տախակ կնիքը:
Գլտե՞ս ինչ դարդ է թաղման հանդեսին,
Յեվ կամ ի՞նչ արժե մատի մատնիքը:

Յեվ դու տեսե՞լ ես նրա դպիթը,
Վոր ազատ միտք է վաճառում հային.
Զգո՛ւյշ, բարեկամ, չըվիճես հետը,
Թե չե կը մատնի քեզ պուլիցիային...

«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛...»

1910

ՀԱՅՐԵՆՆԻՔԻՍ ՆԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին և ու հեռւում
Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն և թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ յերբ դառնում եմ դեպի քեզ՝
Մըղկըտում և սիրտըս անվերջ քո թառանջից աղեկեղ,
Ու գաղթական դավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Յե՛վ դժուրերից, և՛ շեներից՝ տըխո՛ւր, դատարկ ու խավար,
 Չարկվա՛ծ հայրենիք,
 Չըրկվա՛ծ հայրենիք:

Խըռնրվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,
Տըրտում են քո յերեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար վոհմանները աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,
Վոր դարձըրին քեզ մըշտական սև ու սուղի մի հովիտ,
Խեղճ ու լալիան քո յերգերով, հայացքներով անժըպիտ,
 Վողբի՛ հայրենիք,
 Վորբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհըրդավոր ճամփին նորի ու հընի-
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղեա,
Խորհում ես դու են մեծ խոսքը, վոր աի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս են յերկիրը, ուր ձըղտում և մեր հողին—
 Հույսի՛ հայրենիք,
 Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հազած,
Հազա՛ր հազար լուսապայծառ հողիներով ճառագած,
Ու յերկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ բանջին,

Կենսաժըպիտ էր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոեաներ, վոր չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի դովեն քո նոր կյանքը նոր յերգերով, նոր խոսքով,
 Իմ նո՛ր հայրենիք,
 Հըզո՛ր հայրենիք...

1915

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Յերբ խոսում են վրաստանի
Թըշնամանքից արյունոտ,
Չարժանք է ինձ պատում հայտնի,
Յեզ խորին ցալ, և ամօթ:

Վոչ ապաքեն ղիտեն նրա
Վաստիները մինչ անգամ,
Ազ ու հացն է սիրել միշտ նա,
Միշտ աշխարհքին բարեկամ:

Թեև պատած հաղար վերքով՝
Շատ ցալեր է նա տարել,
Բայց խաչակիր իրեն ձեռքով
Դեռ վոճիր չի կտտարել:

Յեզ իր ձեռքը յեթե համառ
Տարածում է հին վրկան,
Վոչ թե դաժան դործի համար,
Այլ դեպ պայծառ ապապան:

Յեզ ինչպես չեն տեսնում վամանք
Նըրա ընթացքն աննընկուն,
Վո՞նց են ասում — իր բախտի տակ
Նա ընկել է անկանդուն:

Վո՛չ ապաքեն կովկասն անասառ
Պատ է կանդնած մինչ յերկին,
Վոր չըհաղթի բուքը նըրան,
Ինչքան սուրա մոլեղին:

Վո՛չ ապաքեն Պոնտոսը հար
Շունչ է հոսում հով ու զով,
Վոր նա հալետ մընա դալար,
Խորշակներից ապահով:

Յեզ չեն լրսել դեռ վըրացու
Յերգը զըվարթ ու անհոգ,
Վո՞նց է ծաղրում նա մահացու
Ամեն հարված անողոր:

Յերբ խոսում են իր անկումից,
Թըշնամանքից արյունոտ,
Չարժանք է ինձ պատում անվերջ,
Յեզ խորին ցալ, և ամօթ:

1916

ԻՄ ՅԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտա՛յ, անձե՛ր,
Յես հարուստ եմ, ջա՛ն, յես հարուստ:
Ծով բարություն, չընորհք ու սեր
ձոխ պարզև եմ առել վերուստ:

Անհուն հանքը իմ դանձերի
Սիրտս և առատ, շին ու աղատ՝
Ինչքան ել վոր բաշխեմ ձրրի—
Սերն անվերջ և, բարին անհատ:

Յերկյուղ չունեմ, ահ չունեմ յես
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհքով մին՝ ահա եսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Յես հարուստ եմ, յես բախտա՛փոր
Իմ ծընընդյան պայծառ որեն,
Ել աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր տրվածն եմ տալիս իրեն:

1918

ԳՐԱԴԱՐԱՆԸ

Բաղձած են շուրջս նըրանք ամեն որ—
Բալոր հանճարեղ մեծերն աշխարհքի,
Յերդում են, պատմում ներդաշնակ ու խոր
Միտքն ու դադանիքը մահի ու կյանքի:
Ու եսպես՝ ինձ հետ, իմ ասնն ամեն որ,
Վոչ հաց են ուզում ինձանից, վոչ շոր:

1917



Քոչաքարում յես վազեցեմ
Յեղնիկի հետ յերազ, Անուշ,
Չըմբուխտ սարում յերազեմ եմ
Չընաչխարհիկ յերազ, Անուշ:

Չըմբուխտ սարը ամպ է պատեմ.
Իմ արևի լույսը վատեմ,
Աստծուն խնդիրք արի շատ եմ՝
Ինձ չըարմեց մուրազ, Անուշ:

Իմ մուրազը շատ եր չքեց,
Դըրախտ պիտեք քաղաք ու դեց.
Յերգը հոսեր հառաչքի տեց,
Սերն ու բարին՝ Արազ, Անուշ:

Շատ են յեկել եսպես անցել,
Հագա՛ր ախոսս են մարդկանց ել:
Յես ել կերթամ, քիչ է մնացել,
Եսքա՛ն վազ ու վըռազ, Անուշ:

1917

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Վեր է կացել են սարում
Մեր Չալակը իր թևից,
Գրնում է մութ անտառում,
Քաջ ախպերըս յեռեից:

Չըրընդում են նըրանք խոր
են անտառում կուսական,
Յես կանչում եմ նորից նոր,
Ինձ թրվում է, թե կըզան...

Չո՛ւր... վաղո՛ւց են, ա՛խ, նրանք
Մեր սարերից դընացել,
են զիլ ձեներն է մենակ
Իմ ախանջում մընացել...

1918

ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Չէ՛, չի լրուել մեծ Շոթայի
Յերգի ձենը կաթողին
Ու դարավոր ցալին ամէնի
Չի խորտակել են հողին:

Թընդում է դեռ նոր ձեռքերում
Են քնարը գովանի,
Խընդում է դեռ նոր յերգերում
Վրաստանը գեղանի:

—Վողջո՛ւյն, վողջո՛ւյն ձեզ հին ու նոր
Նրի, բարի ընկերներ,
Արարատի կողմից ետը—
Յեղբայրական յերգ ու սեր:

Հին որերի վերջալուսին,
Արշալուսին նոր կյանքի
Յերգենք սըրտանց ու միասին
Յերգը հանուր բերկրանքի:

Բա՛րձրը հընչի մեր յերգը թող,
Չարի ձենը խըլացնի,
Հընչյուններովն իր կախարդող
Յերկրե յերկիր թող անցնի:

Ամեն կողմից թող ամենին
Հըրապուրի ու բերի
Բաղձալեզու խըրախձանին
Ծեր Կովկասի ազգերի:

Յելինք՝ տեսով ու ճանաչով,
Հնկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյաճանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

Շա՛տ, շատ արցունք թափվեց մեզնում,
Մեն մի կաթիլն— մի խըրատ,
Անլուռ անդուլ են է ատում—
Ճամփա չունի գործը վատ:

Թող՝ ով կուզի՛ յերկար բարակ
Չոռ տա խելքին մինչև մահ,
Մենք իմաստուն— սիրենք, խնդանք,
Կյանքը ես է, ինչ վոր կա:

Չարիէ՛ք ուժգին մեծ Շոթայի
Են քընարը վոսկելար,—
Մարդը ինչ տա— են կը շահի,
Թող իմանա վողջ աշխարհ.—

Տեսնի քանի նոր ձենով է
Խոսում մուսան ես յերկրում,
Պատգամներով պայծառ ու վեհ,
Հաղար ու մի յերգերում:

Վողջո՛ւյն, վողջո՛ւյն ձեզ հին ու նոր
Նրի, բարի ընկերներ,
Արարատի կողմից ետը—
Յեղբայրական յերգ ու սեր:

1919

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

ԴԼԺԱՐ ՏԱՐԻ

Վա՛րի, գութան ջան, վա՛րի,
Շատ է դրժար ես տարի,
Պապին տարան քյոխվի դուռ,
Հարկ են ուղում,— Տո՛ւր հա, տո՛ւր
— Կրտամ, քյոխվա, փող չունեմ:
— Չունե՞ս, Շեկոն՝ կրտանեմ.
— Ամա՛ն, քյոխվա, քեզ դուրբան,
Շեկոն՝ գընա թող գութան,
Գարնան անենք վար ու ցանք,
Կալը կասենք, բերենք տանք:
Գարունքը յես դառալ էլ,
Գութան լրժվեց— հորովե՛լ...
Վա՛րի, գութան ջան, վա՛րի,
Դատենք ցորեն ու դարի,
Տանենք ածենք քյոխվի փեշ,
Վոր չըտանի մեր գոմեշ:

1908

Հ Ա Խ Ա Ր Ա Կ

Մանի՛, մանի՛, ճախարակ,
Նըստենք բանի, ճախարակ,
Մնաերին տեր ճախարակ,
Վորբերին՝ հեր, ճախարակ:

Լուսնյակը դուս է յեկել,
Աչքերիս լուս է յեկել:
Լուսնի լուսով մանեմ յես,
Սպիտակ վոստեր անեմ յես,
Աղքատ որով ու լացով
Վորբեր պահեմ մանածով:

Մանի՛, մանի՛, ճախարակ,
Նըստենք բանի, ճախարակ,
Մնաերին տեր, ճախարակ,
Վորբերին՝ հեր, ճախարակ:

1908

Ա Ր Ա Գ Ի Լ

Արագի՛լ, բարով յեկար,
Հա՛յ, արագի՛լ, բարով յեկար.
Դու մեզ դարնան նշան բերիք,
Մեր սրտերը ուրախ արիք:

Արագի՛լ, յերբ դընացիր,
Դու մեզանից յերբ դընացի՛ր,
Հա՛ փըչեցին բուք ու բորան,
Ծիւ ու ծաղիկ ամեն տարան:

Արագի՛լ, բարով յեկար,
Հա՛յ, արագի՛լ, բարով յեկար.
Բուռըդ շինիր են հին ծառին
Մեզ մոտ մնա՛ ամբողջ տարին:

1907

ՍՈՒԱԿԻ ՎԻՇՏԸ

Մի որ տեսալ ոտար թրուչուն
Սոխակ կուլար կուց-կուց արյուն.
— Ինչո՞ւ ասալ, սոխակ սիրուն,
Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արյուն.
Ինչո՞ւ մինչ յե՞րբ դու յերերուն
Տըխուր կուլաս չոր թըփերուն:
Աշխարհ ամեն վառ քո սիրուն,
Եղ ճըմվրան քո յերգերուն,
Հապա ինչո՞ւ դու որն ի բուն,
Ես չուս ու մութ առաւոտուն,
Ես շատ անուշ դով հովերուն
Ախ ու վախով կուլաս արյուն:
— Ի՞նչ կըխոսես, ոտար թրուչուն,
Խենթ ու խելառ դու ցընորուն.
Ձըմե՛ս նըստեց մեր սարերուն,
Կըտրեց ջրբիկ աղբյուրներուն,
Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,
Կըտրեց ձենիկ իմ ձաղերուն,
Ի՞նչպես չըլամ կուց-կուց արյուն:
Ելի ասալ ոտար թրուչուն.
— Հերիք դու լաս, սոխակ սիրուն,
Հերիք դու լաս կուց-կուց արյուն.
Ելի կուգա քեզ նոր դարուն,
Արե ծաղե ես վայրերուն,
Հալին ձյուներ մեր սարերուն
Բացվին ջրեր աղբյուրներուն,
Ու շուրջ առած քո ձաղերուն
Բարե կուտաս ծաղիկներուն:

1910

ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծեղեն,
Բարև բերավ ծաղկըներեն.

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղկըներով՝
Շուշան, նարդիդ, նունուֆարով,
Քո տեղ լըցված ցող ու շողով՝
Քընես-կեղնես յերդ ու տաղով.

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Քո թև փափուկ ու խատուտիկ,
Պըստի կաուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով,
Կը շորորաս ճուտիկներով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Յերբ կը կանգնես մամուտ քարին,
Տաղեր կասես ծաղկըներին,
Սարեր ձորեր զըվարթ կանես,
Դարդի ծովեն սիրա կը հանես,
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

1907

ԿԱՔԱՎԻ ՎՈՂՔԸ

Ա.

Կըտուցը լիքը արին
Կաքավը նըստել քարին,
Ձեն և տալիս, կըղկըզում,
Գանդատ անում հավքերին.
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:

Բուն շինեցի ես սարում,
Ձաղ հանեցի աննրձան.
Իջավ խողա մարգերում,
Յեկան կալան ու տարան,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:

Են կարկաչուն վըղիկը
Սուր/զանակով զարկեցին.
Են կարմըրիկ կըտուցը
Հուր կըրակին ձըղեցին,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:

Են մանրաքայլ տոտերը
Կըտրատեցին ծունկն ի վար,
Են խատուտիկ փետուրը
Վորն արին ձոր, վորը սար,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:

ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թրուով կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղկըններեն.

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղկըններով՝
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ լըցված ցող ու շարով՝
Քընես-կենես յերգ ու տաղով.

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Քո թև փափուկ ու խառուտիկ,
Պըստի կտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով,
Կը շորորաս ճուտիկներով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Յերբ կը կանգնես մամռոտ քարին,
Տաղեր կասես ծաղկըններին,
Սարեր ձորեր զըվարթ կանես,
Դարդի ծովեն սիրա կը հանես,

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

1907

ԿԱՔԱՎԻ ՎՈՂԲԸ

Ա.

Կըտուցը լիքը արին
Կաքավը նըստել քարին,
Ձեն և տալիս, կըղկըզում,
Գանդատ անում հավքերին.
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:

Բուն չինեցի ես սարում,
Ձագ հանեցի աննըման.
Իջավ՝ խողա մարդերում,
Յեկան կալան ու տարան,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:

Են կարկաչուն վրդիկը
Սուր դանակով գարկեցին.
Են կարմըրիկ կըտուցը
Հուր կըրակին ձրդեցին,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:

Են մանրաքայլ տոտերը
Կըտրատեցին ծունկն ի վար,
Են խառուտիկ փետուրը
Վորն արին ձոր, վորը սար,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:

Են, վոր սարերն եր հասել,
Քամին յեկալ գում արալ,
Են, վոր ձորերն եր անցել,
Հեղեղն յելալ ու տարալ,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հալքե՛ր:

Բ

Ել վո՞նց անեմ, ել ի՞նչ անեմ են բընում.
Հանդիսս չունեմ, դադար չունեմ են բընում:
Ձորը մենակ՝ չեմ դիմանում են բընում,
Գիշերն անտակ՝ չի լուսանում են բընում.
Անցած, որերն յեկել նորից են բընում,
Գել են դառել, ուտում են ինձ են բընում:
Ել չի մընում իմ սըրտիկը են բընում,
Յախով լիբը, լացով չիբը են բընում:

Գ

— Սև կաքավիկ,
Ո՛ւր պիտի դու նրստես հիմա:
— Ձորուկ բարդի ծառի վրա:
— Սև կաքավիկ,
Թե՛ վոր նըբա տերը դա՛ ո՞ւր:
— Լացող ուտու ճյուղքին արխուր:
— Սև կաքավիկ,
Են տեղից ել քչեն վոր քե՞զ:
— Կրրակ կըլնեմ, կե՛րեմ ինձ յես...

Դ

Վա՛յ կաքավիկ,
Սև կաքավիկ,
Չալիկ-մալիկ
— Սիրուն հավիկ:

Վա՛յ քո ճուտին,
Են խորուտին,
Վա՛յ սըղավոր
Իբ մոր սըրտին:

Ել չես կարդում
Հանդ ու արտում,
Մեր սարերից
Եկրթաս արրտում:

Վա՛յ կաքավիկ,
Սև կաքավիկ,
Վա՛յ իմ կորած
Սիրուն հավիկ:

1910

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԶՈՒՐԸ

Մձպոս սարեն ուրախ ձենով
Ջուր և դալիս անցնում շենով:
Մի թուխ մանուկ դուրս և վաղել,
Չեւքն ու յերես պաղ լըվացել,
Լըվացել և ձեռքն ու յերես,
Ու դարձել և՛ խոտել ետպես.
— Դու վո՞ր սարեն կուզաս ջրրի՛կ,
Ի՞մ պաղ ջրրիկ ու անուշի՛կ:
— Յես են սարեն կուզամ մըթին,
Վոր հին ու նոր ձյունն և դըլխին:
— Դու վո՞ր առուն կերթաս, ջրրի՛կ,
Ի՞մ պաղ ջրիկ ու անուշիկ:
— Յես են առուն կերթամ զվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ:
— Դու վո՞ր այգին կերթաս, ջրրի՛կ,
Ի՞մ պաղ ջրրիկ ու անուշիկ:
— Յես են այգին կերթամ դալար,
Վոր տերն և ժիր մեջն այգեպան:

1911

Նորից յեկան են հավքերը,
Հեովից յեկան են հավքերը,
Վոր դարնանը կուզային:
Կանանչ կապա յեն հազել,
Կանանչ ճամփա յեն յեկել
Կանանչ մարդին ման կուզան:
— Կանչե՛, հավիկը՛ս, կանչե՛,
Կանչե՛, լավիկը՛ս, կանչե՛,
Կանչե՛, կանչիդ յես դուրբան:

Նորից յեկան են հավքերը,
Հեովից յեկան են հավքերը,
Վոր ամառը կուզային:
Կարմիր կապա յեն հազել,
Կարմիր ճամփա յեն յեկել,
Կարմիր վարդին ձեն կուտան:
Յերգե՛, հավիկը՛ս, յերգե՛,
Յերգե՛, լավիկը՛ս, յերգե՛,
Յերգե՛, յերգիդ յես դուրբան:

Նորից յեկան են հավքերը,
Հեովից յեկան են հավքերը,
Վոր աշնանը կուզային:
Դեղին կապա յեն հազել,
Դեղին ճամփա յեն յեկել,
Ու խաչամին ման կուզան:

Սոսե՛, հավիկը՛ս, խոսե՛,
Սոսե՛, լավիկը՛ս, խոսե՛,
Սոսե՛, խոսքիդ յես զուրբան՝

Նորից յեկան են հավքերը,
Հեռից յեկան են հավքերը,
Վոր ձմեռը կուզային՝

Ճերմակ կապա յեն հաղել,
Ճերմակ ճամփա յեն յեկել,
Ճերմակ ձյունին ման կուզան՝

Ձենե՛, հավիկը՛ս, ձենե՛,
Ձենե՛, լավիկը՛ս, ձենե՛՝
Ձենե՛, ձենիդ յես զուրբան՝





Հիմի բացե՛լ են հանդես
Յերդիչները իմ անտես,
Ջա՛ն, հայրենի ծղրղիղնե՛ք,
Ո՞վ է արդյոք լըսում ձեզ:
1916 հունիս

Յե՛տ յեկե՛ք...
Գարնան վարար գետ յեկե՛ք,
Անցա՛ծ սրեր, խի՛նդ ու սե՛ր,
Դարձե՛ք, իրար հետ յեկե՛ք:
1917 նոյեմբ. 11

Հին աշխարհքը ամեն սր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարվան փորձ ու գործ
Ըսկըսվում է ամեն սր:
1917 նոյեմբ. 11

Ձուր եմ փախչում, ինձ խարում,
Հազար կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում:
1917 նոյեմբ. 12

Քանի՛ ձեռքից եմ վառվել,
վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս արվել:
Լույս տարով եմ բազումվել:
1917 Ղեկտ. 24

Ի՞նչքան ցավ եմ տեսել յես,
Կենդ ու դավ եմ տեսել յես,
Տարել, ներել ու սիրել,—
վատը՝ լավ եմ տեսել յես:
1917 Ղեկտ. 24

Յերազուժս մի մաքի
Մտառս յեկավ հարցմունքի.
— Աստված պահի քո վորդին,
վո՞նց եր համը իմ ձագի...
1917 Ղեկտ. 24

վո՞նց ե ժըպտում իմ հողին
Չարին, բարուն,— ամենքին.
Լույս ե տալիս վողջ կյանքիս
Ու են ճամփիս անմեկին:
1918 հունվ. 4

Ի՞նչ ես թըռչում, խեղև սի՛րտ,
Հազար բանի յետև սի՛րտ,
Յես վո՞նց հասնեմ հազար տեղ
Քեզ պես թափով, թեթև սի՛րտ:
1918 հունվ. 23

Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,
Յերազի մեջ յերջանիկ,
Հաչո ու խաղաղ մարդկու՞թյուն:
1918 փետրվ. 2

Մի հավք դարկի յես մի ուր.
Թըռա՛վ, գընաց վիբավոր:
Թըռչում ե միշտ իմ մըտքում
Թեք արնոտ ու մորթ:
1918 փետրվ. 2

Ո՞վ ե ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով՝
— Չա՛ն, հայրենի՛ անտառներ,
Գուք եք կանչում ինձ ձեր քով:
1918 փետրվ.

Հե՞՛յ ազահ մարդ, հե՞՛յ անդո՛հ մարդ, միաբըդ յերկար, կյանքըդ
կարճ,

Քանի քանիսն անցան քեզ պես, քեզից առաջ, քո առաջ.
Ի՞նչ են տարել նըրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,
Սաղաղ անցիր, ուրախ անցիր յերկու որվան ես ճամփեդ:

1919 նոյեմբ.

Ազատ որը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, վորոնում է ու դըժբախտ է նա կըրկին.
Ե՛ր անխելք մարդ, յերբ տի թողես՝ ապրողն ապրի սըրտալի,
Յե՞րբ տի ապրես ու վայելես ես աշխարհը շեն ու լի:
1919 նոյեմբ.

Քուն թե արթուն՝ որին շատը յերազ յեղալ, անցկացալ,
Յերազն ել, նուրբ ու խուսափուկ, վըռազ յեղալ, անցկացալ.
Վըռազ անցան յերազ, մուրազ, ու չը հասա վոչ մեկին,
Կյանքըս թեթև տանուլ տըված դըրազ յեղալ, անցկացալ:
1919 դեկտ. 6

Յերնեկ եսպես՝ անվերջ քեզ հետ— իմ կյանքի հետ լինեյի.
Հազար յերնեկ՝ դաշտում մենակ՝ յերկընքի հետ լինեյի.
Իայց ո՞վ կըտա են վայելքը՝ ինքըս ինձ ել չըղդայի,
Ու հալվեյի, ծախալվեյի, ամենքի հետ լինեյի...
1920 մայիսի 12

Կյանքըս արի հըրապարակ, վոտքի կոխան ամենքի.
Խափան, խոփան ու անսըտուղ, անցալ առանց արդյունքի:
Ի՞նչքան ծաղիկ պիտի բուսներ, վոր չըբուսալ ես հողին...
Ի՞նչ պատասխան յես պիտի տամ հող ու ծաղիկ տըվողին...
1921 սեպտ. 5

Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր,
Անդարձ ու հին ճամփաներ,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ւր դնացին, ճամփաներ:

1922

Աղբյուրները հընչում են ու անց կենում,
Ծարափները տենչում են ու անց կենում,
Ու յերջանիկ աղունքներին յերազուն
Պստաները կանչում են ու անց կենում:
1922 հունիսի 9

Խայամն նսալ իր սիրուհուն.— վոտը ըզդույշ դեբ հողին,
Ո՞վ իմանաս՝ վոր սիրունի բիբն ես կոխում դու հիմի...
Հե՛յ, ջա՛ն, մենք ել ըզդույշ անցնենք, ո՞վ իմանա թե իմի
Են սիրուհու բի՞բն ենք կոխում թե հուր լեզուն Խայամի:
1920, ապրիլի 6

— Ես է, վոր կա... ձիշտ ես ասում. թասը բե՛ր:
Ես ել կանցնի հանց յերազում, թասը բե՛ր:
Կյանքն հոսում է տիեզերքում դընդալեն,
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասը բե՛ր:
1922 ոգ. 14



ԼԵԳԵՆԴԵՐ
ԲԱԼԼԱԴՆԵՐ
ԱՌԱԿՆԵՐ





Փ Ա Ր Վ Ա Ն Ա

I

Բարձրագահ Արուշն ու Մըթին սարեր
Մեջք մեջքի տված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջավախքից ել վեր՝
Բրոնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ ենտեղ արծըվի նրման,
Ծիծղուն, կապուտակ յերկնքի ծոցում,
Նըստում եր են սեզ սարերի արքան
Իրեն Փարվանա ճերմակ ամբոցում:

Փարվանա արքան մի աղջիկ ուներ.
Ու վոչ մի վորսկան դեռ իրեն որում
Ենքան ղեղեցիկ յեղնիկ չեր տեսել՝
Իր վորսն անելիս Մըթին սարերում:

Աշխույժ մանկությամբ զարդարում եր նա
Ծերության որերն ու սարերն իր հոր,
Ու ապրում եր ծեր արքան Փարվանա
Իրեն են քնքույշ ծագկով բախտավոր:

Մեծ բախտը սակայն առաջներն եր դեռ:
Յեկավ են որն ել հասավ յերջանիկ,
Ու զըրկեց արքան ուրախ դեսպաններ

Սրեն մի ամբոց, ամեն արքունիք:
— Վո՛րտեղ ե, ասավ, են քաջը, թե կա,
Իմ չընաշխարհիկ զըստերն արժանի,
Թող առնի իր ձին, իր զենքըն ու զըրահ,
Գա՛, ցույց տա իրեն, իր բախտը տանի:

Հագած, կապած գենք ու դըրահ,
 Զիանք հեծած ամեհի,
 Ահա յեկեկ հալաքիկ էն
 Կըտրիճները Կոլիկասի.
 Ծեր Փարվանա թագափորի
 Ապարանքի հանդիման
 Կազմ ու պատրաստ սպասում էն
 Մոտիկ ժամին մըրցության:
 Ըսպասում է վողջ աշխարհքը՝
 Յեկած, կիտված Փարվանա,
 Թե վո՞ր կըտրիճն արդյո՞ք պիտի
 Են սիրունին տիրանա:
 Հընչեց վողջ: Ահա փունջ-փունջ
 Դըրանիկներ, նաժիշտներ,
 Ահա աղջիկն իր նազելի
 Ու թագափորն արհեսեր:
 Հայրը ինչպես մըրույլ մի ամպ,
 Աղջիկն անուշ մի լուսին,
 Ամպ ու լուսին իրար փարված՝
 Դուրս են դալիս միասին.
 Հառաչում է վողջ աշխարհքը.
 Կըտրիճները քարացած,
 Յերագների մեջ են ընկնում՝
 Ես աշխարհքից վերացած:

— Նայի՛ր, դըտրի՛կ, իշխանագուն
 Ես քաջերին լայնալանջ,
 Այժմ պիտի հանդես դուրս գան,
 Պայքար մըտնեն քո առաջ.
 Մեկը իրեն ուժը ցույց տա,
 Մյուսը՝ շընորհքն իր բազկի,
 Վո՛րը՝ ճարպիկ ճիարչավը,
 Վորն էլ թափը իր վաղքի:

Իսկ յերբ կըտրվն առնի դագար,
 Հայտնի լինին քաջն ու վատ,
 Ու յերբ անցնեն մեր առջևից
 Կըտրիճները պայադաս,
 Ընտրի՛ր, դարկի՛ր, ձեռքիդ խնձորն
 Անհաղթներից անհաղթին,
 Վոր վողջ աշխարհ մայիլ մընա
 Անդուդական քո բախտին:

Ասով արքան ձեռքը ձրդեց,
 Նըշտ արվալ պայքարին,
 Այն ինչ՝ աղջիկն առաջ յեկավ՝
 Կարմիր խնձորն իր ձեռին:
 — Գուցե, հայրի՛կ, տկար լավին
 Հաղթի մի վես արմարդի,
 Բայց չի կարող լինել յերբեք
 Նա սիրելին իմ սըրտի...
 — Ե՛յ, Փարվանա չըքնաղ փերի,
 Ի՞նչն է հավան քո սըրտին,
 Խըռքվում են կըտրիճները,
 Խընդրում կըրկին ու կըրկին:
 — Գա՞նձ ես ուզում, վո՞սկի, արծա՞թ,
 Անդին քարեր ու դոհա՞ր,
 Ա՞ստղ ես ուզում, ել յերկնքից
 Վեր կը բերենք քեզ համար:
 — Ինչի՞ս են պետք վոսկին, արծաթ
 Յե՛վ կամ աստղը յերկնքի,
 Վոչ ել դոհար եմ պահանջում
 Մեր-ընկերից իմ կյանքի:
 Յես նըրանից հո՛ւր եմ ուզում,
 Անչե՞ջ հուրը սըրբազան,
 Ո՞վ կը բերի անչե՞ջ հուրը,
 Նա յե ընտրած իմ փեսան...

Ասով աղջիկն, իրար անցան
 Կըտրիճները քաջարի,

Ձիանք հեծան, թրուան հասլճեպ
Դեպի չորս կողմն աշխարհի:
Թրուա՛ն, շուտով դրտնեն, բերեն
Անշեջ հուրը աղջրկան.
Բայց... տարիք են դալլ՛ա, դընո՛ւմ,
Նըրանք չըկան ու չըկան:

III

— Հայրի՛կ, ինչո՞ւ յետ չըդարձան
Են քաջերը սիրասենչ.
Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան,
Ել չեն բերիլ հուրն անշեջ:

— Վո՛չ, իմ դըստրիկ, կըզան անչուչա.
Ու կը բերեն ես տարի.
Կըռիվներով արյունըռուչա
Լիքն ե ճամփեն քաջերի:

Ո՛վ իմանա, պետք ե անցնեն
Մութ աշխարհքից, սև ջըրից.
Ո՛վ իմանա, պետք ե փախցնեն
Յոթգըլխանի դեերից:

Անց ե կենում դարձյալ տարին.
Նայում ե կույսն ամեն որ.
— Ո՛ւր ե, հայրի՛կ, յե՞րբ կըզա նա,
Սարից թըռած ձիավոր:

Միշտ յերագում յետ տեսնում եմ
Են հերոսին ապազա,
Հուր կարոտով թըռած իմ դեմ.
Լուսանում ե... ու չըկա:

— Կըզա, դըստրի՛կ իմ թանկագին,
Հեչա չի բերվում հուրն անշեջ.
Շատ-չատ անգամ բերող հողին
Ինքն ե այրվում նըրա մեջ...

Անց ե կենում դարձյալ տարին.
Նայում ե կույսն ամեն որ.
Վոչ մի սարից, վոչ մի ճամփում
Ձի յերևում ձիավոր:

— Հայրի՛կ, հայրի՛կ, մի՛թե չըկա
Ես աշխարհքում անշեջ հուր,
Թառամում ե սիրտըս ահա,
Պաղ ե այս կյանքն ու տըխուր...

Ել չի խոսում. մոայլ, տըրտում,
Լուռ ե արքան աշևոր.
Սև-սև ցավերն իրեն սըրտում՝
Միտք ե անում գըլխակոր:

IV

Եսպես անցան շատ տարիներ.
Տըխուր աղջիկն արքայի
Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր,
Ճամփաներին ամայի,
Հույսը հատավ... ու լաց յեղավ.
Ենքա՛ն արավ լաց ու կոծ,
Վոր լիճ կըտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց.
Ծածկե՛ց, կորա՛ն, ինքն ել հեռը...
Այժմ՝ ենտեղ տըրտմաչուք
Խոր ֆարվանա լիճն ե ծըվում.
Հըստա՛կ, ինչպես արտասուք:
Ու են վըճիտ ջըրերի տակ
Յույց են տալի մինչ ետը
Ծեր արքայի ճերմակ ամրոցն
Ու շենքերը փառավոր:

Ասում են, են թիթեռները,
Վոր գիշերվա խավարում,

Վորտեղ ճըրազ, վորտեղ կըրակ,
Վորտեղ լույս և հենց վառվում,
Հալաքվում են շուրջը պատում,
Մեջն են ընկնում խելագար,
Ասում են, թե՛ են Փարվանա
Ձահլիճներն են սիրավառ:
Ըշտապելուց թև են առել,
Դարձել թեթև թիթեռներ,
Ու տակավին հուր տեսներխ
Մեջն են ընկնում անհամբեր:

Ձանձ է անում ամեն մինը
Ծուռով տանի, տիրանա...
Ու այրվում են, այրվո՛ւմ անվերջ
Կտորիճները Փարվանա:

1902

ԱՂԶԿԱ ՍԻՐՏԸ

(ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ)

Հին արևելքում, մի հին քաղաքում
Թուկով մի ջահել աղջիկ էր ծաղկում:
Հարուստ էր հերը զալում սիրունի,
Անհուն դանձի տեր ու շատ անվանի:
Բայց սիրո համար խեղճ ու շեն չըկան.
Մի աղքատ տղա սիրեց աղջկան,
Աղջիկն էլ նրան սիրեց կաթողին
Յեղ ուղում եյին լինեն մարդ ու կին.
— Կա թե չըկա,
Նա յե, վոր նա...

— Չե՛, վոր չե՛, կանչեց ծընողը փարթամ.
Իմ աղջիկն, ասավ, սև հողին կըտամ
Ու մերկ աղքատին աղջիկ չեմ տալ յես:
Ասավ ու կանգնեց են լեռ քարի պես:
Բայց սիրո համար քար ու սաք չըկան.
Միրում էր գըժված տղեն աղջկան,
Աղջիկն էլ նրան սիրում կաթողին
Յեղ ուղում եյին լինեն մարդ ու կին.
— Կա թե չըկա,
Նա յե, վոր նա...

Սաստիկ բարկացավ հարուստն անկողորում,
Փակեց աղջրկան մեծ աշտաբակում
Իր սիրած տղից ու կյանքից հեռու,
— Թող, եսպես, ասավ, մոռնան իրարու:
Բայց սիրո համար փակ ու բանտ չըկան.
Միրում էր անվերջ տղեն աղջրկան,

Ո՛վ սիրուն հըրաչք, ո՛վ քնքուշ դադտնիք:
Տըզան են որից դարձավ յերջանիկ:
Հարբած նվիրական են ծաղիկի ուժով,
Միշտ նոր կարոտով ու նոր աշխուժով,
Իրեն յերբեմնի վիշտը մոռացած,
Ես կոչա ու կոպիտ կյանքից հեռացած,
Ապրում եր ուրախ, ճոխ վայելքներով,
Լե՛ն ու լի սըրտով, անկաշկանդ սիրով
Ազատ հեռվո՛ւմ—
Յերագներում...

1918

Ա Ն Ի Ծ Ա Ծ . Հ Ա Ր Ս Ը

Վաղ ժամանակ մի հայ շենում
Մի հարգևոր հարսն է լինում:
Նըրա բերնից կեսուր-կեսառ
Չեյին լքել մի շունչ, մի բառ,
Չեյին տեսել շուրթը մի որ...
Եսպե՛ս խոնարհ ու հարգևոր:
Մի որ մենակ ներսը նըստած,
Իր ճոխ մաղերն արձակ թափած,
Ազատ, անվույթ սանրում, հյուսում,
Հեռն ել ձենով յերգ եր ասում:

«Աշխարհքը բանտ,
Մեջը անբախտ
Յես մի դերի անխընդում.
Սիրուն չորեր,
Չասել որեր
Ի՛նչ եմ անում ես բանտում:

Երնե՛կ ծըտին,
Ճյուղքի միջին
Ծըվըլում է, թըրթըռում,
Թըռչում՝ սիրած
Ընկերն առած,
Ազա՛տ, կանա՛չ արտերում:

Ա՛խ, սե՛ ըլի,
Չըքլի, փըլլի
Ծընված որը աղջկա,
Յավ ու խընդում
Փակված սըրտում,

Ծիծաղ չըկս, «ախ» չըկա...»
Մին ել հունկարծ բացվեց դուռը,
Ու ներս մտավ ծեր կեսուրը:
— Հո՛ւ, պո՛ւ, պո՛ւ, պո՛ւ, կանչեց խեղճը,
Գեախն պառօխ՛, մըտնեմ մեջը...
— Հոպոպ դառնաս,
Անամոթ հոս:
Մի տե՛ս, հ տե՛ս,
Թե լըրբի տ
Գըլուխը բա,
Աղատ նրստ ծ՛
Վո՛նց ե կա ում,
Չի ամանչու...
Լեղուդ լալկ
Մազըդ թաղէ,
Գըլխիդ կըպչ
Սանրը միջի:

Ասով-չասաց
Մին ել տեսաց
Սանրը գըլխին
Հարսն առաջին
Հոպոպ դառավ
Յերդկից թըռաց
Ու վերացավ,
Վե՛ր հեռացավ:

Են եր ու են.
Խեղճն են որեն.
Հանգերն ընկած՝
Հոպոպ մընաց.
Միշտ ել են հին
Սանրը գըլխին,
Չալի՛կ-մալի՛կ,
Լեղուն լալիկ,
Անխոս ու լուս,
Մոր՛ր, տըխուր:

Բայց յերբ հանկարծ
Միտն ե դալխ,
Վոր գըլխաբաց
Յերգ ասելիս՝
Իր կեսուրը
Բացեց դուռը,
Վեր ե թըռչում
Մըրտատըրով
Ու դեռ ճըչում.
— Հո՛ւ-պո՛ւ... Հո՛ւ-պո՛ւ...

Ա Խ Թ Ա Մ Ա Ր

Ծիծաղախիտ Վանա ծովի
Փոքրիկ գյուղից առափնյա,
Ծովն է մըտնում գաղտազոդի
Ամեն գիշեր մի տղա:

Ծովն է մըտնում, առանց նախակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճողփում, լող է տալի
Դեպի կրդղին գիմացի:

Խավար կրդղուց պարզ ու պայծառ
Մի լույս կանչում է նրբան,
Մի վառ փարոս նրբա համար,—
Ջրմուրի իր ճամբան:

Սիրուն Թամարն ամեն գիշեր
Այնպես կըրակ է անում,
Յեվ ըստասում է անհամբեր
Այնտեղ՝ մտտիկ դարանում:

Ծրփում է ծովն արեծածան,
Ծրփում է սիրաը տղի.
Գտում է ծովն ասեղաձայն,
Նա կըսում է կատաղի:

Յեվ Թամարը սրբատորրոփ
Արդեն լքում է մտտիկ
Ջրի ճողփյունն ու վողջ մարմնով
Սիրուց այրվում է սաստիկ:

Լրուց: Ծովի խավար ափին
Կանգնեց սե-սե մի ըստվեր...
Ահա և նա... իրար գըտան...
Կասկածավո՞ր լուս գիշեր...

Միայն ալիքը Վանա ծովի
Մեղձ գիպչում են ափերքին,
Հըրհըրելով հեռանում են
Շըշունջներով անմեկին:

Նըրանք ասես փրափըսում են...
Ու աստղերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամոթ Թամարից...

Բամբասում են կուսի սըրտում...
Ժամ է արդեն... ու կըրկին
Մինն արեկոծ ծովն է մըտնում,
Մյուսն աղոթում յեղերքին...

«Ո՞վ է ջահիլ են խիզախը,
Վոր հենց հարբած իր սիրով,
Սըրտից հանած ասն ու վախը
Ծովն անցնում է գիշերով:

Ծովն անցնում է մյուս ափերից
Մեր Թամարին համբուրում...
Աղջի՞կ խլի նա մեր ձեռի՞ց...
Ինչի տեղ է մեզ գընում...»

Եսպես ասին վիրավորված
Կըրդու միջի ջահիլներ
Ու Թամարի ձեռքով վառած
Լույսը հանգրթին մի գիշեր:

Մուրճեցալ խափար ծովում
Հուզորդ տղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերում
Հառաչանքներն— «Ա՛խ, Թամա՛ր...»

Մոտ է ձայնը խոլ խափարում,
Փայտերի տակ սեպացած,
Ուր ամենի ծովն է դռում,
Մերթ կորչում է խըլացած,
Ու մերթ լրավում ուժասպառ,
«Ա՛խ, Թամա՛ր...»

Աստիճայան ծովը ծրփաց,
Ափը ձրգեց մի դիակ,
Նըրա շուրթին, պաղ կարկամած,
Ասես մեռած ժամանակ
Մտեղ էյին յերկու բառ.
«Ա՛խ, Թամա՛ր...»

Այն որվանից սըրա համար
Կըզգին կոչվեց «Ախթամար»:
1891

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԶԱՐԶԻՆ

(ԶՈՒՂԱՑԻ ԳԱՂԹԻՑ)

— Հե՛յ, լավ մանրո՛ւք,
Ասե՛ղ, հուլո՛ւնք,
Մտոնի՛ք, մարջա՛ն,
Ապարանջա՛ն...
Հա՛վ-ձու բերե՛ք,
Առե՛ք, տարե՛ք,
Խունջիկ-մունջի՛կ
Հարսն ու աղջիկ,
Եժան կըտա՛մ,
Լավը կըտա՛մ...

Եսպես կանչելով՝ փողոցից փողոց,
Իրբև թե չարչի մի թափառական,
Չարչու կերպ մըտած, ինչպես վիշապ ոձ,
Անցնում եր ինքը՝ Շահ-Աբաս արքան:

— Հե՛յ, ո՞վ կուզի թել ու ասե՛ղ,
Դուրս յեկե՛ք, դո՛ւրս, ինձ մո՛տ, Լասե՛ղ...

— Չարչի ախպեր, չարչի ախպե՛ր,
Ասեղ ունի՞ս, ես կողմը բեր:
Կանչեց մի կին՝ հայ դաղթական,
Ու մոտ գընաց չարչին կընկան:

— Ո՛ր, ի՞նչ ասեղ, իսկն ոձի քիստ...
Թուփը մի հաց...

— Վո՛ւյ, թանգ ե խիստ...

— Ե՛, մի՛ խոսիր, քուրբի՛կ, եգպես,
Շահի կյանքը թե կըսիրես:

— Ամա՛ն, հողեմ գլուխը շահի,

Աստված Շահից հեռու պահի.
Արևւ գալըն, չարչի ախպեր,
Եզ անունը բերան մի՛ բեր.
— Վա՛հ, եսքան ել չա՞ր Վինի մար՛դ...
Ի՞նչ է արել Շահը ձեզ վատ:—
Գազան թուրքի սըրից փըրկել,
Չոր Զուղայի քարից պոկել՝
Բերել է ձեզ առատ Փարիս,
Աչքն ել քաղցըր միշտ ձեզ վըրա...
— Ո՛Փ, հերիք է, չարչի ախպե՛ր,
Մի՛ խոսեցնիր ինձ գըրանից:
Յերնեկ գըրա վտար կոտրեր՝
Չըզար հաներ մեկ մեր տանից:
Յեկավ վարար հեղեղի պես,
Չարկեց մեր շեն, մեր լի Զուղան,
Վոչ աստծուն նայեց, վոչ մեզ,
Սըրբեց բերավ վողջ տեղահան:
Թող արինք փակ մեր տուն ու ժամ,
Բանալիներն Արազն ածինք,
Սարի ուսից վերջին անգամ
Յեա նայեցինք ու կանչեցինք.
— Աստվածածի՛ն Վերին Կաթան,
Գեղ ամանաթ մեր սուրբ վաթան,
Ուր վոր դընանք մեր վաթանից՝
Մեզ դարձըրու գերությունից:
Աղաչեցինք աղերսելով,
Յեա շուռ յեկանք ու անց կացանք.
Ծեծով, կոծով, հըրով, սըրով՝
Ծով Արազի ափը հասանք:
Արազը ծո՛վ, Արազն յեմա՛ն,
Դուրս է յեկել իր ափերից.
— Անցե՛ք,— յեկավ մեզ հըրաման.
Շահն է հրաման տալիս վերից...
Յետևը սո՛ւր, առաջը ջո՛ւր,
Սո՛ւզ, վախատո՛ւն, իրարանցո՛ւմ,
Բասաչում են մեծ ու պուճուր,
Իրար գըրկված գետը լըցվում...

Են պե որը, վոր մենք տեսանք,
Քա թըչնամին թող չըտեսնի...
Ա՛խ, յե՞րբ պիտի մին էլ տեսնենք՝
Մեր անեծքը յերկինք հասնի...
Ու գալիս են չարչու գըլլին
Կիտվում պանդուխտ գերի հայեր.
— Անե՛ծք Շահին, իրեն գահին,
Անիծում են յերկինքն ի վեր:
Շուռ են գալիս իրենց բընում
Չարչու աչքերն ըսպանայի,
Չենն ու վտար դող են լինում,
Ու, սեակնած, հարց է տալի.
— Շահի առջև հապա ենոր
Գոռում էյիք միաբերան,
Թե ապրում եք դուք բախտավոր
Ու որհնում եք թախտն ու իրա՞ն...
— Սուտ եր, ախպե՛ր: Դու մեզնից մեկն՝
Ի՞նչ թագըրնենք մենք քեզանից,
Բայց մեր սիրաը վո՞նց չը ծածկենք
Են մարդակեր չար դազանից:
Սուտ եր: Ու միշտ, քանի վոր կա
Շահ ու գերի, ըստբուճ ու տեր,
Չի լինելու յերկրի վըրա
Վոչ շխտակ խոսք, վոչ կյանք, վոչ սեր...
Մորնչաց չարչին, արեն չըպըրտեց,
Դուրս յելավ տակից Շահ-Արասն ասեղ,
Նաջաղը ցուաց, իջավ շեշտակի,
Գերի ձերունին փըռվեց տեղնուտեղ:
Փըռվեց... Ու միշտ, քանի վոր կա
Շահ ու գերի, ըստբուճ ու տեր,
Չի լինելու յերկրի վըրա
Վոչ շխտակ խոսք, վոչ կյանք, վոչ սեր:

ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ

Մի գյուղացի իրենց գյուղում
Պանուխ սարքել, բան եր ծախում :
Որվան մի որ մոտիկ գյուղից,
Մահակն ուսին, շունն յետևից
Ներս և մանում մի զըռ չորան .

— Բարի որ քեզ, ա՛յ խանութպան,
Մեղը չունե՞ս,

Մի քիչ տաս մեզ :

— Ունեմ, ունեմ, չորան ախպեր .
Ամանդ ո՞ւր ե, ամանդդ բեր,
Ինչ տեղից վոր ինքդ կուզես,
Ես սըհաթին քաշեմ տամ քեզ :

Եսպես հանդիստ, եսպես սիրով,
Մեղրից անուշ լայլ խոսքերով
Մեղր են քաշում . մին ել հանկարծ
Մի կաթ մեղրը ծորում և ցած :

— Տը՛ղզ, են կողմից մի ճանճ գալի,
Ես կաթիլիկ վեր և գալի :
Ճանճի վրրա, թաքուն-թաքուն,
Ես խանութի տիրոջ կատուն
Դուրս և ցատկում,
Թաթով զարկում . . .

Բայց հենց կատվի ցատկելու հետ
Հովվի շունը խսկուն և յեթ

Հաֆ և անում,
Վեր և կենում,
Սեղճ փխսիկին

Դընում տակին
Չեռաց խեղդում
Ու չըպըրտում :

«Սեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն .
Ա՛յ սատկես դու, շան վորդու շուն»,
Բարկանում և խանութպանը
Ու ձեռն ընկած մոտիկ բանը
Տուր՝ թե կըտաս շան ճակատին,
Շուռ և տալի կատվի կողքին :

— Վա՛յ, ձեզ մատա՛ղ, սարան շունքս,
Իմ ապրուստը՛, տեղը՛ս, տունը՛ս . . .
Տունըդ քանդվի, ա՛յ խանութպան,
Սնխիղճ, լիրբ, չար, Փըլան, Փըստան,
Վո՞նց թե դու իմ շանը զարկե՛ս,
Դե, զարկելը՛ հիմի դու տես . . .»
Գոռում և մեր աժդահակը,
Մեծազլուխ իր մահակը
Յետ և տանում ու ցած բերում,
Պանութպանին շեմքում փրոռում :

— Սպանեցի՛ն . . . Հա՛յ, ոգնությո՛ւն . . .»
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Ձեն և տալի մեկը մյո՛ւսին .

— Հա՛յ, ոգնությո՛ւն . . . սպանեցի՛ն . . .»
Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վրրից, դործի տեղից,
Ճիչով, լայով,
Հարայ տալով—
Ել հերն ու մեր,
Քիչ ու ախպեր,
Կին, յերեխեք,
Ընկեր տըղեք,
Ձոքանչ, աներ,
Քալոբ, սանհեր,
Քեռի, փեսա . . .

Ինչ խմանաս ել՝ ով է սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս է՝ տուր թե տալիս.
— Տո՛ւ, կոպիտ արջ, տո՛ւ վայրենի,
Ես տեսալ ել բա՞ն վրլինի.
Դու առուտուր յեկար անես,
Թե՞ իր շեմքում մարդ սպանես...»

Մին առում են— տասը դարկում,
Աղցան անում, մեջտեղ ձրղում,
Իր շան կողքին յերկար ու մեկ:
— Դե՛, ձեր մեռելն յեկեք տարեք:
Ու ետեղից բոթը դրնում,
Գրնում մոտիկ գյուղն է հասնում.
— Հե՛յ, ողնեցե՛ք,
Մեռած հո չեք,
Սպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շքնածանձի մի բուն
Քանդես, թողնես,
Են ճանձի պես
Ամբողջ գյուղով սրդու կապում,
«Բո՛ւհ» են անում, դուրս են թափում
Ամեն մինը առած մի բան.
Վորը ձեռին մի հրազան,
Վորը յեղան, ցաքաթ կամ սուր,
Վորը թի, բահ, վորը շամփուր,
Վորը կացնով, վորը փետով,
Վորը ձիով, վորը վոտով,
Վորն անդրդակ, վորը բորեկ—
Դեպի դուշման գյուղը մոտիկ:
— Տո՛ւ, ետես ել անիրավ գյո՛ւղ.
Վոչ խիղճ ունեն, վոչ ահ-յերկյուղ.
Մարդ գրնում է առուտուրի
Հավաքվում են քաչում սըրի:
Թո՛ւ, ձեր գեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր ազաթին...

Գնա՛նք, դարկե՛նք...

Ջարդե՛նք, կրակե՛նք...

— Հա՛յ, հո՛ւյ, առա՛ջ, դե՛, ձեզ տեսե՛մ...

Ու դուրս յեկան իրարու դեմ:
Հա՛ դարկեցին ու դարկեցին,
Կոտորեցին, կրակեցին.
Ինչքան ավել կոտորեցին,
Ենքան ավել կատաղեցին,
Ջարդեցին իրար,
Ջընջեցին իրար,
Կորան, դընացին
Գեանին հավասար:
Դու մի՛ սսիլ, մեկը մեկից
Եսքան մոտիկ, սահմանակից
Ես գյուղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի:
Մի տերության թագավորը,
Յերբ լսում է ես բուրբ,
Արձակում է հըրովարտակ
Ժողովրդին իր հըպատակ:
— Հայտնի լինի մեր տերության,
Ձինվոր, բանվոր, աղնըվախան—
Ամեն շարքին
Ու աշխարհքին,
Վոր անորեն ու դավաճան
Մեր դըրացի ազգը դաժան,
Յերբ մենք քընած ելինք սիրով,
Մեր սահմանը մըտավ գոռով,
Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի զավակներին:
Արդ, սըրահար ու հըրակեզ
Մեր վորդիքը կանչում են մեզ,
Յեզ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,
Պատվեր տըվինք մեր բանակին,

Թընդանոթով մեր ավերող
Ու աստուծով մեծակարող,
Հանուն արդար ու սուրբ վոխի
Մըտնի հողը մեր վոստի:

Մյուսը նույնպես իրեն հերթին
Գրբեց զորքին, ժողովըրդին·
— Մարդկանց առաջ և աստըծու,
Բողոքում ենք մեր գըրացու
Վարժունքի դեմ և՛ չար, և՛ նենդ,
Վոր՝ վոտքելով ամեն որենք,
Բորբոքում ե կռիվ ու վեճ
Հին հարևան ազգերի մեջ,
Քանդում սիրո՞ դաշը կասլամ:

Արդ՝ ահամա մենք ըստիովամ,
Հանուն պատվի, արդարության,
Հանուն թափված անմեղ արյան,
Հանուն ազատ մեր աշխարհքի,
Հանուն աստծու և իր վառքի—
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
Ու մեր սուրբ նորա վըրա:

Ու ըսկավեց կըռիւն ահեղ:
Շոխեղ, վորոտ, էստեղ, ենտեղ:
Կըրակն ընկավ շեն ու քաղաք,
Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,
Սմեն կողմից սարսափ ու բոթ,
Սմեն կողմից մեռելի հոտ...

Սմառ, ձըմեռ,
Վոզջ տարիներ
Մըչակն անբան,
Դաշտերն անցան,

Ու, կըռիւլը չըղաղարամ,
Սովը յեկավ համատարամ:
Սովը յեկավ— սովի հեռ ցավ,
Ծաղկամ յերկիրն ամայացավ...
Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար,
Թե վո՞րտեղից արդյոք ծաղեց
Ես ընդհանուր աղետը մեծ:

1909

ՉԱՐԻ ՎԵՐՋԸ

Լինում ե մի սար,
Ե՛ն սարում մի ծառ,
Են ծառում փրչակ,
Փրչակում մի բուն,
Բընում յերեք ձագ
Ու վըրեն Կըկուն:

— Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկունե՛ր,
Յե՞րբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչե՛ք, դընաք,
Ուրախանաք...»

Յերգում եր մարիկ Կըկուն.
Մին ել, ըհ՛ը՛, Աղվեսն յեկավ.
— Ես սարը իմն ե,
Ես ծառը իմն ե,
Ծառում փրչակ կա,
Փրչակում՝ մի բուն,
Ես ո՞վ ե յեկել
Տիրացել թագուն:

Ախ, դու Կըկու, հիմա՛ր Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
— Յերեք հատ ձագ, աղա Աղվես:
— Յերեք հատ ձագ, ցույց կը տամ քեզ:
Ու չե՞ս առել, դու, անամոթ,
Մինը ծառա ղըրկես ինձ մոտ:
Ձըգի շուտով մի հատը ցած,
Թե չե կացինս՝ հըրեն սըրած,
Գընամ բերեմ
Ծառը կըտրեմ...
— Վա՛յ, չը կտրես,

Ատված սիրես,
Ես մինն ահա
Տար քեզ ծառա,
Միայն թե եղպես
Մի ջընջիլ մեզ
Բընով-տեղով,
Ամբողջ ցեղով:

Պնդրեց մարիկ Կըկուն ու ձագերից մինը
ձըգեց ներքև: Աղվեսը հա՛լի, առավ գնաց:
— Վա՛յ-վա՛յ, դո՛ւ-դո՛ւ,
Իմ լավ կուկու.
Վո՞ր սև սարում,
Վո՞ր անտառում,
Վո՞ր թըփի տակ
Կորար մենակ...
Վա՛յ-վա՛յ, դո՛ւ-դո՛ւ,
Իմ խեղճ կուկու...
Վաց եր լինում մարիկ Կըկուն, մին ել, ըհ՛ը՛,
Աղվեսը յեա յեկավ:

— Ես սարը իմն ե,
Ես ծառը իմն ե,
Ծառում փրչակ կա,
Փրչակում մի բուն,
Ես ո՞վ ե յեկել,
Տիրացել թագուն:

Ախ դու Կըկու, հիմար Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
— Յերկու հատ ձագ, աղա Աղվես:
— Յերկու հատ ձագ ցույց կը տամ քեզ:
Ա՛խ, չարամիա, դու ավազակ,
Ի՞նչ խաբար ե, յերկո՛ւ հատ ձագ.
Ի՞նչ, ուզում ես եստեղ զոռով
Լըցնես ամբողջ կըկուներո՞վ...
Ձըգի շուտով մի հատը ցած,
Թե չե կացինս հըրեն սըրած
Գնամ բերեմ,
Ծառը կըտրեմ...
Վա՛յ, չը կտրես,

— Վա՛յ, չը կտրես,
Աստված սիրես,
Ես ել առ տա՛ր,
Ու թող դադար,
Վերջինը գեթ
Մընա ինձ հետ..

Աղաչեց մարիկ Կրկուն ու յերկրորդ ձագն
եւ ձգեց ներքե: Աղվեսը, հա՛մի, ես ել առաջ ու
դնաց:

— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,
Ընչի՞ համար
Յեկա ես սար,
Բուն շինեցի
Չաղ հանեցի...
Աղվեսն յեկավ,
— Տարավ, կերավ,
Յերկու, յերկու,
Կուկու... կուկու...»

Լաց եր լինում մարիկ Կրկուն:

Ես միջոցին— դա՛, դա՛, դա՛, Աղոսվն անց
եր կենում են կողմերով: Լքսեց Կրկվի լացի
ձայնը:

— Եղպես տխուր ու գարհուրիկ
Ի՞նչ ես լալիս, Կրկու քուրիկ:
— Ի՞նչպես չը լամ, ա՛ սանամեր.
Աղվեսն յեկավ են սրբամեռ,
Գըլխիս եսպես փորձանք բերավ,
Չաղուկներըս տարավ կերավ:
Վո՛ւյ իմ աչքին, անխելք Կրկու,
Ի՞նչպես իդուր խափվել ես դու.
Սուտ խոսքերից չար Աղվեսի:
Վո՛նց թե սարը իմն ե՛ կասի:
Ո՞վ ե տրվել են լըրբին սար.
Սարն ամենքինս ե հավասար...
Ո՞վ կը թողնի վեր կենա նա
Ամբողջ սարին դա տիրանա,
Անունը տա սրբած կացնի,

Մրան, նրան սուտ վախեցնի,
Ու մինն կտոր, մյուսը յերեկ,
Չաղեր տանի ուտի մեկ-մեկ...
Սե գրողի են տարածին
Ո՞վ ե տվել սրբած կացին.
Մին ել վոր դա ու սպանա,
Մի՛ վախենա, քըչի դնա:

Եսպես ասով Աղոսվն ու թուով դնաց: Ահա
կրկին Աղվեսն յեկավ:

Ես սարը իմն ե,
Ես ծառը իմն ե...

Հաղիվ եր ասել, Կրկուն բնից գլուխը հանեց.

— Սուտ ես ասում, դու, խաբերա՛,
Անխիղճ գաղան, անկուշտ, աղահ,
Ո՞վ ե տվել եստեղ քեզ սար,
Սարն ամենքինս ե հավասար:
Ի՞նչ ես յեկել սուտ տեր դարձել,
Յես ել հիմար՝ ճիշտ եմ կարծել,
Չաղուկներըս տրվել եմ քեզ...
Կորի՛, դրնա, դու չար Աղվես,
Հերիք ինչքան սուտ ես ասելիք
Հիմի գիտեմ, չեմ վախում ել:
Կացին չունես ծառը կրտսես:

— Ո՞վ ասով քեզ:
— Աղոսվն ասով:
— Աղոս՞վը. լա՛վ:

Ու Աղոսվի վրա բարկացած Աղվեսը սրչք
բաշեց, հեռացավ: Գրնաց մի դաշտում սուտ-
մեռնուկի տվավ, վեր բնիավ, իրրե թե սառ-
կել ե: Աղոսվն ել կարծեք, իրավ սատկել ե.
Թուով, յեկավ վրեն վեր յեկավ, վոր աչքերը հանի:
Աղվեսը, հա՛մի, հանկարծ բռնեց:

— Ղա՛-ղա՛, դա՛-դա՛,
Աղվես աղա...

— Ա՛յ դու կուսվան չարալեզու,

Վո՛նց թե կրկուին ասել ես դու,
Թե յես կացին չունեմ որբած...
Կացին չունե՛մ... դե հիմի կա՛ց...

— Վա՛յ, քեզ մեղա,
Աղվես աղա,

Յես եմ ասել, չեմ ուրանում,
Ինձ քրքրելիք, ինձ կեր հում-հում,
Տո՛ւր ինչ պատիժ սիրտըդ կուղի,
Բայց մի վերջին խոսքըս լըսի:
Յես են սարում, հենց դեմ ու դեմ,
Ենպես մի թանկ պահուած ունեմ,
Վոր չես գըննի դու քո որում
Վոչ մի թառում կամ անտառում:
Ընչի համար են անազին
Գանձը կորչի հողի տակին:
Արի գընանք, հանեմ տամ քեզ,
Ենքան ուտե՛ս, ենքան ուտե՛ս...
Թե չը լինի ու սուտ դուրս դամ,
Յես հո ետեղ միշտ կամ ու կամ...

— Գնա՛նք, ասով Աղվեսը: Թե կը լինի,
չատ լավ, թե չի լինի, էլի քեզ կուտեմ:
Գնացին:

Վերևից թռչելիս Ագոավը նկատեց եր, վոր
մի թփում պառկած եր դյուղացու չունը: Առ-
վեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիդ
են թփի վրա:

— Ա՛յ, ասով. ես թփումն ե իմ պահուածը:
Աղվեսն ազահ վրա ընկավ թփին. չունը
վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրավ տակին:
Աղվեսը խեղդվելով սկսավ խրխուլ.

— Ա՛խ, յե՛ս... ա՛խ, յե՛ս...

Չգուշ Աղվես,

Փորձանքի մեջ

Ընկեմ եսպե՛ս...

Ա՛խ, անիրա՛վ

Դու սև Ագոավ...

— Ինչքան ել վոր լինիս դուշ,
Չարի առջև թե վաղ թե ուշ,
Եդ ե պահված, Աղվես աղա.
Ղա՛, դա՛, դա՛, դա՛...
Պատասխանեց Ագոավն ու թռավ:

1908

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

I

Ժամանակով կատուն ճոն եր,
Շունն ել դըլխին դըզակ չուներ,
Միայն, գիտեմ վո՛չ՝ վորդիանց վորդի,
Ճանկել եր մի գառան մորթի:
Յեկավ մի որ, ձմեռնամբոխն,
Կատվի կուշար տարավ մորթին:

— Բա՛րի աջողում, ուստա Փխո,
Գլուխըս մըրսեց, ի սեր ասածս,
Ա՛ռ ես մորթին ու ինձ համար,
Մի դդակ կարի դըլխիս հարմար:
Վարձիդ համար միամիտ մընա՛,
Համա-համա շատ չուշանա:

— Աչքիս վըրա, քեռի Քուչի.
Մի դդակ ա, հո մի քուրք չի,
Քու թանկագին խաթեր համար
Ուրբաթ որը համեցեք տար:
Փողի մասին ավելորդ ե,
Մեր մեջ խոսելն ել ամօթ ե.
Ի՛նչ մեծ բան ե, աս՛ հեր որհնած,
Միա՛յն, միա՛յն մի դդակի վարձ:

Ուրբաթ որը քեռի Քուչին՝
Ուտից առաջ՝ բաց-բաց կուճին
Թափ-թափ տալով՝ ծանրը ու մեծ,
Ուստա Կատվի շեմքում կանգնեց:
— Ուտեն ո՞ւր ա... փափախա ո՞ւր ա...
— Մի քիչ կա՛ցի, հրես կերես»:

II

Ուտեն յեկավ քուրքը հաղին,
Շանը տեսավ բեխի տակին
Իրեն-իրեն քիչ վընթփընթաց,
Ու մուշտարու վըրա թընդաց.
— Յուրտը տարա՛վ... վա՛հ, տընաչեն,
Չես թող անում մի շունչ քաշե՞ն.
Հեշտ բան հո չի՞, հըլա նոր եմ
Ցըրցամ տըվել, թե վոր կարեմ:

— Դե հե՛ր որհնած, ետե՛նց ասա,
Եդ բարկանա՞լդ ել ընչիս ա:
Փող եմ տըվել, շուտով կարի,
Թե՛ չե՛ ասա՛ եզուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խոսում ես, վըրես գոտում,
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
Քանի՞, ախպեր, դընսած ու գամ...
Ասավ Քուչին ու նեղացած
Վերադարձավ դըլուխը բաց:

III

Մին ել յեկավ, դարձյալ չըկար.
Ես անդամը դիպան իրար.
Ել անպատիվ, անկարգ խոսքեր,
Ել հին ու նո՛ր, ել հերն ու մե՛ր,
Ել գող Փխո՛, ել քաշալ Շո՛ւն...
Բանը հասավ դիվանբաշուն:

Շունը մինչև զնաց, յեկավ,
Ուտա կատուն կոտորն ընկավ,
Դրլուին առավ ու մի զիչեր,
Հա՛յրե՛ կորավ. են կարչիին եր...

IV

Են որվանից մինչև որս ել
Շունն ես բանը չի մտացել.
Իր մաքումը դեռ պահում է,
Վարանդ կատվին պատահում է,
Վեր է թըռչում, վըրա վաղում,
Իրեն մորթին յեա է ուղում,
Իսկ սեկրես կատուն հանկարծ
Յեա է գառնույ՛մ ու բարկացած
Փըշաացնում է. մըթամ նոր եմ
Յըրրամ արվել, թե վոր կարեմ:

1886

ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Մի որ Չըղջիին ու ձայն յեկան
Թե՛ յե՛կ դառնանք վաճառահան:
Ասին ու խելք խելքի արվին,
Հավան կացան, պայման դըրին.
Բայց՝ արի տես... վոր փող չունեն:
Շատ միտք արին, թե ինչ տենն.
Վերջը յեկան Փըշի մտքը,
Ընկան նըրա ձեռն ու վորքը,
Ու մուրհակով,
Շահով, կարգով,
Փող վեր առան բավականին,
Ինչքան պետք էր իրենց բանին:
Չիղջը մընաց, տընդահ դառավ,
Ձայը բոլոր փողերն առավ,
Առավ, նստեց նավի միջին,
Հասավ Մըսըր, Չինումաչին,
Ծարս, Հընդըստան,
Արարքստան...
Ե՛լ թանկագին քերմանի շալ,
Ե՛լ մարգարիտ, գըմբուխա ու լալ,
Հընդու խուրմա, փըստա, բաղամ,
Յեվ... վո՛ր մեկի անունը տամ.
Ինչ վոր տեսավ, աչքը սիրեց,
Առատ-առատ նավը լըցրեց:
Նավը լըցրեց հազար բարով
Ու յեա՛ յեկած ճանապարհով
Ուրախ-ուրախ տուն էր գալիս:
Ճամփին ծովում սարսափելի
Ալեկոծում, մըրթի յեկավ,

Չարկեց, տարա՛վ ապրանք ու նա՛վ,
Միայն սովաքայր ճայը ենոր
Ազատվեցա՛վ մերկ ու աղլոր:
Ազատվեցա՛վ փառք իր ասծուն.
Բայց ի՞նչ սըրտով խեղճը դա՛ տուն.
Գա՛— ի՞նչ ասի պարտքատերին,
Վո՞նց յերևա իր ընկերին...
Ընկերն ենտեղ՝ դուռը կըտրած,
Աչքը ճամփին, վիզը ծըռած,
Համբու՛մ է որն որի վըրա,
Թե՛ մեր ճայը յերբ պիտի դա...
Յերկար նայեց,
Ճամփեն պահեց,
Շատ լավ ու վատ յերազ տեսավ,
Մինչև պարտքի որը հասավ,
Ու՛ մուրհակի թուղթը ձեռին,
Փուշը տընկվեց կրտեր ծերին.
— Ե՛յ բարեկամ, ի՞նչ բանի յեր.
Ել չեք ասում, թե պարտք ունեք...
Գործ բըռնեցիք, հորս ողորմի,
Յեա տվեք դե փողըս հիմի:
Թուղթ եք տըվել՝ վախտ իմացեք,
Ամոթ, աբուռ, ահ ունեցեք...
Թալան հո չի՞... մեղք եմ յես ել...
Ախպե՛ր, եսպես բա՞ն եք տեսե՛լ.
Վոսկի տա մարդ իրեն ձեռով,
Չը կարենա առնի զոռո՞վ...
Սրանից հետո դե արի դու.
Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու...»
Գորզոռում եր վողջ թառակում,
Հայհոյում եր, խայտառակում.
Ամեն մարդ ել, ով վոր լրտում,
Հենց մի բերան են եր ասում.
— Ա՛յ ամոթ ձեղ, Չըղջիկ ու ճայ,
Ի՞նչ ենք լրտում.— վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ.
Անուններդ վաճառական
Ու ես տեսակ խայտառակ բա՞ն...

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,

Չըղջիկ ու ճայ...»

Չըղջիկն եսպես միշտ լըսելիտ
Սիրտը բերնով դուրս եր դալիս:
Բարկանում եր իրեն մըտքում,
Անիծում եր, չըքում, թըքում.
— Ա՛յ քու տունը քանդվի, ա՛ ճայ,
Ա՛յ դու գառնաս դըրողի փայ,
Ես ի՞նչ բան եր, վոր դու արիր,
Գըլուխս ես ի՞նչ փորձանք բերիր...»
Ու խընդրում եր ամեն անգամ.
— Մի՛ նեղանար, փուշ բարեկամ,
Շատ ես կացել,
Կա՛ց մի քիչ ել.
Թուղթ բստացա յերեկ ճայից,
Թե դուրս յեկա Արարիայից.
Վորտեղ վոր ե՛ շուտով կըգա,
Դեռ մի բան ել ավել կըտա...»
— Յեա չեմ ուզում ավելն, ախպեր,
Կանխիկ համբու՛մ իմ փողը բեր.
Շահ եք գըրել,
Վախտ եք գըրել.
Ինչ գըրած ա, են եմ ասում,
Չեղնից ավել բան չեմ ուզում»: —
— Չե՛, աղա փուշ,
Թե վաղ, թե ուշ,
Փողն իր կարգին, շահն իր կարգին,
Իսկ պատիվը... յես իմ հոգին
Յեա հույս ունեմ, ասենք պարտք ենք...
Բայց չե՞ ախար մենք ել մարդ ենք...
Չե՛, քու արածն ով մոռանա,
Իր աստվածն ել նա կուրանա...»

Խեղճը եսպես լեզու ածավ,
Շատ հույս տըվավ, շատ խոստացավ,
Շատ սուտ ասավ պարտքատերին,

Շատ ըստասեց իր ընկերին .
Բայց ընկերը չըկա՛, չըկա՛ :
— Ես ի՞նչ ցավ եր, աստված վըկա .
Ի՞նչ իմ բանն եր՝ մըտա մեջը,
Վոր խայտառակ լինեմ վերջը . . .
Ի՞նչպես պըրծնեմ ես կըրակից,
Ես ահադին պարտքի տակից .
Ել ի՞նչ ասեմ,
Վո՞նց ըստասեմ .
Նա յե՞րբ կըզա, ի՞նչ իմանամ,
Վո՞ր ջուրն ընկնեմ . . . ո՞ւմ մոտ գընամ . . . »

Շատ միտք արավ,
Դեռ դեն թըռավ,
Ինչ վոր ունեք ասնը, հադին,
Վողջ հավաքեց, տըվավ պարտքին,
Յիտի մերկացավ,

Ել չըպըծավ :
Վերջը տեսավ, վոր ճար չեղավ,
Թեքը առավ, ինքն ել փախավ,
Փախավ, կորավ, վոր ել ենպետ
Դառարկ, սընանկ ու սևերեո,
Վոչ պատահի պարտքատերին,
Վոչ յերևա լույս աշխարհին :

Այնուհետև, իր նամուսից,
Չըղջիկը՝ մերկ, փախած լուսից,
Յերեկները դեռ դեն թաղչում,
Գիշերն է միշտ մըթնում թըռչում,
Վոր չերևա իր թայ-թուշին,
Վոչ պարտքատեր ազա Փուշին :
Ճայն ել ծովում,
Ճըչում, ծըվում,
Ջուրն է մըտնում,
Դուրս է պըրծնում,
Թեխն տալիս,
Ման է դալիս,
Թե մի դուցե բախտը բանի,
Կորուստն ել յեղ ջրից հանի :

Իսկ Փուշն արդեն հույսը հատած,
Ճանկ ու ստամ սուր պառառատած,
Կողքովն ով վոր անց է կենում՝
Բաշում է փեշն ու հարցընում,
Թե չե՞ն տեսել մեկն ու մեկին,
Են լիբբ ճային կամ Չըղջիկին .
Ու են որից մինչև որս ել
Մեկը մեկին դեռ չեն տեսել :

1886

«Պ Ո Ղ Ո Ս—Պ Ե Տ Ր Ո Ս»

Վաղո՛ւց, յերբ մօտ եր յերկրին յերկինքը
Ու լրօում էր դեռ մարդկանց տերն-ինքը,
Են լավ ժամանակ յերկու մանուկներ
Ունեյին մի չար, մի անսիրտ խորթ մեր:

— Կորե՛ք, գընացե՛ք, աշխատանք արեք,
Սչխատանք արե՛ք, ու յեկե՛ք, կերե՛ք:

Ի՞նչ էք վեր թափել անդործ ու անբան,
Հասած աղղերք եք հինդ-վեց տարեկան...

Եսպես քարկացավ մի որ խորթ մերը,
Ճխլոտներ աղվեց, գըրկեց չորթերը:
Անհանդիստ չորթե՛ր, ամառվան շող որ
Կեա արին, փախան ընկան սար ու ձոր՝
Նըրանց յետեից՝ լալով, հեալով,
Փոքրիկ վորբերը՝ քարեքար դալով,
Վաղ էյին տալիս անտառի միջում,
Վաղ էյին տալիս ու իրար կանչում:

- Պողո՛ս, գըտա՛ա՛ր:
- Չե՛կ՛:
- Պետրո՛ս, գըտա՛ա՛ր:
- Չե՛կ՛:
- Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,
- Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ...

Շաա վոր ման յեկան՝ խեղճերն հողնեցին,
Յեկան՝ խորթ մորը լալով պատմեցին.
— Նանի՛, ա՛յ նանի, կորան չորթերը...
— Վա՛յ, գետինն անցնեք, ճըչաց խորթ մերը,
Թող դուք կորչեյիք չորթերի տեղակ,
Սնտակ ձորի մեջ, անժաժ քարի տակ:
Մի արջ պատահեր, մի դադան, մի գել,

Վոր չեյի տեսել ձեր շուքը մեկ ել...
Դե՛, յեա գընացե՛ք, գընացե՛ք, կորե՛ք,
Մինչև չըգըանեք հորթերը բերե՛ք
Աչքիս չերեաք, ա՛յ աչքիս փըչեր,
Թե չե կըսպանեմ յես ձեզ ես գըչեր...
Ու ճխլոտն ել յեա իրենց թաթերին,
Հողնած ու սոված, արցունքն այտերին
Փոքրիկ վորբերը՝ անտառի միջում
Գիչերվան կեսին լալիս են, կանչում:

- Պողո՛ս, գըտա՛ա՛ր:
- Չե՛կ՛:
- Պետրո՛ս, գըտա՛ա՛ր:
- Չե՛կ՛:
- Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,
- Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ:

Անտեր չորթերը չըկան ու չըկան:
Ճարները կըտրած՝ խեղճերը յեկան,
Լալով չոքեցին:

- Տե՛ր աստված, ասին,
- Ի՛նչ կըլնի, գըթաա՛
- Գոնե թեեր տաս,
- Թեեր տաս՝ թըռչենք,
- Թըռչենք ու կորչենք,

Վոր ել չը տեսնի մեզ մեր խորթ մերը,
Մինչև վոր գըտանեք կորած չորթերը...
Հենց ասին-չասին անմեղ բերանով,
Ստոված վորոտաց իր գըթոտ ձայնով:
— Ահա ձեզ թեե՛ր, սիրուն յերեխեք,
Թըռչուններ դառե՛ք, թըռած ման յեկե՛ք,
Վոր ել չը տեսնի ձեզ ձեր խորթ մերը,
Մինչև վոր գըտանեք կորած չորթերը:
Գիչերը քնեցե՛ք ծառերի ճյուղին,
Ծեղն ու ծղոտը արե՛ք անկողին,
Սպրուտ ել առեք իմ լի սեղանից,
Յերբվոր դադարվուն յեղաք ձեր տանից...
Եսպես վերեից հենց կանչեց աստված,

Փոքրիկ վորբերը փոխվեցին հանկարծ

Ու թևեր առան,

Թռչուններ դառան:

Ու թևեր առած՝

Թռչուններ դառած

Դեռ մինչև ետը,

Ընկած սար ու ձոր,

Ծրվում են, մընչում,

Մեկ մեկու կանչում:

— Պոզո՛ս, դաա՛ա՛ր:

— Չե՛հ՛:

— Պետրո՛ս, դաա՛ա՛ր:

— Չե՛հ՛:

— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ:

— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ:

1898

ԱՐԾԻՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Յեզավ՝ մի անգամ անտառի միջին
Արծիվն ու Կաղնին եսպես վիճեցին,
Թե վո՛րն իրենցից շատ տարի կապրի,
Վորն է դիմացելուն ու պինդ ավելի:

Արծիվն ասավ՝ յես. Կաղնին ել թե՛ յես:
Յերկուան ել համառ ու հըպարտ եսպես՝
Մեծ-մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,
Վերջը ես տեսակ պայման կապեցին:
Ժամանակ գրրին հինգ հարյուր տարի
Արքան հավերի, արքան անտառի,
Վոր թե վորոշած են որին հառնեն,
Են որը մին ել դան իրար տեսնեն:

Ու Արծիվն խկույն Կաղնուց հեռացավ,
Հըզոր թևերը շարժեց, վերացավ
Դեպի ամպերը, դեպի ժայռերը,
Ուր՝ անց է կացնում իր լավ որերը:
Կաղնին ել փրոնց ճյուղերն յերկաթի,
Խո՛ր ու խոր մըլխեց ճանկերն արմատի
Ու եսպես հուժկու կանգնեց անտառում,
Վոր վեր չընկնի ել հինգ հարյուր տարում:

Դարե՛ր անց կացան: Յեվ ահա մի որ
Արծիվը յեկավ ծերացած, անզոր,
Ծրվոցը կըտրած, տըկար, հեալով,
Թույլ-թույլ թևերը հագիվ քաշ տալով,
Տեղ հասավ մի կերպ, նայեց դես ու դեն
Տեսավ, վոր Կաղնին ընկել էր արդեն.
Ճյուղերը թեև դեռ թարմ ու կանաչ,
Ընկել էր ահեղ փոթորկի առաջ:

— Հե՛յ, կանչեց, դողող, պարծենկոտ Կաղնի՛,

Դե զայլ ճանաչիր ինձ ու քեզ համի.
Հինդ հարյուր տարուց մի ժամ ել դեռ կա,
Ընկել ես արդեն, անկողնում հըսկա:
— Հինդ հարյուր տարի ապրել եմ կանդհած,
Եղբան ել կապրեմ դեռ եսպես թիկնած,
Մինչև լրանա մի հազար տարի.
Պատասխան տրվալ ընկած վիթխարին:

1898

ՄՈՏԱԿՆ ՈՒ ՄՐՁՅՈՒՆԸ

Գիժ Մոճակի պարի ժամին
Ջարկեց հանկարծ աշնան քամին,
Ուժը խըլեց, ուշքը տարալ:
Գիժը մին ել մըտիկ արալ,
Վոր ամառվա են տաք արև
Սշխարհքն արդեն պատած վողջ սև,
Լացով, թացով սուգ ե անուս,
Դողում, պաղում ու դալկանում...
Շուտիկ, շուտիկ իրեն կինն ել
Սուտիկ-փուտիկ կողքից կորել,
Ով դիտի՝ ինչ ծակ եր դըտել,
Մինչև դարուն մեջը մըտել
Սոված, սառած
Ու սալաբած
Վեր թըռալ՝ վար, դեռ ընկալ՝ դեն,
Ժիր Մըրջյունի տաքուկ ու շեն
Բունը հիշեց, յելալ, դընաց,
Դըռան առջև տըխուր տըզզաց,
— Բա՛ց արեք, բա՛ց...»
Ես տարածամ թըշվառ ձենից
Կոպիտ թուխ-թուխ,
Հաստադըլուխ
Մի պահապան դարթնեց քընեց,
Ներսի մըթնում մի կերպ արալ,
Փակած դուռը նեղ ծերպ արալ,
Տեսալ՝ սևով, թևով գուքված՝
Դըռան առջև մինը տընկված,
Վոտները թեկ,
Ինքը մի դել:

— Հե՛յ, ո՞վ ես դու,

Ա՛խպերացու»:

— Տը՛ղ-պը՛ղղ, առավ, Մոծակն եմ յես:

Բա չե՞ս սախլ՝ եսպես, եսպես.

Ամառն ամբողջ

Ուրախ, առողջ,

Պայծառ ու տաք

Մրեի տակ

Կինքս աշխույժ սազ եր. ածում,

Յես ել անհող խընդում, ցընծում,

Տեսակ-տեսակ պարեր պարում,

Մըրա նըրա թուշն համբուրում

Ու վայելում ամեն բանից,

Ամեն բարուց ու սեղանից,

Լիքը այգում,

Ճա՛հճոտ մարգում,

Ճոխ տրներում,

Պալատներում...

Մի անգամ ել յերբվոր եսպես

Պարում եյի, մինը անտես

Ենպես զարկեց՝ ուշքս անցավ:

Ուշքի վոր դամ՝ ի՞նչ տեսնեմ լավ,—

Յերկինքը թուխպ, յերկիրը սե,

Դառը քամի, սառը անձրև,

Սրար աշխարհ պաղել, փոխվել,

Կողքիցըս ել կինս և փախել...

Ել ի՞նչ ասեմ, վողջը մի-մի,

Են ի՞նչ լեզու կարա պատմի

Կամ ի՞նչ բերան,

Չրտեսներված, հըրաչք մի բան...

Հիմի եսպես՝ սոված, մենակ,

Մընացել եմ պատերի տակ,

Տեղ չի ունեմ, կեր չի ճարվում:

Յես ել եմ հո շատ մըճըրվում,

Բայց ի՞նչ անեմ, ո՞ւր գընամ ել,

Յերեսս եյի ձեց եմ արել:

Սառածու սիրուն, մի՛ խընայեք,

Ես մի ձբմեռ շահեք, պահեք,

Մինչև նորից դարուն բացվի,

Աշխարհքն ել յես բարով լըցվի»:

— Դե լա՛վ, դու կաց, ներս գընամ յես,

Տեսնենք՝ ներսից ինչ կասեն քեզ»:

Ասավ պահնորդն ու մեջեմեջ՝

Կոկ սենյակներն անցավ անվերջ,

Մինչև հասավ ներսի տունը,

Ուր ապրում եր մեծ Մըրջյունը

Առատ կյանքով,

Իր համայնքով:

Գընաց իրենց լեզվով հայտնեց.

Մըրջյունը լուռ լըսեց, մըթնեց,

Ու յես դարձավ

Եսպես սոսով:

— Գի՛տ Մոծակի համա՞ր եմ յես

վողջ ամառը արևակեզ՝

Ենքան ջանքով

Ու տանջանքով

Տուն տեղ դըրել, ճամփա հարթել,

Ամբար շինել, պաշար կլտել,

Վոր ամառը ծուլլ պըտըտի,

Ձմեռը դա նըստի ուտի՞...

Մեր ծուլլերին ջարդել ենք մենք,

Ուրիչ ծուլլի՞ բերենք պահենք...

Կերթաս կասես եղ անպետքին.

Բանի, դարձի ժամանակին

Ով՝ փոխանակ աշխատելու,

Ուշք ու միտքը տա խընդալու,


Պարապ չըրջի, յերգի, պարի,

Մըրա նըրա թուշն համբուրի,


Ես կուռ վաղի, են կուռ ցատկի,

Վերջը եղպես պիտի սատկի»:

1916



ՊՈՒՄՆԵՐ





ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

I

Առյուծ-Մըհերը, զարմով դյուցազուն,
Քառասուն տարի իշխում էր Սասուն.
Իշխում էր ահեղ, ու նրբա որով
Հավքն էլ չէր անցնում Սասմա սարերով:
Սասմա սարերից շա՛տ ու շատ հեռու
Թընդում էր նրբա հըռչակն անհարկու,
Պռավում էր իբ փառքն արարքն անվեհեր.
Հազար բերան էր— մի Առյուծ-Մըհեր:

II

Եսպես, ահափոր առյուծի նրման,
Սասմա սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Մ'խ» չէր քաշել նա դեռ իրեն որում.
Քայց հիմի, յերբ վոր յեկավ ճերացավ,
Են անաս սիրտը ներս սողաց մի ցավ:
Սկըսավ մըտածել դյուցազունն ձերը.
— Հասել են կյանքիս աչնան որերը,
Շուտով սև հողին կերթամ յես դերի,
Կանցնի ծըխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն է՛ անուն, է՛ սարսափ, է՛ ահ,
Իմ անտեր ու վորբ օշխարհքի վըրա
Վտտի կը կանգնեն հազար քաջ ու զե...

Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման յետև
իմ թուրը կապի, Մասուն պահպանի...
Ու միտք էր անում հրահան ծերունի:

III

Մի որ ել՝ են դորշ հոնքերը կիտած
Յերբ միտք էր անում, յերկնքից հանկարծ
Մի հուր-հրեղեն հայտնուկեց քաջին,
Վտաները ամպոտ կանգնեց առաջին:
— Վողջո՛ւյն մեծագոր Մասմա հրահային.
Քու ձենը հասավ աստըծու դահին,
Ու շուտով նա քեզ մի դավակ կըտաս:
Բայց լավ իմանաս, լեռների՛ արքա,
Վոր որը վոր քեզ ժառանգ է տրվել,
Են որ կը մեռնեք քու կինն ել, դու ել:
— Իր կամքը լինի, ասավ Մըհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց վոր աշխարհքում ժառանգ ունենանք,
Մենք ել նըրանով անմեռ կը մընանք:
Հըրեչտակն ետեղ ցոլացավ նորից,
Ու ես յերջանիկ ավետման որից
Յերբ իննը ամիս, իննը ժամն անցավ,
Առյուծ-Մըհերը դավակ ունեցավ:
Դավիթ անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախպեր Չենով Ոհանին,
Յերկիրն ու վորդին ավանդեց նըրան,
Ու կինն ել, ինքն ել են որը մեռան:

IV

Ես դարում Մըրըր անհաղթ ու հըզոր
Մըսրա-Մելիքն էր նըստած թագավոր.
Հենց վոր խմացրավ՝ ել Մըհեր չը կա,
Վեր կացավ կըռվով Մասունի վըրա:
Չենով Ոհանը ահից սարսափած՝
Թըշմամու առաջն յեկավ դըլխաբաց,

Ազաչանք արավ, ընկավ վտաները.
— Դո՛ւ յեղիր, ասավ, մեր դըլխի տերը,
Ու քու չըվաքում քանի վոր մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
Միայն մեր յերկիր քարուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:
— Չե՛, ասավ Մելիք, քու ամբողջ աղբով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Վոր եզուց-եւոր, ինչ ել վոր անեմ,
Վոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ:
Ու դընաց Ոհան՝ բոլոր բովանդակ
Մասունը բերավ, քաշեց թըրի տակ.
Մենակ Դավիթը ինչ արին-չարին,
Մոտ չեկավ գուշման Մելիքի թըրին:
Յեկան քաշեցին՝ թե գոռով տանեն,
Թափ տըվավ, մարդկանց դցեց դես ու դեն,
Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,
Ապտաթ քարից կըրակ դուրս թըռավ:
— Պետք է սպանեմ ես փոքրիկ ծուռին,
Ասավ թագավորն իրեն մեծերին:
— Թագավո՛ր, ասին, դու եսքան հըզոր,
Թըրիդ տակին է վողջ Մասունն ետոր.
Ի՞նչ պետք է անի քեզ մի յերեսա,
Թեկուզ իր տեղով հենց կրակ դառնա:
— Դո՛ւք դիտեք, ասավ Մըսրա թագավոր,
Բայց թե իմ գըլխին փորձանք դա մի որ,
Ես որը վըկա,
Մըրանից կը դա:

V

Ես վոր պատահեց, Մեր Դավիթ հրահան
Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,
Վոր նըրա համար թե մարդ, — թե մըժեղ:
Բայց վա՛յ խեղճ վորբին աշխարհքի վըրա,
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:

Ձենով Ոհանին ուներ մի չար կին:
Մին-յերկու լըսեց, մի ուր ել կարդին
Իրեն մարդու հետ սկըսավ կըովել.
— Յես մենակ հողի, հազար ցավի տեր,
Ի՞նչ ես ուրիշի վորբին տուն բերել,
Նըստեցրել զըլխիս պարսպ հացակեր...
Հո՞ղեմ գլուխը... յես դերի հո չեմ՝
Սմենքի քեֆի յետեկց թըռչեմ...
Մի կուռ կորցրու՛ւ, կարդել՛ր մի բանի,
Գընա իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսավ վողբալ ու կոծել,
Իր որը սըղալ, իր բախտն անիծել.
Թե անբախտ յեղավ աշխարհքի միջում,
Վոչ մի տեր ունի, վոչ մարդն է խըղճում...»
Գընաց Ոհանը յերեխի վոտի
Մի գույլ վոտանաման բերավ յերկաթի,
Յերկաթը մի կուռ շալակին գըրած,
Ու արավ Սասմա քաղքի դառնարած:

VI

Քըչեց դառները մեր հովիվ հըսկան,
Յելավ Սասունի սարերն աննըման.
— Ե՛յ Ըան, սարե՛ր,
Սասման սարե՛ր...»
Վոր կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-դըմրդըմրոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գազաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն յեղան:
Դավիթը ընկավ նըրանց յետեկց,
Վորին մի սարից, վորին մի ձորից—
Աղվես, նապաստակ, դեւ, յեղնիկ բըռնեց,
Հավաքեց, բերավ, դառներին խառնեց,
Իրեկվան քըչեց վողջ Սասմա քաղաք:
Կաղկա՛նձ ու վոտնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Քաղքըցիք հանկարծ մին ել են տեսն՝
Գալխա են հըրես անհամար դադան.

— Վա՛յ, հարա՛յ փախե՛ք...»
Մեծեր, յերեխեք
Սըրտաճաք յեղած,
Գործները թողած,
Վորը տուն ընկավ, վորը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
Դավիթը յեկավ, կանգնեց մեյդանում.
— Վա՛հ, ես մարդիկ ի՞նչ վաղ են քընում.
Հե՛յ ուլատեր, հե՛յ դառնատեր,
Յելե՛ք, շուտով բացեք դըռներ.
Ոյ մինն ուներ— տասն եմ բերել,
Ոյ տասն ուներ— քըսանն արել...
Շուտով յելե՛ք, յեկե՛ք, տարե՛ք,
Ձեր դառն ու ուլ դոմերն արեք:

Տեսավ՝ չեն դալի, դուռ չեն բաց անում,
Ինքն ել մեկնըլեց քաղքի մեյդանում,
Դըլուխը դըրավ մի քարի՝ մընաց,
Ու մուչ-մուչ քընեց մինչև լուսաբաց:
Լուսին իշխաններ յելան միասին,
Գընացին Ձենով Ոհանին ասին.
— Տո՛ Ձենով Ոհան, տո՛ մահի տարած,
Ես խենթը բերիք արիք դառնարած,
Վոչ դառն է ջոկում, վոչ դեն ու աղվես,
Գաղանով լըցրեց մեր քաղաքն եսպես.
Ստոված կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թե չե ես խալխին լեղաճաք կանի:

VII

Յելավ Ոհանը, Դավիթի մոտ գընաց.
— Հորեղբայր Ոհան, հեո՛ւ յեկ, կամա՛ց,
Ուրեք կըլխախչեն:— Մին ել ենտեղից
Մի բող նապաստակ, աղանջները ցից,
Խրոնեց ու ահից դուրս պրըծավ հանկարծ:
Դավիթն եր. յելավ, յետեկց ընկած
Են սարը քըչեց, յետ բերավ ես ձոր,

Քերտով, ուլերին խառնեց նորից նոր :
— Ո՛Ք, ի՛նչ զըժար ե, հորեղբայր Ոհան .
Աստված ոխնել ե են սե-սե ուլեր,
Ամա բողալուկ ես ուլեր վոր կան,
Փախչում են, ցըրվում վողջ սարերն ի վեր .
Ենքան եմ յերեկ վաղե՛լ, չարչարվե՛լ,
Մինչև հավաքել ու տուն եմ բերե՛լ...

Նայեց Ոհանը, վոր Դավթի հաղին
Վոտնաման չի ել մընացել կարգին,
Մահակն ել մաշվել, մինչ բուռն ե հասել,
Մի որվա միջում ենքան ե վաղել :
— Դավիթ ջան, ասավ, չեմ թողնի եսդես,
Քողալուկ ուլեր չարչարում են քեզ .

Եզուց նախիրը կըտանես արժոտ :

Ասավ Ոհանը ու մյուս առավոտ
Գընաց նորից նոր մեր Դավթի վոտի
Մի ջուխտ նոր աըրեխ բերավ յերկաթի,
Յերկաթի մի կոռ հարյուր լըզրական
Ու չինեց Սասմա քաղքի նախրապան :

VIII

Քըչեց նախիրը մեր նախրորդ հրական,
Յելավ Սասունի սարերն աննըման :

— Ե՛յ, ջան սարեր,
Սասման սարե՛ր,
Ի՛նչ անուշ ե
Ձեր լանջն ի վեր...

Վոր կանչեց, նըրա ձենից ահավոր
Իրզորդ-դըմբղըմբոցն ընկավ սար ու ձոր .
Վայրի դազաններ բըներից վախան,
Քարեքար ընկան, դատարկուն յեղան :
Դավիթն եր . ընկավ նրանց յետևից,
Վորին մի սարից, վորին մի ձորից,
Գեւ, ինձ, առյուծ, արջ, վաղըր բըռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց
Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք :

Վոտնա՛ց, մըռընչո՛ւն, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Վախկոտ քաղքըցիք մին ել ի՛նչ տեսան,
Հենց քաղաքի վըրա անհամար դազան...
— Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»

Մեծեր, յերեսեք
Սըրտաճաք յեղած,
Գործները թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ :
Դավիթը յեկավ կանգնեց մեյրանում .

— Վա՛հ, ես քաղքըցիք ի՛նչ վաղ եմ քընում :
Հե՛յ կովատեր, հե՛յ դոմչատեր,
Յելե՛ք շուտով բացեք դըռներ,
Ով մինն ուներ— տասն եմ բերել,
Ով տասն ուներ— քըսանն արել :
Շուտով յելե՛ք, յեկե՛ք, տարե՛ք,
Ձեր յեղն ու կով դոմերն արեք :

Տեսավ՝ չեն դալի, դուռ չեն բաց անում,
Ինքն ել մեկնըվեց քաղքի մեյրանում,
Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսարաց :
Լուսին իշխաններ յելան միասին,
Գընացին Ձենով Ոհանին ասին .
— Սմա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Ոհան ախպեր,
Մեր յեղն ու մեր կով թող մընան անտեր,
Միայն սրանից աղատ արա մեզ :
Վոչ արջն ե ջոկում, վոչ դոմեչն ու յեղ,
Մի որ ես քաղքին փորձանք կըբերի,
Արջերոց կանի, կրտա կավերի :

IX

Դավիթ չըզառավ, մի կըրա՛կ դառավ :
Ճարը կըտըրված՝ Ոհանը բերավ
Նեո-աղեղ չինեց ու տըլավ իրեն՝
Գընա, վորս անի սարերի վըրեն :
Դավիթ նեո-աղեղն առավ Ոհանից,

Հեռացալ Սասմա քաղքի սահմանից
 Ու դառալ վորսկան: Գնաց մի կորկում
 Լոր եր սպանում, ճնճողուկ եր դարկում:
 Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
 Աղքատ, անվորդի մի ծեր կընկա մոտ,
 Վիշապի նըման, յերկա՛ր, ահադի՛ն
 Մեկնըվում, քընում կըրալի կողքին:
 Մի ուր ել, յերբ վոր իր վորսից դարձալ,
 Պառալը վըրեն սաստիկ բարկացալ:
 — Վա՛յ Դավիթ, ասալ, մահըս տանի քեզ:
 Դո՞ւ պետք է են հոր դավակը լինե՛ս:
 Ձեռից ու վոտից ընկած մի ծեր կին—
 Յես եմ ու են արան աստըծու տակին,
 Ինչո՞ւ յես գընում, տափում, տըրորում,
 Իմ ամբողջ տարվա ապրուստը կըտրում:
 Թե վորսկան ես դու— նետ-աղեղըդ ա՛ս,
 Ծըծմալիս գըլխից մինչև Սեղանասար
 Քու հերը ձեռին մի աշխարհ ունեք,
 Վորսով մեջը լի վորսի սար ունեք:
 Յեղնիկ կա ենտեղ, այծյամ ու պախրա:
 Կարո՞ղ ես— գընա, ենտեղ վորս արա:
 — Ի՞նչ ես, ա՛յ պառալ, ել ինձ անիծում:
 Յես ջահել եմ դեռ, յես նոր եմ լըսում:
 Վո՞րտեղ է հասլա սարը մեր վորսի...
 — Գընա՛, հորեղբայրդ— Ոհանը կասի:

X

Հորեղբոր շեմքում մյուս ուրը ծեղին
 Դավիթը կանդնեց աղեղը ձեռքին:
 — Հորեղբա՛յր Ոհան, ինչո՞ւ չես ասել՝
 Իմ հերը վորսի սար է ունեցել,
 Այծյամ կա ենտեղ, յեղջերու, կըխտար:
 Վեր կաց, հորեղբա՛յր, տար ինձ վորսասար:
 — Վա՛յ, կանչեց Ոհան, եղ քու խոսքը չեք,
 Եդ ով քեզ ասալ, լեզուն պապանձվեր:
 Են սարը, վորդի՛, գընաց մեր ձեռից,

Են սարի վորսն ել գընաց են սարից,
 Ել չկան այծյամ, յեղջերու, կըխտար:
 Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,
 (Ե՛յ գիդի որեր— վո՛րտեղ եք կորել),
 Յես շատ եմ ենտեղ վորսի միս կերել...
 Քու հերը մեռալ, աստված խըռովեց,
 Մըրա թագավոր գորքեր ժողովեց,
 Յեկալ, մեր յերկիր քարուքանդ արալ,
 Ես սարի վորսն ել թալանեց, տարալ:
 Յեղնիկը գընաց, յեղջերուն գընաց...
 Մեր գիրն ել հալրաթ եսպես եր գրած:
 Անցել է, վորդի, քու բանին գընա,
 Մըրա թագավոր ձենըդ կիմանա...
 — Մըրա թագավոր ինձ ի՞նչ կանի վոր...
 Յես ինչ եմ հարցնում Մըրա թագավոր:
 Մըրա թագավոր թող Մըրը կենա,
 Իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...
 Վեր կաց, հորեղբա՛յր, նետ-աղեղդ առ,
 Կապարճըդ կապի՛ր, գընանք վորսասար:
 Յելալ Ոհանը ճարը կըտըրված,
 Գընացին տեսան՝ ել ի՛նչ վորսասար:
 Անտառը ջարդած, պարխալն ավերած,
 Բուրդերը արած գեանին հավասար...

XI

Գիշերը հասալ, մընացին ենտեղ:
 Ձեռով Ոհանն եր, իր նետն ու աղեղ
 Դըրալ գըլխի տակ, հանդիստ խըռըմփաց:
 Դավիթը մնաց մըտքի ծովն ընկած:
 Գընաց ու գընա՛ց, բարձրացալ մի սար,
 Մին ել նկատեց, վոր մութը հեռվում
 Մի թեթ, փայլելուն կըրահ է վառվում:
 Են լուսը բըռնած՝
 Վեր կացալ, գընաց,
 Գընաց ու գընա՛ց, բարձրացալ մի սար,

Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար,
Կիսից սլառուրված,
Ու միջից վառված
Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
Բարձրանում, իջնում յետ քարի վըրա:
Վար իջավ Դավիթ հնտեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Ձենով Ոհանին:

— Յե՛լ, հորեղբայր, քանի՞ քընես,
Յե՛լ, են պայծառ լուսը մի տես:
Լուս է իջել բարձրը սարին,
Բարձրը սարին, մարմար քարին:
Յե՛լ, հորեղբայր, անուշ քընից.
Են ի՞նչ լուս է բըխում քարից:

Յելավ, խաչ քաշեց Ոհանն յերեսին.
— Ե՛յ, վորդի, ասավ, մեռնեմ իր լուսին.
Են մեր Մարութա սարն է դորավոր:
Են լուսի տեղը կանգնած եր մի որ
Սասմա ապավեն, Սասմա պահապան
Մեր սուրբ Տիրամոր վանքը Չարխավան:
Մըշտական, յերբ վոր կըռիվ եր գընում,
Ենտեղ եր քու հերն իր աղոթքն անում:
Քու հերը մեռավ, աստված խըռովեց,
Մըսրա թաղավոր դորքեր ժողովեց,
Մեր վանքն ել յեկավ քանդեց են սարում,
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դավիթը ես ել յերբ վոր իմացավ,
— Անո՛ւշ հորեղբայր, հորեղբայր, ասավ,
Վորբ եմ ու անտեր աշխարհքի վըրա,
Հեր չունեմ՝ դու ինձ հերություն արա՛:
Ել չեմ իջնի յետ Մարութա սարից,
Մինչև չչինեմ մեր վանքը նորից:
Քեզանից կուզեմ հինգհարյուր վարպետ,

Հինգհարյուր բանվոր մըշակ նըրանց հեա,
Վոր գան, ես շաբաթ կանդենն ու բանեն.
Առաջվան կարգով մեր վանքը շինեն:

Գընաց Ոհանը ու բերավ իր հեա
Հինգհարյուր բանվոր, հինգհարյուր վարպետ:
Վարպետ ու բանվոր յեկան կանդեցին,
Չըրբ՛սկ հա թըրբ՛սկ, նորից շինեցին,
Առաջվան կարգով, փառքով փառավոր
Բարձրը Մարութա վանքը Տիրամոր:
Յըրված միաբանք յետ նորից յեկան,
Նորից թընդացին աղոթք, շարական.
Ու յերբ չեն արավ հոր վանքը նորից,
Յած իջավ Դավիթ Մարութա սարից:

XIII

Համբավը տարան Մըսրա Մելիքին.
— Հապա՛ չես ասի՞լ՝ Դավիթը կըրկին
Հոր վանքը շինել, իշխան է դառել,
Դու ոխտը տարվան խարժը չես առել:
Մելիք գայրացավ.
— Գընացե՛ք, ասավ,
Բաղին, Կողբաղին,
Սյուդին Չարխաղին,
Սասմա քար ու հող տակն ու վեր՝ արեք,
Իմ ոխտը տարվան խարաժը բերեք:
Քառսուն կույս աղջիկ բերեք արմաղան,
Քառսուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
Քառսուն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
Իմ տանն ու դառն զարավաչ դառնան:

Ու Կողբաղին առավ դորքեր.

— Գլխիս վրա, ասավ, իմ տեր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով դեղին վոսիկ,
Տեղը ջընջեմ հայոց աղղի:

Ասավ, Մըսրա աղջիկ ու Դին

Պար բռնեցին ու յերգեցին.

— Մեր Կողբադին զընաց Սասուն,
Կանայք բերի քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով վոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝

Գարնան շինենք յեղ ու չորթան:

Ձա՛ն Կողբադին, քա՛ջ Կողբադին,

Սասմա Դավթին զարկեց դետին:

Ու Կողբադին փըքված, ուռած,

— Ծնորհակալ եմ, քույրե՛ր, գոռաց

Մինչև զալըս դեռ համբերեք,

Են ժամանակ պիտի պարեք...

XIV

Եսպես յերգով,

Չոռով-զորքով

Քուռ Կողբադին մըտավ Սասուն.

Ոհան լըսեց՝ կապկեց լեզուն:

Այ ու հացով,

Լաց ու թացով

Սոաջն յելավ,

Խընդիրք արավ.

— Ինչ վոր կուգես՝ առ, տա՛ր, ամա՛ն.

Վարդ աղջիկներ կաննայք Սասման,

Դառը դատած դեղին վոսկին,

Միայն թե դըթա մեր խեղճ աղբին,

Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,

Վերև՝ աստված, ներքևը՝ դու...

Ասավ, բերավ շարան-շարան

Վարդ աղջիկներ, կանայք Սասման:

Ու Կողբադին կանգնեց, ջոկեց,

Մարազն արավ, գուռը փակեց,

Քառսուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,

Քառսուն կարճ կնիկ, վոր յերկանք աղան,

Քառսուն ել յերկար, վոր ուղտեր բառնան,

Մըսրա Մելիքին զարավաչ դառնան:

Դեղ-դեղ կիտեց դեղին վոսկին.

Սև սուղ կալավ հայոց աղբին:

XV

Հե՛յ, ո՛ւր ես, Դավիթ, հայոց պահապան,
Քարը պատըռվի— դո՛ւրս արի մեյդան:

Քանդած հոր վանքը վոր շինեց նորից,

Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,

Ժանդոտած, անկոթ մի շեղբիկ դըտավ,

Գընաց՝ պառավի շողգամը մըտավ:

Պառավն եր. յեկավ՝ անե՛ճք, աղաղա՛կ.

— Վա՛յ, խելա՛ո Դավիթ, շողգամի տեղակ

Դու կըրակ ուտես, ցավ ուտես, ասավ,

Քու աչքն աշխարհքում մենակ ի՞նճ տեսավ.

Կորեկըս արիր դետնին հավասար,

Ես եր մընացել ճըմեովան պաշար,

Ես ել կըտրում ես,

Ել վո՞նց ապրեմ յես:

Թե կըտրիճ ես դու, աղեղդ ա՛ն, գընա՛,

Քու հոր աշխարհքին տիրություն արա՛,

Քու հոր գանձը կե՛ր,

Թողել ես անտեր,

Մըսրա թագավոր զըրկել ե՛ տանի:

— Ել ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,

Եղ ի՞նչ ես ասում, յես չեմ հասկանում,

Մըսրա թագավոր մեր ի՞նչն ե տանում...

— Մըսրա թագավոր մեր ի՞նչն ե տանում...

Մըսրա թագավոր քու աչքն ե հանում,

Դանդալոչ Դավիթ. զըրկել ե հըրեն,

Յեկել են Սասմա քաղաքի վըրեն

Բադին, Կողբադին,

Սյուղին, Չարխադին,

Թալան են տալի բովանդակ Սասում,

Քառսուն բեռ վոսկի խարաջ են ուղում,

Քառսուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,

Քառասուն կարճ կնիկ, վոր յերկանք ազան,
 Քառասուն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
 Մըսրա Մելիքին դարավաչ դառնան:

— Ի՞նչ ես, ա՛յ սլառալ, ել ինձ անիծում,
 Յույց տուր մի տեսնեմ՝ — վո՞րտեղ են ուզում:
 — Վո՞րտեղ են ուզում... Մահըս տանի՛ր քե՛զ:
 Դո՞ւ պետք է են հոր դավակը լինե՛ս...
 Յեկեկ ես՝ ետեղ չաղգամ ես լափում,
 Վոսկին Կողբաղին ձեր տանն է չափում,
 Աղջիկներ փըլեկ մարազն են լըցրած:

Եաղգամը թողեց Դավիթ ու գընաց:
 Տեսավ՝ Կողբաղին իրենց տան միջին
 Չափում է վոսկին թեղած առաջին,
 Սյուղին, Չարխաղին պարկերն են բըւնել,
 Ձենով Ոհանն ել չըլինը ծըռել,
 Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
 Տեսավ, աչքերը արնով լըցվեցին:
 — Վե՛ր կաց, Կողբաղին, հեռո՛ւ կանդիր դու,
 Իմ հոր վոսկին է — յես եմ չափելու:
 — Կողբաղին ասավ. — Ե՛յ, Ձենով Ոհան,
 Կըտաս — տո՛ւր խարջը ես ոխտը տարվան,
 Թե չե՛ կը գընամ, մի՛րուքըս վըկա,
 Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը դա,
 Ձեր Սասմա յերկիր քարուքանդ կանի,
 Տեղը կը վարի, բոստան կը ցանի:
 — Կորե՛ք, անղգամ դուք Մըսրա շըներ,
 Բա չե՞ք իմացել դուք Սասմա ծըռեր...
 Մեռա՞՞ծ եք կարծում դուք մեղ, թե՞ չըվաք,
 Կուղեք մեր յերկիր գընեք խարջի տա՛կ...
 Բարկացավ Դավիթ, չափը չըզբրտեց,
 Տըվավ Կողբաղինի գըլուխը Չարդեց,
 Չափի փըշրանը պատն անցավ, գընաց,
 Մինչև որս ել դեռ գընում է թըռած:
 Ու յելան՝ թափած վոսկին թողեցին,
 Հայոց աշխարհից փախան գընացին
 Բաղին, Կողբաղին,
 Սյուղին, Չարխաղին:

— Վա՛յ, վա՛յ, հորեղբա՛յր, ի՛նչ ասեմ յես քեզ:
 Մենք ունենք ետեղ դեղին վոսկու դեղ.
 Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
 Դու թողել ես ինձ ոտարի դըռան...
 Հորեղբայրն ասավ. — Ա՛յ խենթ, խելաղար,
 Վոսկին պահել եմ Մելիքի համար,
 Վոր քաղցըր լինի աչքը մեղ վըրս:
 Չըտըլիր, հիմի վոր դորք առնի՛ դա,
 Սասմա քար ու հող հեղեղի, տանի,
 Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռիվ կանի:
 — Դու կա՛ց, հորեղբա՛յր, թող դա, յե՛ս կերթամ,
 Կերթամ, յե՛ս նըրան պատասխան կըտամ:
 Ու մութ մարաղի դըռանը դարկեց,
 Փակած աղջիկներ հանեց, արձակեց:
 — Գընացե՛ք, ասավ, աղատ ապրեցե՛ք,
 Մասունցի Դավթին արև խընդրեցե՛ք:

Ետեա Չարդված, արյունըվա
 Փախան, ընկան հողը Մըսրա
 Բաղին, Կողբաղին,
 Սյուղին, Չարխաղին:
 Մըսրա կանայք հեռվից տեսան,
 Հեռվից տեսան, ուրախացան
 Ու ծափ աըլին կըտերներին.
 — Յեկա՛ն, յեկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
 Մեր Կողբաղին գնաց Սասուն,
 Կանայք բերավ քառասուն-քառասուն,
 Կարմիր կովեր բերավ կըթան՝
 Գարնան շինեք յեղ ու չորթան...
 Հենց մոտեցան, նըկատեցին,
 Ծափ ու խընդում ընդհատեցին,
 Քըրքըջացին

Ու կանչեցին.

— Ե՛յ, Կողբադին մեծաբերան,
Եդ վո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կրդաս փախած,
Հաստ գըլուխըդ կխից ճըզած:
Են դո՞ւ չասիր՝ զընամ Սասուն,
Կանայք բերեմ քառուսն-քառասուն,
Քառասուն բեռնով վոսկի հանեմ,
Հայոց յերկիր ավեր անեմ:
Գացիր Սասուն քանց գել դազան,
Յետ ես դալիս քանց շուն վազան...

Ու Կողբադին խիստ բարկացավ.

— Սո՛ւս կացեք դուք, լըրբե՛ր, ասավ.
Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,
Դուք չե՞ք տեսել Սասմա ծըրեր:
Սասմա ծըրեր լերան-լերան,
Նետեր ունեն մի-մի դերան.
Սասմա յերկիր քար ու կապան,
Դըժար սարեր, ձոր ու ծապան.
Նըրանց խոտեր— ինչպես կեռ թուր,
Ձորք ջարդեցին յերեք հարյուր...

Ասավ ու ել չառավ դադար,
Վրոադ-վրոադ, զըլխապատաս.
Վաղեց իրեն թաղավորին:

Խընդաց թաղավորն իր աթոռին:
— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կողբադին,
Արժե՛ կախեմ յես քու ճըտին
Մեր դուզողունի մեծ նըչանը—
Պարզե քու մեծ հաղթությանը:
Ո՞ւր են, հապա առաջրս բեր
Սասմա փոսկին ու աղջիկներ:

Ասավ Մելիք, ու Կողբադին
Գըլուխ տըվավ մինչև դետին.

— Ապրա՞ճ կենաս, մեծ թաղավոր,
Ձոռո՞վ փախա յես ձիավոր,
Վո՞նց բերեյի Սասմա փոսկին:
Մի խենթ ծընվեց հայոց ազգին,

Վոչ ահ դխտի, վոչ տեր ու մեծ,
Գըլուխ եսպես տըվավ, ջարդեց
«Ձե՛մ տալ ասավ, իմ հոր փոսկին,
Ձե՛մ տալ կանայքն իմ հայ աղջին,
Սասմա յերկիր ձեզ տեղ չըկա...
Քու թաղավոր, ասավ, թո՛ղ դա,
Թող դա՛ ինձ հետ կըռիվ անի,
Թե դոչադ ե՛ դոռով տանի»:

Կատաղեց, փըրիբեց Մըսրա թաղավոր.

— Կանչեցե՛ք, ասավ, իմ զորքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ վանուկ
Հազար հազար մարդ անրեխ, անմորուք.
Հազար հազար մարդ բեխը նոր ծըլած
Հազար հազար մարդ նոր թախտից յեկած,
Հազար հազար մարդ թուխ միրո՞քավոյ,
Հազար հազար մարդ սիպտակ ալևոր,
Հազար հազար մարդ, վոր փողեր հընչեն,
Հազար հազար մարդ, վոր թըմբուկ զարկեն...
Կանչեցե՛ք, թող գան, հազնեն գե՛նք, գըրա՛հ,
Կըռիվ տի զընամ յես Դավթի վըրա,
Սասուն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ:

XVIII

Եսպես անհամար զորքեր հավաքեց,
Յեկավ Սասմա դաշտ, բանակը զարկեց,
Ու ծանըր նըստեց Մըսրա թաղավոր:
Ենքան ահադին բազմությունն են որ
Բաթմանա ջըրին յեկավ ու չոքեց,
Ով յեկավ, խըմեց— գետը ցամաքեց,
Սասմա քաղաքում մընացին ծարավ:
Ձենով Ոհանին զարմանքը տարավ:
Քուրքը ունն առավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ի՞նչ տեսավ:
Ճերմակ վըրանից դաշտը ձերմակել,
Ասես՝ են դիչեր ձըմեռը յեկել,
Սպիտակ ձյունով պատել եր Սասուն:

Անդին ջուր կըտրեց, կապ ընկալ լեզուն,
Հարա՛յ կանչելով՝ փախալ տուն ընկալ.
— Վա՛յ, փախե՛ք, յեկա՛վ... հա՛յ, հարայ,
յեկալ...

— Ի՞նչը, հորեղբայր, ի՞նչն, ի՞նչն յեկալ...
— Յավըն ու կըրա՛կը Դավթի պինչն յեկալ:
Մըսրա թագաւոր յելել է, յեկել,
Յեկել, մեր դաշտին բանակ է զարկել.
Թիվ կա աստղերին, թիվ չըկա զորքին...
Վա՛յ մեր արեին, վա՛յ մեր աշխարհքին...
Յե՛կ, վոսկի տանենք, աղջիկներ տանենք,
Չոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գըթա,
Մեզ սըրի չըտա...

— Դու կա՛ց, հորեղբայր, դու դարդ մի՛ անիր.
Դընա՛, քու ոչում դու հանդիստ քընիր.
Հիմի յես կեղնեմ, Սասմա դաշտ կերթամ,
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ:

Ու գընաց Դավիթ ծանոթ պառաւին.
— Նանի ջա՛ն, ասալ, ժանդոտած ու հին
Յերկաթի կըտոր, անթարոց, շամփուր,
Ինչ ունես չունես՝ հաւաքի՛ր, ինձ տուր,
Մի էշ էլ գըտիր, վոր վըրեն նստեմ,
Կըրիվ տի գընամ Մըսրա զորքի դեմ:

— Վա՛յ, Դավիթ, ասալ, մահս տանի քեզ
Դո՞ւ պետք է են հոր գալակը լինե՛ս...
Ո՛ւր է քու հոր հըրեղեն ձին,
Ո՛ւր է քու հոր թուր-Կեծակին,
Ո՛ւր է քու հոր դոտին վոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Ո՛ւր է քու հոր ծալ-ծալ կապեն,
Գուրզը պողպատ, թամբ սաղափեն,
Վոր յեկել էս, ա՛յ խենթ ու ծուռ,
Ինձնից կուզես եշ ու շամփու՛ւր...

— Ի՞նչ էս, նանի, էլ բարկանում,
Չահել եմ յես, չեմ իմանում.
Յես քեզնից եմ լըսում ետոր.

Չենք ու գըրահ ո՞ւր են իմ հոր:
— Հորեղբորդ գընա հարցուր.
Ո՛ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր:
Բան է, թե վոր չըտա սիրով,
Մէքը հանիր՝ խըլիբ գոռով:

XIX

Դավիթ գընաց Ոհանի մոտ.
— Ե՛յ հորեղբայր, իմ հերահոտ,
Տո՛ւր ինձ իմ հոր հըրեղեն ձին,
Տո՛ւր ինձ իմ հոր թուր-Կեծակին,
Տո՛ւր ինձ իմ հոր դոտին վոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Տո՛ւր ինձ իմ հոր ծալ-ծալ կապեն,
Գուրզը պողպատ, թամբ սաղափեն...

— Քու հոր մահվան տարուց-որից
Դուքս չեմ հանել ձին ախոռից,
Վոչ սընդուկից թուր-Կեծակին,
Ձըրահ, շապիկ, վոսկի դոտին...
Ինձ թող, ամա՛ն, մի՛ սպանիր,
Կուզես— հըրեն, գընա հանի՛ր:

XX

Հաղալ Դավիթ գընըն ու գըրահ,
Կապեց դոտին, թուր-Կեծակին,
Խաչն էլ իր հաղթ բազկի վըրա,
Յելալ, հեծալ Առյուծ հոր ձին,

Հոր ձին հեծալ՝ ասպանդակեց
Աստված կանչեց, ձենով յերգեց.
Սասման քույրեր, բարով մընաք,
Գուրություն էք արել ինձ,

Սասման մերեր, բարով մընաք,
Մերություն էք արել ինձ:
Ախպեր տըղեք, բարով մընաք,—
Մեր աշխարքին, մեր հանդին,

Սընդուժ անեք, թե հանդ գընաք,
Չըմտուանաք ձեր Դավթին:

Բարով մընաք դուռ ու դըրկից,
Մեծով փոքրով... մնաք բարով
Յես կըպահեսձ մեր աշխարհքից,
Դուք ապրեցեք բախտավոր:

Ծովասարի պաղ աղբյուրներ,
Բարով մընաք, ա՛խ մընա՛ք,
Կըռիվ կերթամ, կը ծարավեմ,
Դուք հորդ մընաք, պաղ մընաք:

Ծովասարի անուշ հովեր,
Բարով մընաք զո՛վ մընա՛ք,
Կըռիվ կերթամ, յես կըչոգեմ,
Դուք զով մընաք, հով մընաք:

Ե՛յ հերահոս իմ հորոխակեր,
Բարով մընա՞ս Սասմա տուն,
... բերնով որհնիր
Քո ծուռ Դավթին, ըու վորդուն:

Ձենով Ոհան լալով յերգեց.
— Ափսո՛ս, հագա՛ր ափսոս հըրեղեն մեր ձին.
Ա՛խ, հըրեղեն մեր ձին.
Ափսո՛ս, հագա՛ր ափսոս մեր վոսկի դոտին,
Ա՛խ, մեր վոսկի դոտին.
Ափսո՛ս, թանկ կապեն, վոր հագին տարավ,
Ա՛խ, վոր հագին տարավ...

Դավիթ բարկացավ,
Ձին քչեց, դարձավ,
Ոհանը վախեց,
Իր յերգը փոխեց.
«Ափսո՛ս, նորելուկ Դավիթըս կորավ,
Ա՛խ, Դավիթըս կորավ»:

Ես վոր իմացավ,
Դավիթ մեղմացավ,
Իջավ Ոհանի ձեռքը համբուրեց:
Ձենով Ոհանն ել, ինչպես հայր ու մեծ,
Որհնեց, խըրատեց նըրան հայրաբար,
Դեպի Սասմա դաշտ գըրավ ճանապարհ:

XXI

Սասունցի Դավթին ուներ մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ աժդահա:
Սա յել իմացավ համբավը կըռվի,
Մի բարդի ունին դալիս է ահա:
Դալիս է՝ հեռվից բարձըր գոռալով.
— Ի՛նչ էք վեր յեկել ես դաշտի միջում,
Քանի գըլխանի մարդիկ էք կամ ո՞վ,
Սասունցի Դավթին վոր չեք ճանաչում...
Բա չե՞ք իմանում, վոր ետեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թևավոր.
Չըբվեցե՛ք, հիմի ուր վոր է՝ կըղա,
Յեկել եմ սըրբեմ մեյդանը ետոր:

Սասվ ու քաչեց իր ուսի բարդին,
Մըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դավիթն ել ահա սարի դագաթին
Կանդնած՝ դուռում է վիշապի նըման.

— Ով քընած էք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն էք՝ յեկե՛ք, կեցե՛ք,
Ով կեցել էք՝ զենք կապեցե՛ք,
Ձենք էք կապել՝ ձի թամբեցե՛ք,
Ձի յեք թամբել՝ յեկե՛ք, հեծե՛ք.
Հետո չասեք՝ թե մենք քընած—
Դավիթ դող-դող յեկավ, գընաց...

Եսպես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կեծակ զարկի,
Մըսրա գորքի մեջ տեղ զարկեց,
Շողացնելով Թուր-Կեծակին:

Ձարդեց, փըշրեց մինչև կեսօր.
Կեսօր արինն յելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հազարավոր
Մարդ ու զիակ վողջ մխատեղ:

Կար զորքի մեջ մի ալևոր,
Աշխարհք տեսած ու բանադեա.
— Տըղե՛րք, ասավ, ճամբա տըվեք,
Գընամ խոսեմ յես Դավթի հեա:

Գընաց, կանգնեց Դավթի առաջ,
Եսպես խոսեց են ծերունին.
— Դարար կենա՛ կուռըդ, ով քաջ,
Մուրըդ կըտրուկ միշտ քու ձեռին:

Մի ծերունուս խոսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հե՞ր էս սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր վորդի,
Ամեն մինը մի տան ճըրադ,
Վորը կինն է թողել ենտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ:

Վորը մի տուն լիք մանուկներ,
Վորը ծընող աղքատ ու ծեր,
Վորը լացով, քողն յերեսին
Նորապըսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-թըրով
Հավաքել է, ետեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս որով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:

Թագավորն է քու թըշնամին,
Կըռվով ունես— իր հեա արա,
Հե՞ր էս քաշում թուր-կեծակին
Էս անճարակ խալխի վըրա:

— Լավ էս ասում դու, ծերունի՛,
Ասավ Դավթին ալևորին,
Քայց թաշավորն ո՞ւր է հիմի,
Վոր սե կապեմ նըրա որին:

— Մեծ վըրանում քընած է նա,
Ե՛ն, վոր միջից ծուխը կելնի.
Են ծուխն էլ հո ծուխ չի վոր կա,
Գորդըն է իր բերանի:

Ասին. դեպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դավթին իր ձին,
Քըշեց, դընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արարներին.

— Ո՞ւր է, ասավ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցե՛ք, դա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ դըրողն եմ յես...

— Մեղիքն, ասին, քուն է մըտել,
Ոխտը որով պետք է քընի.
Յերեք որն է դեռ անցկացել,
Չորս որ էլ կա, քունը առնի:

— Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
Ոալխին լըցրել ծովն արյունի,
Ինքը մըտել վըրանի մեջ՝
Ոխտը որով հանդիստ քընի՛...

Քրնել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք շո՛ւտ, դուրս դա մեյդան,
Ենպէս դըրան յետ քընացնեմ,
Վոր չը դարթնի ել հավիտյան:

Յելան՝ մարդիկ ճարահատված
Շամփուր դըրին թեժ կըրակին
Ու դարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մեղքի բաց կըրընկին:

— Ո՛Ք, ել հանդիստ քուն չունի մարդ
Ես անիծված լըվի ձեռից,
Խոր մըրընչաց հըսկան հանդարտ
Ու շուռ յեկավ, քընեց նորից:

Յելան, բերին մեծ դութանի
Խոփը՝ դըրին թեժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
Շիկնած տըլին մերկ թիկունքին:

— Ո՛Ք, ել հանդիստ քուն չունի մարդ
Ես անիրավ մոծակներից.
Աչքը բացավ հըսկան հանդարտ,
Ուզում եր յետ քընել նորից,

Տեսավ Դավթին: Գըլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըրընչալով,
Փըչեց վըրեն, վոր թըոցընի
Են աժդըհին մի փըչելով:

Տեսավ, տեղից ժած չի դալի,
Չարմանքն ու ահ պատեց հողին:
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չե, դդաց՝ իր մեջ
Տասը գոյշի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց:

— Բարո՛վ, Դավթի՛թ, հոգնած ես դեռ.
Յե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Հետո դարձյալ կըռիվ կանենք,
Յեթե կըռիվ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառսուն դազ խոր հոր եր փորել,
Յանցով փակել մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի փըռել:

Ում վոր հաղթել չեր կարենում,
Շողոմելով կանչում եր նա,
Նըստեցնում եր իր վըրանում
Են կորստյան հորի վրա:

Իջավ Դավթի՛թ ձիուցը ցած,
Գընաց նըստեց... ընկավ հորը:
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց
Մըսրա դաժան թաղալորը:

— Դե, թող հիմի դընա՛ խավար
Հորում փըթի, ենքան մընա:
Ու ահազին մի ջաղացքար
Բերավ, դըրավ հորի վըրա:

XXII

Քընեց են գիշեր Ձենով Ոհանը:
Գիշերն յերազում յերևաց ծերին՝
Մըսրա յերկընքում արև ճառագած,
Մե ամպ եր պատել Սասմա սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռավ տեղից:
— Վա՛յ, կընի՛կ, ասավ, մի ճըրագ արա՛,
Գընա՛ց մեր անփորձ Դավթի՛թը ձեռից,
Մե ամպ եր իջել Սասունի վըրա:

— Հողե՛մ գըլուխդ, ասա՛վ կընիկը,
Ո՛վ գետի՛ Դավիթն ո՛ւր ե քե՛ֆ անում...
Դու յեւ քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար յերազ ես տեսնում:

Գընեց Ոհանը: Վերկացա՛վ դարձյալ.
— Կընի՛կ, Դավիթը նեզ տեղն ե ընկած.
Մըսրա վառ ասողը շողում եր սլայծառ,
Մեր ասողը հիվանդ ցուքում դալկացած:

— Ի՞նչ յեղա՛վ քեզ, մա՛րդ, գիշերվածն կխե՛ն
Բարկացա՛վ վըրեն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց եւ յեա Ոհանն յերեսին,
Շուռ յեկա՛վ, քընեց խըռոված հողով:

Մի ուրիշ սլաակեր ավելի ահեղ.
Տեսա՛վ յերկընքի բարձըր կամարում
Վառվում եր Մըսրա ասողը փառահեղ,
Սասմա ասողիկը սուզվեց խավարում:

Չարթնեց վախեցած:— Տունըդ քանդվի, կի՛ն
Յես վո՛նց լըսեցի քու եզ կարճ խելքին.
Կորա՛վ մեն-մենակ մեր ջահիլն անտեր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, գենքերըս մի բե՛ր...

XXIII

Յելա՛վ Ոհան, դո՛մը մըտա՛վ,
Չարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Ե՛յ, ճերմակ ձի, մինչ յե՞րբ ասա՛վ,
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մինչև լուսը կըհասցնեմ».
Ու ձին տըլա՛վ փորը դետին:
— Մեջքդ կոտրի՛, լուան ի՞նչ անեմ
Լաշին հասնեմ, յեա թե՞ նաշին:

Կարմիր ձիու մեջքին դարկեց.
Սա ել յերես փորը դետին:
— Չա՛ն կարմիր ձի, մինչ յե՞րբ դու ինձ
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մի ժամի մեջ, կարմիրն ասա՛վ,
Կըհասցընեմ Դավթի կըռվին»:
— Լեղի դառնա, սև մահ ու ցա՛վ,
Ինչ տըլել եմ քեզ՝ են դարին:

Հերթը յեկա՛վ սեին հասա՛վ.
Գետին չերես փորը սև ձին:
— Ե՛յ, ջան Սևուկ, մինչ յե՞րբ, ասա՛վ,
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Յեթե ամուր մեջքիս մընաս,
Վոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մեկել վոտըդ շուռ տաս,
Կըհասցընեմ», ասա՛վ սև ձին:

XXIV

Սև ձին քաշեց Չենով Ոհան,
Չախը դըրա՛վ ասպանդակին,
Աջն էլ մինչև շուռ տար վըրան,
Կանգնեց Սասմա սարի գըլխին:

Տեսա՛վ Դավթի նըթույզն անտեր
Սարերն ընկած խըրխընջարով,
Ներքև Մըսրա գորքը չոքած,
Ինչպես անձեր ծըփուն մի ծով:

Ոխտը դո՛մչի կաշի հադա՛վ,
Վոր չըպատուի իրեն գողից,
Կանգնեց Ոհան, ամալի նըման
Գոռաց Սասմա սարի ծերից:

— Հե՛յ-հե՛յ Դավիթ, վո՞րտեղ ես դու.
Հիշի՛ր խաչը քո աջ բազկի,
Սուրբ Տիրամօր անունը տո՛ւր,
Լո՛ւր դուրս յե՛կ արեգակի:

Ձենը դընաց դըմբղըմբալով՝
Դավթի ահանջն ընկավ հորում.
— Հա՛յ-հա՛յ, ասավ, հորեղբայրս ե.
Սասմա սարից ինձ ե դուռում:

Ո՛վ Մարութա աստվածածին,
Խաչ պատրաստի իմ աջ բազկի,
Ձե՛ր եմ կանչել ես նեղ ժամին...
Կանչեց, տեղից յելավ վոտքի,

Ենպես զարկեց ջաղացքարին՝
Քարը յեղավ հաղար կըտոր,
Կըտորները յերկինք թըռան,
Ու դնում են մինչև ետոր:

Յելավ հորից, կանգնեց ահեղ:
Սարսափ կալավ դե Մելիքին:
— Դավիթ ախպեր, յե՛կ դեռ ետեղ,
Սեղան նըստե՛նք, խոսենք կարդի՛նք:

Ել չեմ նըստիլ յես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենդ.
Շո՛ւտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս յեկ մեյդան, կըռիվ անենք:

— Կըռիվ անենք, ասավ Մելիք,
Իմն ե միայն զարկն առաջին:
— Քոնն ե, զարկի՛ր, կանչեց Դավիթ,
Գընաց, կեցավ գաշախ միջին:

Յելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր դուրզն առավ, հեծավ իր ձին,

Քըչեց, դընաց մինչ Դիարբեքի
Ու ենտեղից յեկավ կըրկին:

Յերեք հազար լիդր եր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Յեկավ, զարկեց. կորավ փոշում
Ու յերերաց յերկրի դունդը:

— Յերկիր քանդվեց կամ ժածք յեղավ,
Սաին մարդիկ շատ աշխարհքում:
— Ձե՛, ասացին, արնի ծարավ
Հըսկաններն են իրար զարկում:

— Մեռավ Դավիթ ես մի զարկից,
Ասավ Մելիքն իրեն զորքին:
— Կենդանի ե՛մ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելիքին:

— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից յեկա,
Տե՛ս, վո՞րտեղից հիմի կըգամ:
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծավ յերկրորդ անգամ:

Յերկրորդ անգամ քըչեց Հալթար
Ու բաց թողեց ձին Հալթարից.
Խուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թավից:

Յեկավ, զարկեց. զարկի ձենից
Մոտիկ մարդիկ վողջ խըլացան:
— Գընա՛ց Դավիթ Սասմա տանից,
Գուժեց դոռոզ Մըսրա արքան:

— Կենդանի՛ եմ, կանչեց Դավիթ,
Մին ել արի՛— հեղթն ինձ հասավ,
— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից յեկա,
Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Յերրորդ անգամ հեծավ իր ձին,
Գրնաց մինչև հողը Մըսրա,
Ու ենտեղից, գուրզը ձեռին
Քըչեց, յեկավ Դավթի վըրա:

Յեկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական.
Փոչին յելավ Սասմա դաշտից,
Բըռնեց յերեսն արեգական:

Յերեք գիշեր ու յերեք որ
Փոչին կանգնեց ամպի նըման,
Յերեք գիշեր ու յերեք որ
Բոթը տըվին Դավթի մահվան:

Յերբ վոր անցավ յերեք սըր,
Են ամպի պես կանգնած փոչում
Կանգնեց Դավթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեզ-մըչուչում:

— Մելի՛ք, ասավ, ո՞ւմն է հերթը:
Մարտաի կալով գոռ Մելիքին,
Մահվան գողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռոց հողին:

Գրնաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն են խավար,
Վըրեն քաչեց քառսուն կաշի
Ու քառսուն ջաղացի քար:

Մըռնչալով յելավ տեղից
Են առյուծի առյուծ վորդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Սաղաց, շողաց թուր-կեծակին:

Առաջ վագեց մաղերն արձակ
Մեղքի պառավ մայրը ջաղուռ:

— Դավի՛թ, մաղըս ա՛ռ վոտիդ տակ,
Եդ մի զարկը ի՛նձ բաշխի դու:

Յերկրորդ անգամ թուրը քաչեց.
Ես անգամ ել յեկավ քուրը.
— Դավի՛թ, յեթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին զա՛րկ յերկրորդ թուրը:

Վերջին զարկի ժամը հասավ,
Յելավ Դավիթ յերրորդ անգամ.
— Ես մի զարկն ու աստված, ասա՛մ,
Ել մարդ չըկա, պեսք ե վոր տամ:

Ես անգամ ել քեռի թորոսն
Առաջ յեկավ ձեռն արած դեմ.
— Դավի՛թ, ասավ, լավ իմանաս,
Կըչեոք պիտի գըցեմ, քաչե՛մ:

Մըսրամեղքի յերկու կեսը
Թե հաշտասար չեկան իրար,
Ել չտեսնես իմ յերեսը,
Դավիթ չես ել դու ինձ համար:

Ասա՛մ, յելավ ու փոթորկեց,
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ թուր-կեծակին:

Անցավ քառսուն գոմչի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեչին,
Ոխտը դազ ել դենը գընաց:

— Կենդանի՛ր յեմ, մին ել արի՛.
Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լըսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, թուր-կեծակից:

— Մեղի՛ք, ասավ, թա՛փ տուր մի քեզ:
Ու թափ տըլավ Մեղիքն իրեն,
Միջից յեղավ ճիշտ յերկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը՝ դեն:

Ես վոր տեսավ Մըսրա բանակ,
Չուր կըտըրվեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց.— Մի՛ վախենաք,
Ականջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչար մարդիկ, անավ,
Չուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հաղար ու մի կըրակ ու ցավ,
Հաղար ու մի հողսեր ունեք:

Ի՛նչ եք առել նեա ու աղեղ,
Յեկել թափել ոտար դաշտեր.
Չե՞ վոր մենք ել ունենք տուն—տեղ,
Մենք ել ունենք մանուկ ու ծեր...

Չանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի որ ու կյանքից,
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Չեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք յեկած ճանապարհով
Չեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին ել զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեմ քառսուն դադ խոր
Թե ջաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դեմ, ինչպես եսոր,
Սասմա Դավիթ, Թուր—Կեծակին:

Են ժամանակ աստված դիտի,
Ով մեղանից կըլնի փոշման.
Մե՞նք, վոր կելնենք ահեղ մարտի,
Թե դուք, վոր մեզ արիք դուշման...

1902

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հե՛յ, պարոններ, ահանջ արե՛ք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,
Լա՛վ ուշ զըրեք իմ խաղին:

Մենք ամենքս հյուր ենք կյանքում
Մեր ծնընդյան փուշ որից,
Հերթով դալիս անց ենք կենում
Ես անցավոր աշխարհից:

Անց են կենում սեր ու խընդում,
Գեղեցկություն, դանձ ու դահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու դործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Վոր խոսվում է դարեդար,
Յերնե՛կ նըրան, վոր իր դործով
Կապրի անվերջ, անդադար:

Չարն ել է միշտ սպրում անմեռ,
Անե՛ծք նրա չար դործքին,
Վորդիդ լինի, թե հերն ու թեր,
Թե մուրադով սիրած կին:

Յես լավության խոսքն եմ ասում,
Վոր ժըպտում է մեր սրտին.

Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,
Լավ արարքը, լավ մարդին:

Ե՛յ, լավ կենաք, ահա՛նջ արեք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,
Խոսքըս, տեսեք, ս՞ուր ե գընում,
Քաջ վորսկանի գյուլլի պես:

I

Նազիր Շահը զորք հավաքեց,
Զորք հավաքեց անհամար,
Յեկավ Թրփիա բերդը պատեց,
Ինչպես գիշերն են խավար:

— Հե՛յ, քաջ Թաթուլ, կանչեց Շահը,
Անա՞հ էյիր քեզ կարծում.
Յե՛կ, բերել եմ յես քու մահը,
Ի՛նչ ես թառել ամբոցում:

— Մի՛ պարծենա, գոռոզ Նազիր,
Պատասխանեց են հըսկան.
Գըլլսովը շա՛տ ամպեր կանցնեն,
Սարբ միշտ կա անաստան:

Ասով, կանչեց իր քաջերին,
Թուրը կապեց հավլունի,
Թըռավ, հեծավ նըթույգ իր ձին,
Դաշտը իջավ արյունի:

Ու քառսուն ոք, քառսուն գիշեր
Էրոխի արվին անդադար,
Ընկան քաջեր, անթիվ քաջեր,
Բերդի գըլլին հավասար:

Իրան, Թուրան, վողջ յեկել են,
Թաթուլն անհաղթ, աննըկուն,

Զորք ու բարան խորտակվել են,
Նըրա բերդը միշտ կանդուն:

Ու միշտ հւերախ, հաղթանակով
Իր ամբոցն է դառնում նա.
Սպասում է ենտեղ կինը,
Զահել կինը սեաչյա:

II

Են տեսակ կին,
Յե՛ս իմ հողին,
Թե աշուղն էլ ունենար,
Առանց զենքի,
Առանց զորքի
Շահերի դեմ կը դընար:

Սիրո հընոց
Կրակ ու բոց
Ենպես աչքեր թե ժըպտան,
Մարդու համար
Որվա պես վառ
Գիշերները լույս կըտան:

Վարդի թերթեր
Ենպես շուրթեր
Թե հաղթություն քեզ մաղթեն,
Ել քեզ վոչ Շահ,
Վոչ ահ ու մահ,
Վոչ զենք ու զորք կը հաղթեն:

III

Ու կըլլի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ գովըր սիրունի.
Նըրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
Զի հասնի չըքնազ հուրին Իրանի:

Ծով են աչքերը Ձալախքի դրստեր
Ու կորչում է մարդ նրա հայացքում,
Ճակատը ձերմակ են ձյունից ել դեռ,
Վոր բարձր Աբուլի դադաթն է ծածկում:
Նա յե շունչ, հոգին իշխան թաթուլի,
Նրա սիրովն է հարբած են հըսկան,
Նրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Վոր դաշան է իջնում առյուծի նրման:
Թե տիրես, մեծ Ծահ, դու նրա սըրտին,
Թաթուլն ել անդոր կընկնի վտարի սակ,
Հանդիստ կը տիրես և թըմուկ բերդին,
Վոր չես կարենում եսքան ժամանակ:

IV

Կսպես է ասել հընուց եդ մասին
Փարսի բյուրբյուրը, անմահ Փիրդուսին.
Ի՛նչը կըհաղթի կյանքում հերոսին,
Թե չը լինին
Կինն ու դինին:

Արևի նման ճակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպես սար.
Ո՛վ կանի նրան դետնին հավասար,
Թե չը լինին
Կինն ու դինին:

Պարում է ասես կըտիվ դընալիս,
Գեաընքից վերև թըռչում ման դալիս.
Ո՛վ ցած կը բերի նրան թըռչելիս,
Թե չը լինին
Կինն ու դինին:

Թեկուզ և արար աշխարհ զա վըրան,
Կերթա դեմ ու դեմ, տուր չի տալ իրան,
Ռուստեմ Ձալն ել չի հաղթել նրան,
Թե չը լինին
Կինն ու դինին:

Ու զըրկեց Ծահը իր թովիչ յերդին.
Գընա, տե՛ս, ասալ, թըմկա տիրուհուն,
Յերգի՛ իմ սերը նրա առաջին,
Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:
Խոստացի նրան իմ վտակի գահը,
Խոստացի նրան ամե՛ն, ամեն բան,
Ինչ վոր կարող է խոստանալ Ծահը,
Յերկրակալ Ծահը իր սիրած կընկան:

Ուր անեղ կըսվով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն սաղի հեա.
Յեզ անա մի որ ծեր, թափառական
Մի աղբատ աշուղ մըտով թըմկաբերդ:

VI

Գուում են, դողում թըմկա ձորերը,
Կանգնած է թաթուլ Ծահի հանդիման.
Չարկում են, զարկվում գուշման զորքերը,
Արյունը հոսում են Քըռի նրման:

Չարկում են, զարկվում գուշման զորքերը,
Արյունը հոսում են Քըռի նման.
Յերգում է աշուղն իր Ծահի սերը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ թըմկա տիրուհին.
Յեզ վրդովում են իր միտքը թաղուն
Դավաճան զործի ամոթը խորին
Յեզ արքայական փառքն ու մեծություն...

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Ա՛յ նազանի աննըման.
Նայի Ծահի՛ն, իրեն զորքի՛ն,
Աշխարհքի տերն անսահման...

Մեզ պես տրեկար մարդ է նա յեւ
Սիրուններին միշտ գերի.
Գու ճակատին թագ է վայել,
Լինիս չքե՛ղ թագունէի...

Լըսում է չքնաղ թըմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից,
Ու դարձավ նա լո՛ւռ, դալո՛ւկ, մըտախո՛ւհ,
Ու քունը փախավ սիրուն աչքերից...

VII

Դարձավ իր կրուլից իշխան թաթուլը,
Դարձավ հաղթական իրեն զորքի հետ,
Սըրբեց, սլատյանը դըրավ կեռ թուրը,
Յնծության ձայնից դողաց թըմկաբերդ:

Խընջույք է սարքել թըմկա տիրուհին,
Յերեկ է արեւ խավար գիշերը.
Հեղեղի նման հոսում է գինին,
Ու քեֆ է անում Ջավախքի տերը:

Պըտույտ է դալիս չըքնաղ տիրուհին,
Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խնդրում, վոր ուրախ լինեն,
Վոր լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Հապա լըցրե՛ք, իմ քաջ հյուրեր,
Բաժակներըդ լիուլի,
Խըմենք—աստված կըտրուկ անի
Թուրը իմ քաջ թաթուլի:

— Ե՛յ, տեր աստված կըտրուկ անի
Թուրը մեր քաջ իշխանի,
Նըրա շուքը միշտ հանապաղ
Մեր դըլխիցը անպակաս:

Ու թընդում է թըմուկ բերդը
Են աղմուկից խընդության,
Վորստում են տաղն ու յերդը
Գու ձայներով հաղթական:

— Են մըթին ամպից արծի՛վն է իջնում,
Սարի արծիվը շեշտակի թափով:
— Են թըմկա բերդից թաթուլն է իջնում,
Թըչնամու հողին լցնում սարսափով:

— Են թըմկա ձորում սև ա՛մպն է դոռում,
Են շա՛նթն է ճայթում ենպես ահարկու:
— Են թըմկա ձորում թաթուլն է կըմլում,
Են թուրն է շաչում ենպես ահարկու:
Խ՛նչ սարի արծիվ կըհասնի քաջին.
Ի՛նչ Շահ կըկանգնի նըրա առաջին:

Ու չի դադարում յերգի հետ վարար
Կախեթի գինին խելադար հոսել,
Խըմում են տիկնոջ թանգ կյանքի համար,
Վոր են ժայռերին ծաղիկ է բուսել:

Խըմում են կոփոջ քաջերի փառքին,
Վոր կրուլի դաշտում կյանք չեն խընայում,
Յեվ ընկածների սուրբ հիշատակին,
Վոր յերկընքիցն են այժմ իրենց նայում...

Պըտույտ է դալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խընդրում, վոր ուրախ լինին,
Վոր վիքն ու առատ բաժակներ քամեն:

— Ո՛ք տիրուհի, աստված վկա,
Ել չենք կարող մենք խըմել.
Ել ուժ չըկա, ել տեղ չըկա,
Շատ ենք խըմել ու հողնել...

Ու հանդէում և թըմուկ բերդը,
Պապանձում և ու մարում,
Հարբած, հոգնած տերն ու զորքը
Մըրախում են խալարում:

VIII

Լուս ու խալարչտին կամարները տակ,
Հոգնած ու քընած բաղմության վըրով
Թըռչում են, թոչո՞ւմ, սև, չարագուշակ
Յերագներն ահեղ անվերջ խըմբերով:

Յերաց և տեսնում թաթուլ իշխանը,
Վոր վիշալ ոճը յեկել և ահա,
Յեկել լիաթաթվել, իր բերդը պատել,
Գըլուխը դրել յես պոչի վրա:

Ու բարձրանում և հըրեչն ահուկի,
Իրեն գըլուխը բարձրացնում և վեր,
Բարձրացնում մինչև բարձունքը բերդի,
Մինչև թաթուլի պալատն ու տըներ:

Պառկած և իբրև թաթուլ իշխանը
Նաղելի կընով գըլուխն իր կըրծքին,
Ու իբր ասում և՛ վե՛ր կաց, իմ հրեշտակ,
Թո՛ղ, վոր սպանեմ յես եղ հըրեչին:

Եսպես և ասում թաթուլ իշխանը,
Ու զարհուրանքով տեսնում և հանկարծ,
Իրեն սիրելի կընով գըլուխ տեղ
Ոճի գըլուխն և կըրծքին ծանրացած...

IX

Ե՛յ, հըսկեցե՛ք, ի՞նչ եք քընում,
Գաջ զինվորներ թաթուլի.
Ո՞վ և, տեսեք, տանջվում մըթնում,
Գուն չի աչքին մաթ գալի:

Ձը լինի՞ թե հաղթահարված,
Ճարը հատած թըշնամին
Դավ և դնում մութն ու մեռած
Կես գիշերվա ես ժամին:

Վե՛ր կացեք վե՛ր, ամբողջ գիշեր
Մարդ և գընում ու դալխ.
Հե՛յ, զարթնեցե՛ք, առյուծ քաջեր
Պահապաններ թաթուլի:

Վե՛ր կացե՛ք, վե՛ր, հարբեցրու և
Իր հաղթական հյուրերին,
Բաց և անում դուռն ու դարպաս
Ձեր դավաճան տիրուհին:

Դա՛վ... դա՛վ... յեկե՛ք... կոչնա՛կ... պահնա՛կ...
Ձենք առեք շո՛ւա... ձի հեճե՛ք, ձի՛...
Ճըռընչում են, գըղըրդում են
Դարպասները յերկաթի...

X

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վըրա, Ձավախքի վըրա,
Ավերակ բերդին, սև ամպի նման,
Ծուխն ու թըշնամին՝ չոքել են ահա:

Հաղթության լիաքով ու գինով հարբած
Քընած են բերդի և՛ դորքերն և՛ տեր,
Ու հալիտյան ել մընացին քնած,
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր:

Նըստած և Շահը. նըրա առաջին
Ահա իրիկվան քեֆի սեղանը.
Նայում և Շահը անտեր դահուլքին,
Մաքուլն անցնում և աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չըլիա վոչ մի բան
Ու մի՛ հավատալ յերբեք վոչ մեկին.
Վոչ բախալի, փառքի, վոչ մեծ հաղթութեան,
Վոչ սիրած կնկա տըված բաժակին...

Ու լի դառնութեամբ հարցընում ե նա
Դալուկ մարմարիոն թըմկա տիրուհուն.
— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սեւաչյա,
Մի՞թե թաթուլը քաջ չէր ու սիրուն...

— Գաջ եր ու սիրուն քեզնից առաջել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ եր նա.
Կնոջ մատնութեամբ ամրոց չէր առել,
Չէր յեղել կյանքում յերբեք խաբեբա...

Եսդես տիկինը տըվալ պատասխան.
Անհուն ցատումից մըռընչաց Շահը.
— Հե՛յ, դահի՛ճ, դուռաց դադանի նըման,
Դահիճը իսկույն մտալ սրահը:

XI

Դահիճն յեկալ վոտից դըլուխ
Կարմիր հագած ու արյուն,
Ու գուրս տարան իր պալատից
Թըմկա չըքնաղ տիրուհուն:

Տարան անտակ են ժեռ քարից,
Վոր կանգնած է մինչ եսոր,
Են ահալոր քարի ծերից
Գըլորեցին դեպի ձոր:

Գել ու աղվես յեկան հանդից
Ազահ սիրտը լափեցին,
Ցին ու ազոավ իջան ամպից,
Սև աչքերը հանեցին:

Անցալ անտես ու աննըման
Են սիրունը աշխարհից,
Ինչպես ծաղիկն անցած դարնան,
Վոր չի ծաղկել ել նորից:

Անցալ դալում են մեծ արքան
Իրեն փառքով ու զորքով,
Անցալ թաթուլն են հաղթական
Ու իր քաջերն են կարգով:

Ու նրանցից մենակ անմեռ
Ես դրույցը հասալ մեղ,
Վոր մեղանից հետո յել դեռ
Պետք է խոսվի միշտ եսդես:

XII

Հե՛յ, պարոններ, ահանջ արե՛ք
Թափառական աշուղին,
Միրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըգերք,
Լալ ուչք դրեք իմ խաղին:

Ամենքս եսդես հյուր ենք կյանքում
Մեր ծնընդյան փուչ որից,
Հերթով դալիս անց ենք կենում
Ես անցավոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խոսվում լալ ու վատ.
Մի՛խ, յերանի՛ ով մարդ կըզա
Ու մարդ կերթա անարատ:

1902

Ա Ն Ո Ւ Շ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

(Համբարձման գիշերը)

Բազմամ լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թռուչելով՝
Փերինները սարի գլխին
Հալաբլեցին գիշերով:

— «Յեկե՛ք, քույրե՛ր, սեզ սարերի
Զըքնաղաղեզ վողիններ,
Յեկե՛ք, ջահել սիրահարի
Սերը վողբանք վաղամեռ:

Ոխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով, լուռ ու մունջ,
Ոխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկեփունջ:

Զուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափազ սրբտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սերին...

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՛ս իզիթ քու յարին.
Ափսո՛ս բոյիդ թելիկ-մեղիկ,
Ափսո՛ս եզ ծով աչքերին...»

Ու նրանց հետ՝ ցող-արցունքով
Լըցված սրբանն ու աչեր՝
Սարի ծաղկունք տըխուր սյուքով
Հառաչեցին են գիշեր:

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ քուրե՛կ,
Վո՛ւշ քու սերին, քու յարին...
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իզի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...»

— Յեկե՛ք, քույրե՛ր, սեզ սարերի
Զըքնաղաղեզ վողիններ...»
Ու փերիններն հապես տըխուր
Յերգում էլին վողջ գիշեր:

Կանչում էլին հըրաչալի
Հընչյուններով գյութական,
Ու հենց շողաց ցուրն արևի՝
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուղվեցին ակն աղբյուրի,
Մըտան կազնին հաստարուն,
Ու լեռնային վըռակների
Ալիքները պաղպաջուն:

ԱՌՍՁԻՆ ՅԵՐԳ

1

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Են չըքնաղ յերկրի կարոտը անքուն,
Ու՛ թևերն ահա փրոած տիրաբար,
Թըռչում է հոգիս, թըռչում դեպի տուն:
Ուր վոր հայրենի ոջախի առաջ
Վաղո՛ւց կարտով ըսպասում են ինձ,
Ու ճըմռան յերկար գիշերը նըստած
Խոսում են լուռ հին-հին քաջերից:

Դեպ են սարերը, վոր վես, վեթխարի,
Հարբած շարքերով բրունած շուրջպարի,
Հըսկա՛ շուրջպարի բրունած յերկընթում,
Հըրճվում են, ստես են մեծ հարսանքում
Պերճ Արազածի նազելի դըստեր,
Վոր Դև-Ալ, Դև-Բեթ և այլ հըսկաներ,
Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փայցըրին բերին անասիկ Լոռի:

II

Ե՛յ հին ծանոթներ, ե՛յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա ու միտըս ընկան,
Առաջըս յեկան յերջանիկ որեր,
Սիրելի գեմքեր, վոր հիմի չըկան:
Անցե՛լ են, վոնց վոր ծաղկունքը պես-պես,
Վոր անցած պարնան կային ձեր լանջում.
Անցե՛լ ձեր գըլխի հերվան ձյունի պես,
Բայց յեկել եմ յես՝ նըրանց եմ կանչում:
Վողջո՛ւյն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,
Վորբացած հողիս վողջուհում և ձեզ,
Թըռչուն կարոտով փընտրում ձոր ու լեռ,
Դյութական ձայնով կանչում և հանդես:
Դո՛ւրս յեկեք կըրկին շիրմից, խավարից,
Դո՛ւրս յեկեք տեսնեմ, շոչափեմ, լըսեմ
Կյանքով չընչեցե՛ք, ապրեցե՛ք նորից,
Լըցրեք պոետի հաճույքը վըսեմ...

III

Յեվ մութ այրերից մամոտ ժայտերի,
Թավուս ծըմակի լըռին խորքերից,
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լըսում եմ նորից:
Թընդում և գըվարթ աղմուկը բինի.
Բարձրանում և ծուխն իմ ծանոթ ուրթից,

Ու բուրն, ահա, նորից կենդանի,
Յե՛նում են աշխույժ վաղորդյան մալթից,
Ու թա՛րմ, ցողապատ լեռների լանջում...
Սո՛ւս... ահա՛նջ արա, — հովիվն և կանչում...

IV

— Աղջի՛, անասոված, նըստի՛ր վըբանում,
Ի՞նչ ես դուրս դալիս, խելքամաղ անում,
Աչուզ ես չինել, չեմ հանդըստանում,
Խաղեր կապելով,
Չոյեր չափելով,
Վոչխարըս անտեր,
Ընկել եմ հանդեր:

Ամա՛ն, երեցիր սիրտըս քու սիրով,
Վոտըս կապեցիր թել-թել մաղերով,
Ել չեմ դիմանալ, կըփախցնեմ գոռով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարճրաթուշ,
Թուխամաղ Անուշ:

Քու հերն ու մերը թե վոր ինձ չըտան,
Արին կըթափեմ յես գետի նըման.
Մարերը կընկնեմ— կորչեմ անդյուման,
Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար
Աղջիկ, քեզ համար:

V

Յերգում և Սարոն, ու չի կարենում
Աղջիկը հանդես նըստի վըբանում:
Են ո՞վ եր նանի՛, վոր կանչում եր մեզ,
Դու չե՛ս իմանում... ահանջ արա, տե՛ս...

— Հերի՛ք է, Անո՛ւշ, ներս արի դադեն,
Քանի՛ դուրս թըռչես, նայես դես ու դեն,
Տեսնողն էլ կասի— Ի՞նչ աղջիկ է սա...
Հազար մարդի մոտ կերթա կըխոսա:
— Մըսի՛կ տուր, նանի՛, են սարի լանջին,
Ի՞նչքան ավուրի է տալիս կանանչին...
Նանի՛, թող դընամ քաղեմ ու հյուսեմ,
Են սարի լանջին «Չան դյուլում» ասեմ:
— Հանդի՛ստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝
Ի՞նչ ունիս ջահել չորանների մոտ,
Նըստիր վըրանում, քու դորձին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջի՛, ամսթ է, ամս՛թ:
— Ա՛խ, սիրարս, նանի՛, չը դիտեմ ընչի,
Մին լաց է լինում սեակեմ՝ձ, արիս՛ւր,
Մին թե է անում— ուզում է թըռչի,
Չըզիտեմ՝ թե ո՛ւր, չըզիտեմ՝ թե ուր...
Նա՛նի ջան, նա՛նի յես ի՞նչպես անեմ.
Ի՞նչ անի անքուն, անհանդիստ բալեդ.
Նա՛նի ջան, նա՛նի, կուժը թող անեմ
Աղբյուրը գընամ աղջիկների հետ...

VI

Կրժերն ուսած՝ թըռվըռալով
Ձուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Յերգը գընդում սարն ի վեր:

— Աճպի տակից ջուր է գալի,
Դու է տալի փըրփըրում.
Են ո՛ւմ յարն է նըստած լալի
Հոնդուր—հոնդուր են սարում:

Ա՛յ պազ ջըրեր, դուլալ ջըրեր,
Վոր դալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չուրեր,
Յարս էլ խըմե՞ց եդ ջըրից:

Յարար խըմե՞ց, յարար հովցա՞վ
Վառված սիրտը են յարի,
Յարար հովցա՞վ, յարար անցա՞վ
Անքուն ցալը ջիզյարի...

— Աղջի՛, քու յարն յեկալ անցալ
Վառված, տարված քու սիրով,
Երված ջիզյարն՝ յեկալ անցալ,
Չըհովացալ պաղ ջըրով...

Աճպի տակից ջուր է գալի,
Դու է տալի, փըրփըրում.
Ա՛խ, իմ աղիզ յարն է լալի
Հոնդուր—հոնդուր են սարում:

VII

Ու պառալ նանի սըբաի մեջ հանկարձ
Չեն տըվալ թաքուն մի խավար կասկած.
— Են յե՛րբ եր՝ Անուշն իր կուժը առալ,
Աղբյուրը գընաց ու յես չըղարձալ...
Աճպերն յեկել են սարերը պատել,
Ձորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շատ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի...»
Ու յելալ տեղից պառալը հանկարձ.
— Ո՛ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մաղը կտրած...»
Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անաս գավակին.
— Աղջի՛, սեասի՛րտ, քու ասը կըտրի,
Աղջիկը մենակ ձո՞րը կըմըտնի:
Աճպը կոխել է, աշխարքը մըթնել,
Ի՞նչ էս կորցրել, չես կարում գըտնել...
Աղջի, հե՛յ Անուշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ...»
Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ»,
Ու ձորի գըլխին մուրըված կանգնած
Նայում է ներքև սիրտը սեակեմ:
Աճպերն յեկել են սարերը պատել,

Չորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շատ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի:

VIII

—Թո՛ղ, կանչում են ինձ... մերըս կիմանա...»
— Չե՛, Անո՛ւշ, քի՛չ ել, մի՛ քիչ ել մընա...»
— Չե՛, Թո՛ղ, յես դնամ... ա՛խ, ի՛նչ խենթ եմ յես...
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,
Հենց յես եմ մենակ լալիս ու տանջվում,
Դու սարի լանջին խողեր ես կանչում...
Վաղո՛ւց, վաղուց, ես դու ինձ մոռացել...
Յես յե՛րբ եմ յեկել ետեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ, անիրա՛վ,
Ենքան մընացի՛ աչքըս ջուր դառաւի:

Ինձ չես լըսում,
Չես ափսոսում,
Ել չես ասում—
Ինչ կըլնեմ յես...
Յես կը վառվեմ,
Հուր կը դառնամ,
Յես կը հալվեմ—
Չուր կը դառնամ,
Յես... չը դիտեմ
Ինչ կը դառնամ,
Թե վոր մին ել
Եսպես մընամ...

Ասում են՝ ուսին
Աղջիկ եր ինձ պես,
Մընում եր յարին,
Ու չեկավ նա տես:
Խեղճը դողալով՝
Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ,

Ուսենի դարձավ...
Ջըրերի վըրա
Գըլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին
Վո՛նց է մոռանում...

Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, եղ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում.
Են, վոր լանջերին խողեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խոսում...
Են, վոր դիչերով շըհու յեմ փըչում,
Են ո՞ւմ եմ կանչում...
Են, վոր մոլորված նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում...
Են, վոր հառաչում ու ախ եմ քաշում,
Են ո՞ւմ եմ հիշում...
Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անաստվա՛ծ Անո՛ւշ...»
Արբեցա՛ծ, անո՛ւթ
Հառաչեց հովիվն ու սըրտին ընկավ,
Հարվեցա՛վ, հանգա՛վ...

IX

— Անո՛ւշ, ա՛յ աղջի, Անո՛ւշ, տո՛ւն արի...»
Կանչում է մերը, հառաչում կանչում:
— Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛...»
Չորից աղջրկա ձենն է դողանջում:
Ու մաղերն անկարգ տըված թիկունքով
Ու ցըրված շիկնած այտերի վըրան,
Դուրս յեկավ թեթև ամպերի տակից
Անուշը՝ փախած յեղնիկի նըման:
Նա կուժը դատարկ յետ բերավ կըրկին,
Իսկ ուսին տարած ուսաչոր չըկա,

Թողել է են եւ ջրը յեզերքին...
Ախ, անհողություն ջահել աղջկա...
Նանի՛, վախեցի, դանդառում է նա,
Յե՛վ ուզում է լալ, չի կարողանում.
— Նա՛նի, ներքեում յես մարդիկ տեսա,
Կարծեցի՛ թուրքեր եյին լողանում...»
Անիծում է ծեր մերը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անեծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ յետ բերած հին կուժը ուսին:

ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՐԳ

X

(Համբարձման ասավսար)

Համբարձումն յեկա՛վ, ծաղկունքը արլան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով.
Փունջ փունջ աղջիկներ սարերը յեւան
Վիճակ հանելու աշխույժ յերգերով:

«Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սև սարեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Յերգ ու բույր խառնած,
Թե-թեի բրնձած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խնդում.
Ինչպես թիթեռներ:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Լավ սրեր, յա՛յլա,
Յա՛յլա ջա՛, յա՛յլա:

Յեկա՛վ համբարձում
Ծաղկով զարդարված,
Մեր բախտին հարցում.
— Ո՞վ է մեզ զբրված:

— Ա՛յ ջան տղա, չորան տղա, ո՞ւմն ես դու:
— Ատոված գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես գու:

Դե հանի՛ր ա՛ղջի,
Վիճակն ի բարին,
Յերգերով դովենք
Են իզիթ յարին:

— Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ են յարի,
— Ի՛նչ դարդ ունեմ քանի նա կա աշխարհի:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Հուր սըրտեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Թընդում են յերգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բողորած վիճակ են հանում.
Յե՛նում է մեկին իր յերազն ու սեր,
Մյուսի մուրազը սըրտումն է մընում:

XI

Պրտույտ է տալիս վիճակը նորից
Քուշուչքը գըլխին ծաղիկ Ծաղկամեր,
Թընդում «ջան դյուրում» մատաղ սըրտերից,
Հետը գըվզըվում՝ են ծաղկոտ սարեր:

«Ա՛յ թուխ մաղավոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Զիգյարին դյուրա գիպչի
Քեզ սիրի ով վոր, աղջիկ»:

Թողել է են ել ջրի յեզերքին...
Ախ, անհողութուն ջահել աղջկա...
Նանի՛, վախեցի, գանդատում է նա,
Յեզ սեզում է լալ, չի կարողանում.
— Նանի, ներքեում յես մարդիկ տեսա,
Կարձեցի՛ թուրքեր եյին լողանում...»
Անիծում է ծեր մերը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անեծք տարով իջնում է նա դած՝
Դատարկ յես բերած հին կուժը ուսին:

ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՐԳ

X

(Համբարձումն աստվար)

Համբարձումն յեկազ, ծաղկունքը արջան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով.
Փունջ փունջ աղջիկներ սարերը յեւան
Վիճակ հանելու աշխույժ յերգերով:

«Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Մե սարեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Յերգ ու բույր խառնած,
Թե-թեի բըռնած
Զուգում են լեաներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղիկ հետ խաղում.
Ինչպես թիթեռներ:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Լալ սրեր, յա՛յլա,
Յա՛յլա ջա՛, յա՛յլա:

Յեկազ համբարձում
Ծաղկով զարդարված,
Մեր բախտին հարցում.
— Ո՞վ է մեզ դըրված:

— Ա՛յ ջան տղա, չորան տղա, ո՞ւմն ես դու:
— Ասոված գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Դե հանի՛ր ա՛ղջի,
Վիճակն ի բարին,
Յերգերով դովենք
Են իզիթ յարին:

— Բեղը ծիւ-ծիւ, բոյը թիւ-թիւ են յարի,
— Ի՞նչ զարդ ունեմ քանի նա կա աշխարհի:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Հուր սըրտեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Թընդում են յերգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Յե՛նում է մեկին իր յերազն ու սեր,
Մյուսի մուրազը սըրտումն է մընում:

XI

Պըտույտ է տալիս վիճակը նորից
Քուշուշքը գըլխին ծաղիկ ծաղկամեր,
Թընդում «ջան դյուլում» մատաղ սըրտերից,
Հեռը գըվզըվում՝ են ծաղկոտ սարեր:

«Ա՛յ թուխ մաղալոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Զիգյարին դյուլա գեպչի
Քեզ սիրի ով վոր, աղջիկ»:

— Վո՛հ, ի՛նչ սև վիճակ քեզ բաժին ընկաւ,
Սևաբախտ քուրիկ, նագելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով վոր հանեցիր...»
Ու վորչ մընացին մոլորված, ապուշ:

— Սուտ բան է, քուրիկ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա՛, ջան գյուլում ասա:

— Ա՛խ, չե՛, յես գիտեմ, յես բախտ չի ունեմ.
Յես յերբե՛ք, յերբե՛ք բախտ չեմ ունեցել...
Յես միշտ ել եսպես անբախտ կըլինեմ.
Մանուկ որից են դեռ ինձ անիծել...
Ասում են՝ մի որ, յես որորոցում,
Մի պառազ գարվիչ մեր դուռն է դալի,
Իր խաղն ասում է ու բաժին դըրում,
Իմ նանը նըրան բաժին չի տալի:

— Կորի՛, ասում է, կորի՛ մեր դըռնից,
Յերեխաս ճաքեց, հեռացի՛ր, գընա՛...»
Ու գարվիչն ենտեղ անիծում է ինձ,
Թե՛ դըրա որը լացով անց կենա...
Ա՛խ, են գարվիչի անեծքին անդուլթ
Ու ես վիճակին տեղյակ է պստված.
Սիրտըս ել միշտ փա՛կ, սիրտըս ել միշտ մո՛ւթ,
Ի՛նչ կա, չըզիտեմ, իմ առջև պահված...

— Մի՛ տըրամիր, Անու՛շ, մի՛ լինիր համառ.
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ գարվիչ, մի անեծք հիմար,
Ու լալիս ես դու եղպես սըրտաճա՛ք...
Հանգիստ կաց, քուրիկ, մի՛ վախիր եղբան,
Կյանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Եղ քո նորահաս մատաղ կուսուլթյան,
Առաջև դեռ կան յերջանիկ որեր:
Սուտ բան է, քուրիկ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա.

Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար
Քու խաղըդ խաղա, ջան գյուլում ասա:

(Խումբը յերգում է)

Աղջի, բախտավո՛ր,
Երնե՛կ քու սերին,
Քո սարի սովոր
Սև-սև աչքերին:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սեր-որեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Դեռնեմ դարունքիդ,
Ծաղկած դարուն ես,
Սարի պես մեջքիդ
Կանդնած յար ունես:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սար-յարեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

(Անուշը մենակ)

Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ՝
Չեմ հասկանում դեպի ուր...
Դողում է պաղ նըրա ձենից
Իմ սիրտը սև ու տըխուր:

Դուք ել, սարի սիրուն ծաղկունք,
Թաքուն մի ցալ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն է արցունք,
Սիրտներըդ սև ու տըխուր:

Ա՛խ, ծաղիկներն են աշխարհքում
Տանջվում են միշտ Եսպես զո՛ւր,
Տըրտրվում են ու թառամում
Սիրաները սև ու տըխուր:

(Խուճապը հեռվից)

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Վառ ցավե՛ր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

ՅԵՐՐՈՐԴ ՅԵՐԳ

XII

Ձըմբան մի գեղեր կար մի հարսանիք,
Հըրճվում էր անդուսպ ամբոխը դյուզի.
Դյուզին ելին փջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից հետո լեն հըրապարակ
Բաց արին մեջ տեղն արձակ գըլխատան,
Ձուռնաչին փըչեց կոխի յեղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:
Հարա՛յ են տալի— «քաչի՛ հա, քաչի՛...»
Ու դուրս քաչեցին դոռով յերկուսին.
Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
Սնդրանիկ յեղբայր, դառնարած Մոսին:
Վող զյուզը կանգնեց պարըսպի նման,
Ջոկվեց, բաժանվեց յերկու բանակի,
Սմեն մի բանակն ընտրեց փահլեան,
Կանգնեց թիկունքին տըղերանց մեկի:
Գոռում են, գոչում յերկու բանակից.
— Մըրտապինդ կացե՛ք, մի՛ վախեք, տըղե՛րք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջրկերք:
Ու տաքանում են տըղերքը սաստիկ,

Փեղերը հավաք խըրում են դոռին,
Գետին են դարկում ձեռները հասալիկ,
Իրար են հասնում թափով մոլեղին...

Աղաթ կա սակայն են մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընոց աղաթին՝
Սմբոխի առջև իղիթն իր որում
Գետին չի դարկիլ ընկեր իղիթին:
Ու իրար բըռնած Սարոն ու Մոսին
Քաշում են, ընկնում խողապարկուկի,
Ընկնում են դետին, յեղնում միասին,
Դըժվար է իբրև հաղթել մեկ մեկի:
Իդուր է դոռում ամբոխը հարբած,
Ձուր սըրտատըրոյի նայում աղջիկներ,
Յեկ գուր է Անուշն իր շունչը կըտրած,
Ստուկ ու կանգնել ինչպես մի պատկեր:
Անուշը կանգնա՛ծ... Սարոն նըկատեց,
Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ.
Աչքերի առջև մըլարը պատեց,
Մոռացավ ընկեր, աղաթ ու աշխարք:
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արավ Սարոն, ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրեն:
Սմբոխը թափվեց հարս-հըրոցով,
Վեր թըոցրեց ջահել փահլեաններին,
Յեկ՝ ուրախության աղմուկ-դոռոցով
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:
Յընծության ձայնից, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու ոճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջրկերք:

XIII

Վեր կացավ Մոսին. իրեն կըտրատում,
— Թող դա՛, դոռում է, վոյր բըռնենք նորից,
Թե չե նամարդը, արևս եմ յերդվում,

Եւ չի պըրծնելու յերբեք իմ ձեռից :
Վե՛ր չի գցել ինձ... ինձ խարել ե նա...
Մեյդան բաց արե՛ք, թող մին եւ մեջ գա...»
Ու ամեն կողմից ուրախ հըրհոում,
Թունալի ծաղրով կանչում են, գոռում.

— Չե՛լավ, եդ չե՛լավ
Վեր չի գըցել դեռ,
Մոսին թո՛ւ ելավ—
Քողապարկուկ եր...
Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
Շատ եւ լավ կանի.
Մեջքը թա՛փ տըվե՛ք,
Թող մին եւ բըռնի...
Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
Մեջքը թա՛փ տըվե՛ք...»

XIV

Յե՛վ աղմըկալի հարսանքի տանից
Դուրս յեկավ Մոսին սաստիկ վիբավոր.
Արյուն ե կաթում սեակնամ սըրտից,
Գընում ե բշտապ, քայլերը մալոր :
— Ամո՛թ քեդ, Մոսի՛, թո՛ւք ու նախատինք,
Ամո՛թ քեդ նըման գոված իղիթին,
Մի անունդ հիշիր, մի բոյիդ մըտիկ,
Դեռ քու թիկունքը չեր տեսել դետին :
Ի՛նչպես վեր ընկար դո՛ւ-սարի նըման,
Յերբվոր նայում եր վողջ գյուղը կանգնած...
Դո՛ւ... կուչ գաս տակին Սարոյի ծընկան,
Նըրանից հետո յերեսս կանա՛նց...
Յեկա՞ծ եր ես բանն խկի քու դըլիսին...
Մաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դե մեռի՛ր ելի՛, գեռի՛նը մըտի՛ր,
Տանը վե՛ր ընկիր՝ ի՛նիկ պըտըտի՛ր...»

— Վա՛յ, վա՛յ, Մո՛սի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
Սըրանից հետո չե՛մ սիրիլ նըրան...
Վախենում եմ յես... դամեղ տեղը դիր...
Սիրտըս դողում ե տերևի նըման...»

Սընդրում եր լալով յեղբոր առաջին
Անդոր ու դալուկ իր քույրը չոքած,
Մոսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
Ուղում եր մորթել նըրան աչքը բաց :
— Դե իմ անունով յերգվիր, անըզգամ,
Վոր ել Սարոյին դու չես սիրելու.
Թե չե՛ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
Մինչև դաստակը սիրադ եմ խըրկու :
— Քու վտտի հողն եմ, Մո՛սի ջան, Մո՛սի,
Դու քու յեսիրին յերգո՞ւմ ես տալիս...
Յես ել Սարոյին չե՛մ սիրում՝ ասի,
Տեսնո՞ւմ ես չոքած ի՛նչպես եմ լալի...
— Դու խարո՞ւմ ես ինձ, սուտլի՛կ խարերա՛...
Չե՞ս սիրում ասիր. ես ի՞նչ ե հապա,
Են ի՞նչ ե հապա, վոր տեղն ենք մըտնում՝
Հեկեկում ես դու գեղչերվա մըթնում.
Են ի՞նչ ե հապա, վոր դու յերտղում
«Սարո ջան, Սարո՛, Սարո» յես ասում...
— Մոսի ջան, Մո՛սի, գլխովըդ շուռ գամ.
Ինձ մի՛ ըսպանիր, ինձ թո՛ղ ես անգամ.
Ել չե՛մ սիրիլ յես, յերբ դու չես ուղում,
Ել չե՛մ կանչիլ յես նըրան յերազում...
Ինձ մի՛ ըսպանիր, դամեղ տար հեռու...
Քու քույրը չե՞մ յես... իմ Մոսին չե՞ս դու...

XVI

Ու են հարսանքից թըշնամի դարձան
Ախպեր տըղերքը ես դեպքի համար.
Ընկեր, բարեկամ դընացին, յեկան,
Կըրկին հաշտության չեղավ մի հընար :

Անկողարում Մոսին ել վո՞ր Մոսին եր,
Վոր՝ աչքը դեռ բաց, ես լուս աշխարհում,
Իրեն հարազատ քրոջը տեսներ
Նամարդը ընկերի— Սարոյի զըրկում:
Գուցե զիշերս ել՝ իր հերսից անքուն՝
Ուղում ե ջահեյ քրքոջն ըսպանի,
Սարոյի անունն ու սերը թաքուն
Խանչալի ծերով սըրտիցը հանի:
Ո՞վ զիտի, գուցե հենց ես զիշեր ել
Իզիթ վոսոխներն, անհաշտ ու համառ,
Մեկմեկու հոտից վոչխար են քըշել,
Մեկմեկից վըրեթ սունելու համար:
Կարող ե նույնպես պատահել հանկարծ,
Վոր մեկի գեղը, արդյունքը հընձի,
Գիշերվա ժամին հըրով բըւրնկած,
Յերկնահաս բոցով սատղերը խանձի:

ՁՈՐՐՈՐԳ ՅԵՐԳ

XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նըման
Նոր են ջուր խրմած ձորից բարձրանում.
Քարոտ թիկունքից Չաթինդաղ լերան
Նոր ե պրեք պըտունպը հանում:
Գյուղում աղմուկով իրար են անցնում,
Կըտեր ծերերին կա՛յայք չավաքված,
Տըղերքը դեպի քարափն են վազում
Հըրացանների կիսերից բըռնած:

XVIII

Յեկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդովված տըղերանց միջին.
Մատը դեպի ձոր մեկնելով հանդարտ
Եսպես նա պատմեց զու տալով չիբխին:
— Ես զիշեր, կեսը կըններ զիշերվա,

Դեռ չեյի կըպցրել աչքըս տեղի մեջ.
Քունս ել ե կորել, ջանս ել են վազվա,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հա՛, հալալ կեսը կըլնեք զիշերվա,
Շունը վեր կացավ ես կըռան վըրա.
— Հեյ-հե՛յ, կանչեցի, ձեն տըվող չելավ.
Շունը զաղաղեց, շունը վեր կալավ...
Հե՛յ գիգի, ասի ինքըս իմ քիջում,
Ի՞նչ ե մընացել առաջվան տըղից.
Քընում եյի վաղ մենակ արխաջում,
Մի ձեն լըսելիս վեր թըռչում տեղից...
Են եյի ասում, քընել չեյի դեռ.
Կը լինեք դառը զիշերվան կեսը...
Յերկու մարդկային սև կերպարանքներ
Շան սոջև փախած՝ ցած իջան դեսը...»
Ես վոր լըսեցին, դես ու դեն ցըրված
Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
Ու մըտի տակին, ճամբիցը ծըռված,
Յերկու մարդու թարմ վոտնատեղ գըտան:

XIX

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Մարեր ու ձորեր վոտնատակ տըվեց
Չորան Սարոյին դըտնելու համար,
Վոր սարիցն իջավ, Անուչին փախցրեց:
Մի ամսից հետո տըղերքն յեկան տուն,
Գովելով նըրա արարքը ճարպիկ.
— Հալալ ե տըղին, ա՛յ իգիթություն,
Ահա թե ինչպես կը փախցնեն աղջիկ:
Մենակ Անուչի ախպերը— Մոսին
Մընաց հանդերում. յերդում կերավ նա,
Ուր վոր ել լինին՝ նըրանց միասին
Գըտնի՝ կոտորի՝ սիրտը հովանա:
Մընաց հանդերում: Յեվ ահա մի ոը,
Քաղվոր կանանց մեջ, մըթան հետ, թաքուն,
Շորերը պատռած, աըխուր, գըլխակոր
Անուչը ձորից յեկավ հորանց տուն:

— Աղջի՛, վա՛րդեիշազ, թե հողիդ սիրես,
Մի գարեիդ դըցի՛ր, տես ի՞նչ է ասում.
Աչքըս խավարի, տեսիլք դառնամ յես,—
Տեսիլք եմ տեսել գիշերս յերազում:
Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ,
Անբախտ Սարոյի վա՛չխարը կանդնած,
Լեզու յեր առել ու խաղ եր կանչում,
Ու խաղ եր կանչու՞մ ձեն ձենի տըված...
Մի գարեիդ դըցի՛ր, թե վրդով խընդաս,
Ես յերազն խկի յես լավ չեմ փորձել.
Վողորմած աստված, Քու գուռը բանաս,
Քու վրտի հողն ենք— Դու յես ըստեղծել.
Անբան դառները մութ ձորի միջին
Խաղ եյին կանչում ու ձենով լալիս,
Սարոյի նանն էլ նըրանց առաջին
Աղլուխ եր առել ու սրսր եր դալիս...
— Աղջի՛, Մա՛նիշակ, վաս բան ես տեսել,
Քարիս էլ, ահա, ենպես դուրս յեկավ.
Ես չարն, ես բարին... Սարոն է ես ել...
Տե՛ս, ահա, Սարոն սե ճամբեն ընկավ...
Ատոված խընայի ջահել-ջիվանին,
Ատոված խընայի իր անբախտ նանին...

XXI

Ու ման է դալի սարերը ընկած
Սարոն փախցըրած յեղջերվի նըման,
Որհասն առաջին, գընդակն յետեից,
Հանդերը՝ դըժուրք, ընկերը՝ դուշման:
Յեղ յերը յերեկոն հանգարտիկ ու լուս.
Սարերից իջնում, խավարն է պատում,
Նըրա բայաթին վողորում է տըխուր,
Ընկեր սարերին խոսում, գանդատվում.
«Բարձր սարեր, ա՛յ սարեր,
Ձեն եմ տալի «վա՛յ» սարե՛ր,

Դուք ել ինձ հեռ ձեն տըվեք,
Իմ դարդերի թայ սարե՛ր:

Վորս՞ եմ՝ բութեա ձեղ արած,
Ձեր ձորերին, ձեղ արած,
Կուզեմ կորչեմ անդյուման,
Ես աշխարհքից բեզարած:

Կորչեմ բեզար դադարդյուն,
Քար-սարեսար դատարկուն,
Մեռնեմ պըրծնեմ ես որից,
Բալքի առնեմ դադար-քուն:

Ա՛խ, կը մեռնեմ՝ ամա նա
Վա՛յ թե հանկարծ իմանա,
Յես սղատվեմ ես ցավից,
Աչքը լալով նա մընա»:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՐԳ

XXII

Լալիս է Անուշն յերեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խոսք չեն գըտնում ստեն անարդված,
Տարած-յետ բերած, անբախտ աղջըկան:
Ատոված խընայեց՝ կոպիտ ախպերը
Հեռու հանդերից դեռ տուն չեր դարձել,
Իսկ խոժոռագեմ ալետր հերը
Ըսկըսավ փըրփըրած թըքել, անիծել:
— Դո՛ւրս գընա, կորի՛, ա՛յ լիր անըզա՛մ,
Սե ու սուղ վինի թադ ու պըսակըդ.
Կորի՛, չերևաս աչքիս մյուս անդամ,
Գետինը մըտնի յերկար հասակըդ:
Տեսա՛ր, վոր նըրան ասում է Մոսին,
Ձեն ուզում, տեսար, նըրան հերն ու մերդ,
Դու քա՞նի գըլուխ ունիս քո ուսին,

Վոր վեր ես կենում փախչում նրա հետ :
 Խրոնված գյուղացիք կըտուրից իջան
 Մեղմելու կոպիտ բարկությունը հոր,
 Հայտնելից նույնպես գյուղի քահանան,
 Մի պատկանելի հըսկա ալեոր :
 — Դո՛ւրս գընացեք, դո՛ւրս, գոչեց տերտերը,
 Անուշը թողեք ուղիղն ինձ ասի,
 Թողեք նա հայտնի իր միտքն ու սերը,
 Նրբանից հետո բանը կը պարզի :
 Մի՛ լար, իմ աղջիկ, ինձ խոստովանի՛ր,
 Մերո՛ւմ ես նըրան, քու կամքո՛վ փախար...
 Յեթե սիրում ես՝ ել դարձ մի՛ անիր,
 Պիտի պըսակեմ յես ձեզ անպատճառ...
 — Ի՛նչ են հառաչում... են ո՞վ եր, մի տե՛ս,
 Վոր դուրսը հանկարծ աղմըկեց էսպես...
 Ո՞վ է ըստանել... Մոտի՞ն... ո՛ւմ... ո՛ւր...
 — Անո՛ւշ, հե՛յ Անո՛ւշ... ջուր հասցրե՛ք,
 ջո՛ւր...»

XXIII

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
 Յերկընքի մըթնած ամպերից իջներ,
 Ինչպես փոթորիկ սաստիկ սըրընթաց,
 Գյուղից սըլացան մի խումբ կըտրիճներ :
 Յավից տաքացած ել բան չեն հարցնում,
 Թըռչում են, ասես ահից հալածված,
 Ու նըրանց առջև ահռելի բացվում,
 Թըշում է ձորը արյունով լըցված :
 Գյուղը դատարկվեց մի աղընթարթում,
 Քարափի գըլխին կանգնած անհամբեր,
 Լուռ, սըրտատըրով ահանջ են դընում,
 Նայում են ներքև... ձեն չի գալի դեռ :
 Դերեղն է մենակ անդընդում՝ հուզված՝
 Խըլածայն վողբով սողում՝ դեպի ցած :

XXIV

Ու, մարդասպանը դուրս յեկավ ձորից,
 Դեմքը ալլալված, քալվածքը մուրր :
 Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
 Յեվ կերպարանքը վտխված է բոլոր :
 Առանց նայելու մարդկանց յերեսին,
 Առանց խոսելու, սեակնած, դաժան,
 Մոտեցավ սրահին, կախ տըվավ սընին
 Սև հըրացանը—սև ոճի նըման :
 Պապանձվեց նույնպես ամբողջ մեխված,
 Վոչ վոք ծըպըտալ չի համարձակվում,
 Մենակ մի հողի անդուսպ կատաղած՝
 Հարա՛յ է կանչում, յերեսը պոկում :
 Մեռած չորանի պառավ նանն է նա՝
 Յավից խելադար բառաչում, լալիս :
 Տարբաբխտ ծընող, վազում է ահա,
 Ձորիցն է տըխուր դոտոցը դալիս :

XXV

Սըզավոբ կանայք նըրա յետեից
 Հարա՛յ կանչելով ձորը վաղեցին,
 Իրենց կորցրածն էլ հիշելով նորից՝
 Դիակի շուրջը կարդով շարվեցին :
 Իդիթին վայել սըրտատուռ վողբով
 Լաց ու կոծ արին ձեն ձենի տըված :
 Տըղերքն էլ մըթին, լուռ ու գըլխահոր,
 Մընացին մոտիկ քարերին նըստած :
 Վողբացին անչունչ դիակի վըրա,
 Անտեր մընացած վոչխարի մասին,
 Անսիրտ անեծքով հիշեցին նըրա
 Անձար մընացած խեղճ յարի մասին :
 Յեվ նըրա մասին, վոր ընկերները
 Հանդը գընալիս Սարո կը կանչեն,
 Վոր սարից փախած սոված շըները
 Կըտերը պիտի վոռնան, կըլանչեն :
 Ծանըր չոմբախը, գըլուխը մեխած,

Ոճորքում դըրած պիտի մըրտաի,
Յերկար խանչալը, պատիցը կախած,
Պատենում մընա ու ժանդը պատի...
Վոր հով սարերի սովորած նանը
Ել սար չի դընալ առանց Սարոյի,
Սև շորեր հագած կը նըստի տանը,
Անցած որերը միտը կը բերի:
Յեվ ամեն մի խոսք, մի հիշողութիուն
Կըտրատում էյին սիրտը ծեր նանի,
Յեվ աղաչում էր նա մեռած վորդուն
Մի անգամ խոսի, աչքը բաց անի:
— Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,
Իմ որ ու արև, կյանք ու ջան՝ վորդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ յես խըլում,
Թըչնամի՛ վորդի, դավաճա՛ն վորդի...»
Բայց չէյին բացվում աչքերը փակված,
Շուրթերը սառել, չորացել էյին,
Նըրանց արանքից ատամները բաց
Միպտակ շարքերով յերևում էյին:
Ու նա կատաղած՝ հանդուգն անեծքով
Ծառս յեղավ դուշման յերկընքի զիմաց,
Յեվ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
Յեւ լալիս էյին ձեն ձենի տըված...
«Կարմիր արևից ընկած Սարո ջա՛ն,
Կանանչ տերևից ընկած, Սարո ջա՛ն...
Արևս հանգավ, Սարո ջա՛ն,
Գիշերս ընկավ, Սարո ջա՛ն...»
Գիշերը ընկավ, թանճրացավ մութը,
Ու նըվաղեցին ձեները տըրտում,
Հողնեցի՛ն, հանդա՛ն... Ծերուկ Դերեդը
Սըզում էր մենակ խավար անդընդում:

Սըզվոր գետը
Ծեր Դերեդը,
Սիրտը քըրքըրած,
Ջուրը փըրփրած,
Քարոտ ափին,

Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

XXVI

Յեվ մի քանի ընկեր-տըղերք
Ջորում, դետի յեգերքին,
Փոս փորեցին ու սըրտաբեկ՝
Հողին տըվին հովվի գին:
Ծառ ու ծաղիկ՝ սըվսըվալով
Բույր խընկեցին դյուրեկան,
Ծեր Դե-բեդն էլ ահեղ ձենով
Յերգեց վըսեմ շարական:
Ու տըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան դեպի տուն,
Ջորում թողած մի սև բըլուր,
Մի գերեզման անանուն:

ՎԵՅԵՐՈՐԴ ՅԵՐԳ

XXVII

Գարունը յեկավ, հավքերը յեկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հաղան.
Մի աղջիկ յեկավ, մի մենակ քաղվոր,
Գետի յեգերքին շըրջում է մուր,
Շըրջում է մուր, խընդում ու լալիս,
Յերգեր է ասում ու ման է դալիս:

— Սիրուն աղջիկ, ի՞նչ էս լալիս
Եղպես մենակ ու մուր,
Ի՞նչ էս լալիս ու ման դալիս
Ես ձորերում ամեն որ:
Թե լալիս էս՝ վարդ էս ուղում՝
Մայիս կը գա, մի քիչ կաց,
Թե լալիս էս՝ յարդ էս ուղում,
Ա՛խ նա դընա՛ց, նա դընա՛ց...
Արտասովեւով, լալով եղպես

Յետ չես դարձնի ել զերիդ,
Ինչո՞ւ իղուր հանդընում ես
Ձահել կըրակն աչքերիդ:
Նըրա անբախտ շիրմի վըրա
Պաղ ջուր ածա աղբյուրի,
Դու ել գընա նոր սեր արա,
Եսպես ե կարգն աշխարհի:

— Ենորհակա՛լ եմ, անցի՛մը արայեր,
Ստոված գահի քու յարին.
Համբիդ վերջում կանգնած ե դեռ
Մնուչ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սերը
Վայելեցեք անթառամ,
Ինձ արցունք ե տվել տերը,
Յես պիտի լամ, պիտի լամ...»

Ու ման ե գալիս,
Յերգում ու լալիս:
Յերգերը անկապ, յերգերը տըխուր,
Սըցունքի նման հոսում են իղուր.
Բայց լալիս ե նա ու յերգեր ասում,
Ու միշտ են անմիտ տըրտունջն ե խոսում,
Թե ինչպես հանկարծ աշխարքը փոխվեց,
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
Մարերը մնացին վորը ու անչորան,
Թե ինչպես հանկարծ նա գընաց հեռու,
Ել չի՛ դառնալու, ել չի՛ դառնալու...

«Յե՛տ դառ, յե՛տ, իզի՛թ,
Յետ դառ անիրա՛վ,
Կարտած յարիդ
Աչքը ջուր դառավ:
Վոչխարդ են սարով
Շուռ տուր, տո՛ւն արի,
Փախի՛ր զիչերով
Ու թաքուն արի...»

Մ՛խ, են կանանչ սարի լանջին
Ո՞վ ե քընած են տըղեն,
Վըրեն քաշած սե յափընջին
Կոււք հանած են տըղեն...
Ձա՛ն, իմ յարն ե, ջանին մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
Մարի լանջին, հովի միջին
Մուչ-մո՛ւչ, անուչ մըրավել:

Վե՛ր կաց, վե՛ր, իզի՛թ,
Վե՛ր կազ, անիրա՛վ,
Վոչխարդդ բեր կիթ,
Որը ճաշ դառավ...
Արի՛, ջա՛ն, արի՛,
Գու գալուն մեռնեմ,
Թուխ չորան, արի՛,
Կարտըս տունեմ...

Տեսե՛ք, տեսե՛ք, դափ ու զուռնով
Ի՞նչ հարսնիք ե դուրս գալի,
Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով
Ձի յեն խաղում, չափ տալի...
Աղջի՛, աղջի՛, մըտիկ արե՛ք,
Ես ի՞նչ տեսիլք յես տեսա.
Ո՞վ եր տեսել եսպես հարսնիք—
Վոչ հարս ունեն, վոչ փեսա...

Բերում են հըրեն
Ամա՛ն, մեր տան դեմ...
Վե՛ր գըրեք վըրեն
Հյուսերըս քանդեմ...
Յես ել եմ գալի՛ս,
Եդ ո՞ւր եք տանում...
Ինձ ել թաղեցեք
Իր դերեղմանում...

Մ՛խ, չե՛, ոմա՛ն, ասում են դա
Մի զիակ ե, յո՛ւռ, հոտած,
Արյունը չոր դեմքի վըրա,

Աչքերն անթարթ, սիպտակած :
Նա սիրուն եր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա դալիս եր ցողոտ, շաղոտ
Հանաքներով ու խաղով...

Արի՛, ջա՛ն իզիթ,
Արի՛, անիրա՛վ,
Կարոտած յարիզ
Աչքը ջուր դառալ :
Եւ մի՛ ուշացնի,
Յես շատ եմ կացել,
Եւ մի՛ լացացնի,
Յես շատ եմ լացել...

Տե՛ս, կը խըռովե՛մ,
Լաց կըլեմ յես ե՛լ...
Չեմ խոսիլ քեզ հե՛տ...
Չեմ սիրիլ քեզ ե՛լ...»

XXVIII

Անլըռելի վըշվըշում ե
Պըզտոր ջուրը Դերեզի,
Նըրա ափին կանաչում ե
Մենակ շիրիմն իզիթի :

Նըրա շուրջը հեղ սիրուհին
Թընդացնում ե վողբ ու լաց,
Չեն ե տալիս իր Սարոյին
Ու պըտըտվում մոլորված :

Ու հոսում ե գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջկա,
Բայց իր սիրած տըղան յերբեք
Չըկա՛, չըկա ու չըկա...

Վըշվըշում ե գետը— վո՛ւշ, վո՛ւշ,
Ու հորձանք ե տալիս հորդ,
Ու կանչում ե՝ «Արի՛, Անո՛ւշ,
Արի՛, տանեմ յարիզ մոտ...»

— Անո՛ւշ, ա՛յ աղջի՛կ, Անո՛ւշ, տո՛ւն արի...»
Կանչում ե մերը վերեկից, կանչո՛ւմ,
Լո՛ւռ են ձորերը, լո՛ւռ են ահուկի,
Դուշման Դերեզն ե մենակ մըռընչում :

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սերին, քու յարին,
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ իզիթ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

XXIX

Համբարձման գիշեր, են դյուլթիչ գիշեր,
Կա հըրաշալի, յերջանիկ վայրկյան .
Բացվում են վոսկի յերկընքի դըռներ,
Ներքե պապանձում, լըռում ամեն բան,
Ու աստվածային անհաս խորհըրդով
Լըջվում բովանդակ Նըրա սուրբ գըթով :

Են վեհ վայրկենին, չըքնաղ գիշերի՛
Յերկընքի անհո՛ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են դալիս,
Գալի՛ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՛ւ, լաղուր կամարում :

1901

ԼՈՒԵՑԻ ՍԱՔՈՆ

Ա

Են Լոուու ձորն ե, ուր հանդիպակաց,
Ժայտերը՝ խորունկ նոթերը կխաած՝
Դեմ ու գեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:

Նրբանց վռաքերում՝ գազազած դալի՝
Գալարվում ե գիժ Դե-Բեզը մոլի,
Քելապար թրոշում քարերի գլխով,
Փըրվուր ե թըրում անզուսպ յերախով,
Թըքում ու գարկում ժեռուտ ափերին,
Փընտրում ե ծաղկած ափերը հին-հին,
Ու գուտում գիժ-գիժ.

— Վա՛շ-վի՛շշ, վա՛շ-վի՛շ՛շ...

Մուժ անձափներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ՝ հըռուխտ ձայներով
Դեի հառաչքին արձաղանք տալի,
Ծաղրում են նրբա գոռոցն ահուկի
Ու կըրկնում գիժ-գիժ.

— Վա՛շ- վի՛շշ, վա՛շ-վի՛շ՛շ...

Գիշերը լուսնի յերկչոտ շողերը
Հենց վոր ժըմնում են են խալար ձորը՝
Ալիքների հեռ խաղում դողալով,
Անհայտ ու մըռայլ մի կյանքի գալով՝
Վողի յե առնում ամեն բան ենտեղ,
Շընչում ե, ապրում ե մուժն ե ահեղ:

Ես տախտի վըրա ազոթում մի վանք,
Են Ժայռի գըլխին հըսկում ե մի բերդ,
Մուժ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կըռինչն ե տարածվում մերթ-մերթ.
Իսկ քարի գըլխից, լուռ, մարդու նըման,
Նայում ե ձորին մի հին խաչարձան:

Բ

Են ձորի միջին ահա մի տընակ:
Ենտեղ այս գիշեր Մաքոն ե մենակ:
Հովիտ ե Մաքոն, ունի մի ընկեր.
Սատանի նըման՝ նա յեկ ես գիշեր
Գընացել ե տուն: Մարերի չորա՞ն—
Գյուղիցը հեռու, հազար ու մի բան.
Ով գիտի՝ պարկում շընայի՞ր շըկար,
Ա՞ղ եր հարկավոր վոչխարի համար,
Ուլից գոքանչի ձըվածե՞ղ ուտել,
Թե նըչանածին շատ եր կարտաել—
Վոչխարը թողել՝ գընացել ե տուն:
Այն ինչ՝ համկնիլը հենց առաջուոր
Դեպի սարերը քըչեց իր հոտը:
Ու Մաքոն անբուն,
Թաց աըրեխները հանել ե, քերել,
Գուլպան բուխարու վըրա կախ արել
Ու թինիլը արվել
Մեն-մենակ թըթվել:

Գ

Թեկուլ ե մենակ լինի վարախում,
Աժդահա Մաքոն ընչի՞ց ե վախում:
Հապտ մի նայի՞ր հըսկա հատակին,
Վո՞նց ե մեկնըվել: Ատես ահադին
Կաղնրթի լինի անտառում ընկած:
Իսկ յեթե տեղից վեր կացավ հանկարծ,
Գըլուխը մեխած մահակը ձեռին՝

Ձեն արավ, կանչեց զալում շրներին
Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպես սար,
Ենժամ կլմանաս, թե ընչի համար
Թե՛ դող, թե՛ դազան, հենց դատարկ վախից,
Հեռու յեն փախչում նըրա փարախից:

Ու իրեն նրման իրեն ընկերներ
Սպրում են սիրով յերեսուց ի վեր:
Սատճու դիչերը դարխա են հանդեն,
Փետ են հավաքում, վառում են ոգեն,
Ծըհուն ու պրկուն խառնում են իրար,
Ածում են, խաղում, խընդում միալար...

Դ

Բայց խուլ ու խավար ոգում ես գիշեր
Մենակ և Սաքոն ու չունի ընկեր:
Բուխարու կողքին լուս թինկը տըված
Մըտածում ե նա... ու մին ել, հանկարծ,
Վորակցից վարակ, են ձորի միջին
Միան յեկան տատի զըրույցները հին...
Միան յեկան ու մեր Սաքոն աղամա
Սկսավ մըտածել չարքերի վըրա,
Թե ինչպես ուրախ խըմբով, միասին,
Ծուռը վոտներով, գիշերվան կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած,
Յերևում են միշտ միայնակ մարդկանց...
Կամ ինչպես քաջքերն այրերի մըթից,
Յերբ նայում ե մարդ քարափի գըլից,
Կամ թե ուչացած անցնում ե ձորով,
Խարում են, կանչում ծանոթ ձայներով,
Ու մարդկանց նըման խընճույք են սարքում,
Չուռնա յեն ածում, թըմբուկ են զարկում...
Ու տատի խոսքերն անցյալի հեռվից
Ուրվածայն, յերկչոտ հընչեցին նորից:

— Կասեն՝ Սաքո՛, մեղ մոտ արի,
Արի՛ մեղ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք դալի,
Սիրո՛ւն—ջահել հարսն—աղջիկ:

— Ինձ մոտ արի՛ ձվածեղ անեմ...
— Ինձ մոտ արի՛ բըլիթ տամ...
— Յես քու հոքիքն... յես քու նանն եմ...
— Յես ել աղիղ բարեկամ...
— Սաքո՛, Սաքո՛, մեղ մոտ արի.
Ես աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք դալի,
Տարա—նի—նա՛... տարա—նի—նա՛...

Ու խուլ պատկերներ տըգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Ծանրաշարժ յեկան Սաքոյի գիմաց
Յերևույթը յեղան, անցնում են կամաց:
Խավար ու դանդաղ, ըստվերների պես,
Չար ժըլխտներով ժանտ ու սևերես...

Ե

Սըրընթաց պախրա՞, թե դայլ գիշատիչ
Շեշաակի անցալ փարախի մոտով,
Մյծյա՞մը հանկարծ մոտակա ժայռից
Մնդունդը մի քար գըլորեց վոտով,
Գիշերվան հովից տերե՞վն եր դողուք,
Յերկչոտ մուկի՞կը վազեց պուճախում,
Թե՞ վոչխարների թույլ մընչոցն եր այն,—
Սաքոյին թըվաց, թե մի վոտնաճայն
Յեկավ ու կանգնեց փարախի վըրա,
Կանգնեց ու լըռեց...
Ականջ զըրավ նա...

— Ո՞վ հող թափեց բուխուրակից...
 Են ո՞վ նայեց լիսածակից...
 Ես ո՞վ կըտրեց անցավ թեթև,
 Շունչ ե քաշում դրոսան յետև...
 Ո՞վ ես, եհե՛յ... Ի՞նչ ես անում.
 Ի՞նչ ես լրուել, ձեն չես հանում...»

Պատասխան չըկա. լրուության միջում
 Զորագետն ե միայն մըրափած վըշում:
 — Հա՛, խմացա, Գեվոն կըլնի.
 Ի՞՞՞ շան ահից ո՞վ սիրա կանի...
 Վախեցնում ե... հա՛, հա՛, հա՛, հա՛, ...
 — Գեվո՛...

Ձեն-ձուն չըկա:

Միայն ահափոր լրուության միջում
 Զորագետն ե խուլ, մըրափած վըշում:
 Յեկ ո՞վ կըլինի դարթուն այս ժամին.
 Գընած ե աշխարհ, քընած ե քամին.
 Անքուն չարքերը չեն միայն քընած,
 Վըխում են ուրախ՝ ձորերը բըռնած,
 Խավարում կազմած դիվական հանդես
 Վաղում, վաղվըդում, ըստվերների պես,
 Մինչև վոր մենակ մի մարդ կըդանեն,
 Ճիչով-բըրբիջով... փարախը մըտնեն...

Աչքերը հանդուդ կըբաղին հառած՝
 Ծանրը ե շընչում հովիվն ահառած,
 Ու վայրի հողին լեռնական մարդու
 Արեկոծում ե կասկածն ահարկու:
 — Ձե՛, բամին եր են... են դիլի չըվաբ...
 Են աստղեր եյին աչքերի տեղակ,
 Վոր լիսածակից ներս եյին ընկել...»
 Ուզում ե վերև մըտիկ տա մեկ ել՝
 Ու սիրա չի անում:
 Ականջ ե դընում...

Գալիս են կըբղին թեթև, կամացուկ
 Դրոսան յետևից փրսփրսում ծածուկ.
 — Ետեղ ե նա,
 Հա՛, հա՛, հա՛, հա՛.
 Տե՛ս, տե՛ս, տե՛ս, տե՛ս.
 Նայիր ետը՛ս,
 Մըտիկ արա՛,
 Հա՛, հա՛, հա՛, հա՛...»
 — Սաքոն շարժիկից փըշաքաղած,
 Դեպի շեմքը նայեց, դողաց...
 Շըրք՛իկ... հանկարծ դուռը բացվեց,
 Թուրք կանանցով տունը լըցվեց,
 Տունը լըցվեց թուրք կանացով,
 Ճիչ-դողողով, հըրհըողողով...

ՅԵ

Ահուկի ձոր ե: Մի կըտոր լուսին
 Նայում ե դադտուկ, թաղչում ամպերում:
 Են մութ, ահափոր դիչերվա կիսին
 Վաղում ե Սաքոն Լոռու ձորերում:

Չարքերը ընկած նըրա յետևից,
 Հերարձակ խըմբով, ճիչ-աղաղակով՝
 Հասնում են մեջքին, բրոնում են թևից,
 Չարկում են, դարկում ո՞՞՞ մըրափակով...
 Գաջքերն ել այրից գուռնա-դըհուրով
 Ճըչում են, կանչում ծանոթ ձայներով:

— Սաքո՛, Սաքո՛, մեկ մոտ արի,
 Արի մեկ մոտ հարսանիք,
 Տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք դալի՛
 Սիրո՛ւն, Չահել հարսն-աղջիկ:

— Ինձ մոտ արի՛ ճըվածեղ անեմ...
 Ինձ մոտ արի՛ բըլիթ տամ...
 Յես քու հոքիրն... յես քու նանն եմ...
 Յես ել աղիդ բարեկամ...

— Մաքո՛, Մաքո՛, մեզ մտն արի.
Ես աղջիկը, տե՛ս, ինչ լավն աս...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք դալի.
Տարա-նի-նա՛... տարա՛-նի-նա՛...»

Այն ինչ Դերեզից ալքեր են թռչում,
Ալիքներն յեղնում, ալիքներն ուռչում,
Խափարի միջին ծրփում են կայտառ
— Բռոնեցե՛ք, փախա՛վ Մաքոն խելագար...»

1889

Մ Ա Ր Ո Ն

Ս.

Մեր գյուղն են ե, վոր հըպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին
Ձեռը տըված ճակատին
Միտք ե անում տըխրազեմ.
Ի՛նչ ե ուզում՝ չը գիտեմ...

Պաս չենք ենտեղ մենք ուտում,
Ու ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք դնում ամեն օր.
Բայց միշտ ցավեր նորանոր,
Միշտ մի աղետ, մի վընաս
Գալիս են մեզ անպակաս:

Ահա պատմեմ ձեզ մի դեպք,
Մի պատմություն, վոր յերբեք
Հիշատակով տըխրալի—
Սըրտիս հանգիստ չի տալի:

Բ

Մեր գյուղից վեր մինչ ետոր
Կա ուռենի մի սրզվոր:
Մեծ անտառից նա զատված՝
Մարդու կայնից ազատված՝
Կանգնած ե գեռ ու շողին
Հով ե տալիս մըջակին:
Գիժ, բեռնային մի վըտակ
Խոխոջում ե նըրա տակ,

Խաղում, կանաչ մարդերին :
Են առվակում կես որին,
Յերբոր շողից նեղանում,
Գրնում էյինք լողանում :
Տըկլոր, աշխույժ խըմբակով,
Աղաղակով, աղմուկով
Խաղում էյինք, վաղվըղում
Գույն-գույն մանրիկ ավազում :
Կամ հետևում հև ի հև
Թիթեռնիկին վոսկեթև,
Ու միշտ հոգնած ժամանակ,
Են մենավոր ծառի տակ
Նրստում արխուր մի քարի,
Գերեզմանին Մարոյի...

Մարո՛, անրա՛խոտ, վաղամե՛ռ,
Դու մանկուլթյան իմ ընկեր,
Վո՛րքան ենք մենք խաղացել,
Իրար սիրել ու ծեծե՛լ...

Գ

Ժիր եր Մարոն, դուրեկան,
Նոր եր իննը տարեկան,
Նրբանց տունը յերբ մի որ
Յեկան յերկու յեկավոր :
Ու Մարոյի մայրիկը
Յերբոր բերավ, դրավ լիքը
Խոնչեն նրբանց առաջին,
— Ենորհակալ ենք մենք, ասին .
Տաշաներըլ լի հաց լինի,
Դուռներըլ միշտ բաց լինի .
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տրվեք մեզ ձեր տանից...»
Են ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արաղի
Լիքը բաժակն ու ասաց .

— Կամքըլ լինի, տեր աստված...»
Նըշանեցին Մարոյին,
Տըվին չորան Կարոյին :

Դ

Չորան Կարոն սարերի
Մի հովիվ եր վիթխարի .
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու զարդանդ եր դալիս .
Բայց զոքանչը անսահման
Միրում, փարում եր նըրան :
Շատ եր սիրում և Մարոն .
— Լալն ե, ասում եր, Կարոն,
Բերում ե ինձ ամեն որ
Կանիեա, չամիչ ու խընձոր...

Ե

Մին ել Կարոն աղմուկով
Յեկավ դուռնով, թըմբուկով .
Ու Մարոյին զուգեցին,
Յերեսին քող ձըքեցին,
Հինա գըրին ձեռքերը...
Յեկավ խաչով տերտերը,
Տարավ ժամում կանգնեցրեց .
— Տե՛ր ես, վորդյա՛կ, հարցըրեց :
— Տե՛ր եմ, ասով մեր Կարոն,
Լուս կանգնած եր միշտ Մարոն...
Հայրն ել յեկավ ու ծեսին
Եսպես որհնեց իր փեսին .
— Ջաղացիդ միշտ հերթ լինի,
Մեջքըլ ամուր բերդ լինի...
Իսկ յերբ հնչեց «տարան հա՛»-ն,
Նըրան փեսի տուն տարան :
Պրսակեցին Մարոյին,
Տըվին չորան Կարոյին :

Թե դըրբացի չար ջանքով,
Գիր ու կապով, բըժժանքով
Մանուկ սիրտը կըտրեցին,
Կամ թե նըրա հանդերձին
Են անհողի չար ջաղուն
Քըսեց գիլի ճըրագուն...
Եդ չիմացավ վոչ վոք պարզ,
Միայն փոքրիկ նորահարս
Մարոն ատեց իր մարդուն.
Փախավ, յեկավ յետ հոր տուն:
Յեկավ լացեց նա վըշտոտ.
— Յես չեմ դնալ նըրա մոտ.
Յես սիրում եմ մայրիկին,
Յես չեմ ուզում լինեմ կին...»

է

Հայրիկն ենժամ բարկացավ,
Ծեծեց նըրան ու ասավ.
— Դո՛ւրս իմ տանից, սեւերե՛ս,
Յես չը նայես դեպի մեզ,
Վոտ չը դնես ել տունըս,
Մըրտեցիր անունըս...»
Լալով, ծածկած իր դեմքը,
Թողեց Մարոն հոր չեմքը:

Ը

Ու հալածված իր հորից,
Փախած չորան Կարոյից,
Սոված, պատած շորերով,
Կորչում եր նա որերով:
Կուչ եր գալիս խըղճալի
Ոջախի շուրջն ոտարի
Կամ թափառում մեն մենակ
Մեր հանդերում շարունակ:

Շատ ամիսներ անց կացան...
Դիմաց սարից մի չորան
Ձեն եր տալիս մի որ մեզ,
Թե՛ իմացե՛ք, վոր եսպես
Կարմիր շորով մի խիզան
Ընկավ ձորը, մի կածան...»
Դուրս թափվեցինք մենք դժուրից,
Հեռու կանգնած, յերկյուղից,
Տեսանք, ահեղ են ձորում
Վոնց եր լալիս ու դողում
Մարոյի հայրն ալեոր,
Մայրը ճըշում սըզվոր:
Շատ լաց յեղավ և Կարոն...
Մեռա՛վ, դընաց մեր Մարոն:

Ժ

Սակայն անբախտ նըրա դին
Պապի կողքին չը դըրին:
Գյուղից հեռու մինչ եսոր
Կա ուռենի մի սըզվոր:
Են մենավոր ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,
Առանց ժամ ու պատարագ
Մեջը դըրին Մարոյին,
Են սե քարն ել տաշեցին,
Բերին վըրեն քաշեցին:

ԺԱ

Շատ եմ տեսել, յերբ սըզվոր
Մայրը մենակ, սեաչոր,
Կորանալով են քարին՝
Ձեն եր տալիս Մարոյին...
— «Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՛ն,

Ո՞վ անիծեց, Մարո ջա՛ն,
Ո՞ւր փախար դու, Մարո ջա՛ն,
Տուն արի՛, տո՛ւն, Մարո ջա՛ն,
Խո՞ր ես քընել, Մարո ջա՛ն,
Ձեռ զարթնում ել, Մարո ջա՛ն...»

Կորանալով են քարին
Ձեն եր տալիս Մարոյին .
Խունկ եր ծըխում, մոմ վառում,
Վոր գիշերվան խավարում .
Փայլփրում եր մեն-մենակ
Հեռվից յերկար ժամանակ :

1887

«ՀԱՌԱՉԱՆՔ»-ԻՑ ՀԱՏՎԱԾՆԵՐ

I

Մի քանի տարի սըրանից առաջ,
Յերբոր հայրենիք էյի յես գնում,
Այն մըթին ձորում, ուր վոր քաղցրավաչ
Մեղեգու ձայնով Դերեզն ե վազում,

Փայտերի դլխին ուր բազկատարած
Ազոթք են անում Հաղբատ-Սանահին,
Գիշերը հասավ, ու յես դադարած
«Ղոնախ» մնացի ծեր այգեպանին :

Նա տրտնջալով ծերության ընդդեմ
Գըթըթում եր յուր ծառերի տակին .
«Բարի որ, պապի», ու խոժոռաղեմ
Ծերը յետ նայեց ձեռքը ձակատին :

Մի կասկածավոր ու խիտ հայացքով
Ձնեկուց հետո հոնքերը կիտեց,
Սաստիկ սառնությամբ պատասխան տալով
Դեպի յուր դափեն ինձ առաջնորդեց :

Նրա յետեից անխոս զընացի,
Փընթիբնթացնում եր նա իմ առաջին—
«Մեր բանը պըրծավ, յերբ ես ձորերի
Մըտերը սրանք ել յեկան սովրեցին :

Սա յեր մնացել, սա յել անպատճառ
Մեր դլխին մի նոր կրակ ե բերում,—
Նոր դրած բեզար կամ իզուր մի շառ,
Թե չե ինչ ունի ես խուլ ձորերում :

Յեկած կը լինի, վոր խաբար տանի,
Թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա,
Ով յուր դռանը անասուն ունի,
Կամ վորի կնգա աչքերում յուղ կա:

Կամ հին գերեզման քանդող կը լինի,
Կամ թե կը համրի ծմակի ծառերը,
Կամ նրա համար, թե որը քանի՞
Չու յեն ամում մեր գյուղի հայերը...

Ո՞վ դիտի, հիմա ով վեր է կենում
Գլխին ես տեսակ գղակ է դնում...»
Լուսեց ծերունին ծանրը արնքալով
Ու առաջ գնաց թին դիմհար տալով:

Իսկ յերբ վոր հասանք աղքատի դափին՝
Ինձ հրավիրեց, և յուր ունեցած
Շորի կտորը փուսեց իմ տակին,
Ինքը առաջիմ մնաց լուռ կանգնած:

Ճերմակ գյուխը սպա բարձրացրեց,
Հոնքերի տակից ազդու նայելով,
Վորոտող ձախով ախպես հարցըրեց
Չգլխանք ու դայրույթն հաղիվ պահելով:

— Աղա՛, հարցնելը ամոթ չը լինի,
Հրամանքդ ի՞նչ մարդ ես, կամ վորտեղից ուր...
Յեկ չը սպասելով մի պատասխանի
Ինքը շարունակ խոսեց կցկտուր —

«Ով էլ վոր լինիս բարով ես յեկել,
Անխորձանք լինի քո ճանապարհը,
Աստված կյանք տա ձեզ, վոր հարցնեք դուք էլ,
Թե ինչ ցավ ունի խեղճ ունչպարը:

Աղքատ մարդիկ ենք, մեր ձորերի մեջ
Անց ենք կացնում մեր սե-սե որերը.
Թե վորքան ենք դուրի, վորքան ենք մենք խեղճ
Եղ հաստատ դիտե ինքը—միայն տերը:

Բայց դու յեկ խելոք մի մարդ ես դիտուն,
Քո բարի աչքով տեսնում ես էլի,
Տկլոր ու սոված եսպես տարին բուն
Քարի-հողի հետ կռիվ ենք տալի:

Թե վոր ձեռներս էլ մի բան է ընկնում
Չենք կարողանում բերանս հասցընենք...
Եսքան տանջվելով քրտինք ենք անում,
Ել են սևերեսն, էլ են սովածն ենք...

— Ի՞նչիցն է, պապի, ախքան ճոխ յերկրում,
Ինչպես ասում են, դժվար եք ապրում,
Վարձատրություն չեք ստանում հողից,
Թե նեղություն է դալիս մի տեղից»:

— «Մեր նեղությունը... քեզ ինչպես հայտնեմ,
Թող հաստատ լինի մեր թաղավորը.
Յես ընչի տեր եմ, խոսեմ նրա դեմ,
Բայց աստված կտրի մեր քաշած որը...»

Ի՞նչ անես, ախպե՛ր, ումնից խոռվես,
Պետք է համբերել, թե լավ թե ոսալ...
Բայց դու չասցիր հրամանքդ ով ես,
Ուզում եմ քեզ հետ լիտոիրտ խոսալ»:

— Յես քաղաքումը կարդում եմ, պապի:
— Հա՛, տիրացու յես, բա ինչու չասիր...»
Կանչեց ծերունին ու իրեն դափի
Դռնից հեռացավ. «մի քիչ սպասիր»:

Մըթնեց: Ծերունին լուս չարչարանքով
Մի քանի կոճղեր դըրեց կըրակին,
Նորից բարեկեց իր յերկըն կարողով
Ու բարի մաղթեց ջահել զոնաղին:

Ու նրատեսցինք իրար դեմ ու դեմ
Սաստոթյամբ վառվող կրակի շուրջը,
Մեր առջև ձորն եր թըշշում խաղարչոին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը:

Գիշերվան անքուն հավքերն են տըխուր
Ծըվում, ծըլթում խաղարի միջում,
«Վարրն» և յեղբորը կանչում ցախալուր,
Բուն և իր դաժան վայր կորնչում:

Ու վողջ միասին մի խորունկ թախիժ,
Մի մութ դարդանդ են զիշերին տալի...
Ահա տարածվեց հեռու ծըմակից
Յեւ ձիւ վռոնոցը սովատանջ զիլի:



Ծանրը տընքալով թեք ընկալ ծերը,
Յերկար կոթավոր չիրուխը լըցրեց.
Գիշերվա նըման կիտած նոթերը
Խուլ վորտալով եսպես հարցըրեց.

— Ի՞նչ կա քաղաքում, դե՛ պատմիր տեսնեմ,
Իմանամ, յես ել ուրիշին ասեմ.
Մեռնող-ապրողից, թանգ ու եժանից,
Կամ նոր դուրս յեկած դաղեթից, բանից...»

Յերեք թաղավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, վոր եսպես լինի,
Խորհուրդ են արել, վոր ախուհեանե
Իր թախտից զըրկվի, ով կոխի անի:

Ո՞վ և իմացել եսպես հրաշք բան:
Ել ի՞նչ թաղավոր կամ ել ի՞նչ իշխան,
Վոր կոխի շանի, ուրչին չըտիրի,
Մարդ չըկտորի, յերկիր չալերի...»

— Ե՛հ, աստված սիրես, թող դրանց, պապի,
Յես շատ եմ զըզվել քաղքից, դաղեթից,
Ի՞նչպես եք ապրում, դու ձեզնից պատմի,
Ձեր որ ու կյանքից, ձեր ցալ ու դարդից:

— Ի՞նչ ես կորցըրել— ընչի ման դալի,—
Խոսեց ծերունին դասը խնդալով,—
Բա մեռած հո չենք, ապրում ենք ելի,
Այն մեռնողի յերանի տալով:

Մեր ապրուստն ի՞նչ և.— մի կտոր չոր հաց,
Են ել հըրեն հա՛— յերկընքից կախված:
Մի մարդ վոր նըրա յերեսը պահի՛
Նըրա ապրուստը ի՞նչ պեաք և լինի...»

Յես քեզ որինակ: Ես իոր ձորերում
Ես և չորս քսան տարիս լըրացավ,
Վոչ մի խնդություն տեսա իմ որում,
Վոչ ել մի անգամ աչքըս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ
Պըտիտ եմ դալի ես ձորի միջին,
Կըտիլս եմ տալի հազար ցալի հեռ
Ու չեմ կարենում— չեմ հասնում վերջին:

Վազներից ենքան ողուտ չի դալի,
Ինչ նըրանց համար յես փող եմ տալի.
Գըլուխը քարը, դոնե փող լիներ,
Ել ինչո՞ւ եսքան մարդ դանդատ կաներ:

Ձախ եմ հալաքում, կրակ եմ վառում,
Սրա համար ել փող եմ վըճարում:
Ես դալիեն ի՞նչ և.— մի յերկու լատան,
Հինգ ու վեց անգամ տարան դատաստան.

Ասում են՝ դե՞լ ես կտրել դու մերին :
Իրանցի ասում են ու քեզ չեն լսում ,
Մինչև չըտեսնես մեծին , պիտերին .
Հիմի տես նրանք ինչքան են ուղում :

Գողն ել մի կըռնից , դելն ել մյուս կըռնից ,
Աչքբեթ թեքեցիր— բանիդ տերը չես .
Գաշում են տանից , քաշում են դրոնից ,
Ու չես խմանում՝ վոր կողմը թըռչես :

Թե տանուտերին գանգատ եմ դնում ,
Բան չեմ վաստակում բացի դուշմանից .
Գողերի հետքը իր տունն են տանում .
Համեցե՛ք դիվան ուղիք սըրանից :

Նստեցնում ե քեզ մի յերկու բաժակ
Տաք ջուր խմեցնում կամ մի թաս ողի .
— Դու գնա , պա՛պի , միամիտ քընիք ,
Յես աչքի լուսը կըհանեմ գողի...»

Դարձել ե աշխարհքն , ախպեր , նո ու փախ ,
Սերը՝ դարձել սուր ու ջուրը՝ արին ,
Վոչ ամոթ ունի ուժեղը , վոչ վախ ,
Վայը յեկել ե տարել տրկարին :

Յերեկ իրիկուն եդ կոխքիդ սընից
Կախ եյին արած յերեք հըրացան ,
Տղեք են՝ փախած տանից , դիվանից ,
Յեկան ու ծեքին ել յեռ հեռացան :

Ո՞վ ե մեղավոր... Միտք եմ անում , միտք ,
Ու չեմ հասկանում ով ե մեղավոր :
Հենց են եմ տեսնում— մութ , անդեռ մարդիկ ,
Ել մենք ենք մեջտեղ տանջվում ամեն որ... »

Մեր բանն ել , ախպեր , եսպես ե յեկած ,
Մենք լեղու չունենք— ուժեղը աստված :
Մեր հին աղաթից ընկել ենք , զըրկվել ,
Նորն ել չըգիտենք թե ինչ ե յեկել :

Եստեղ մեղ մոտիկ թափաղներ ունենք ,
Այնքա , իմացիր , տասը տեր ունենք .
Փորներն վողողած , փոխկները թողած ,
Կըռները կանթած կըտերը կանդնած :

Մեկին մեր գյուղում մի թիղ հող ունի ,
Թըքես մի ծերից , մյուս ծերը կընկնի .
Վոչ ինքն ե վարում , վոչ տալիս մեկին ,
Բուռն ե հավաքել դյուղացու հողին :

Գընում ե ուրչի ապրանքը տանում ,
Թաքուն հավաքում իր հանդն ե անում ,
Աղմուկով քըչում իր հանդի միջից ,
Շտրափ ե անում անմեղ տիրոջից :

Պարում ե ձմեռն հարսանիքներում ,
Կամ մեծավորի թեփչի յե լիզում ,
Մինչև մի քանի շահի յե ճարում ,
Են ել տանում ե լալիում թիֆլիզում :

Մի որ սա յեկավ , թե՛ չորան Չատին
Վոչխարը թաքուն իմ հանդն ե քաշել .
Չատին ել կուլ չի դընաց թափաղին .
— Թող դա մի տեսնենք— եդ ո՞վ ե տեսել :

Աղաչանք արի , պողատանք արի ,
— Ա՛յ , տղա , սախ , յեռ քա՛լվի , հեռի ,
Բեր ձեռը վեր կալ , անե՞ք չար բանին...»
Բայց ի՞նչ հասկացնես բրոսի չորանին :

— Չե՛ վոր չե՛ , ասավ , են յեռ սարի պես
Գընաց դիք կանդնեց դեղի մեյդանում .
Ես դատաստանը , ես թափաղն , ես յես ,
Թող դա մի տեսնենք՝ ինձ ինչ ե անում :

Յեկան իրարու, խոսք խոսքի հասալ,
Չատին մի քանի կոշտ խոսքեր ասալ.
Դե մարդիկ յերբվոր կոխլ են անուս
Մեջ տեղ փլալ չեն իրար բաժանում:

Մեր տանուներն ել, աստված է որհնել,
Եսպես մի բան եր պակաս նրբան ել.
Մեկի պոչը միշտ մեկելի տակին,
Յեկալ տաքացած, ճիպտաը ձեռքին:

Յեկալ ես Չատնիս հաչիցը կապեց,
Ինչքան վոր զիտես՝ քո ասած թակեց,
Թե՛ պետք է կորցնեմ քեզ ենքան հեռու,
Վոր ել չըտեսնես արևը Լոուս:

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավաղի վոտքը խընդերքով,
Ինչքան վոր տվինք, ավել խընդերեցինք—
Բանը վերջացնի զեղական կարգով:

Ախպեր, ասեցինք, ի՞նչ արիք իրար.
Խոսք էք կովացրել, արին հո չարիք.
Համ ծեծել տրվիր, համ ըշտրափըդ աս,
Արի վերջացրու, բոլ ելալ, հերիք:

Սա վոտը դրեց վերի թարեքին.
— Եսքան ու եսքան բերեք, վոր ներենք...»
— Ես է ունեցածն աստըծու տակին,
Ել չըկա, ախպեր, վո՞րտեղից բերենք:

Ինչ արինք—չարինք, չեկալ հավատի,
Գրնաց ավելի բարձր դանգատակեց,
Թե՛ ինքրս թավաղ, թավաղի վորդի,
Ու չորան Չատին ինձ ուշուց տրվեց...

Վերեկից մի մարդ յեկալ քննություն,
Միրուքը հաչա, աստղը ճակատին,
Յեկալ, վեր յեկալ, մըտալ քյոխվի տուն,
— Վո՞րտեղ է, ասալ, են չորան Չատին...»

Չատին ել յեկալ անձոտնի ու մեծ,
Են փետի նըման մեջ տեղը տընկվեց.
Վոչ որենք զիտի, վոչ կարդն ու լեզուն,
Բերանը կապած սարի անասուն:

Քննությունն արին, բրունեցին դյաղին,
Թե՛ ի՞նչպես ուշուց կըտաս թավաղին.
Բաց արին տեսան զըրած զակնում,
Թե չորան Չատին Սիբիր է զընում:

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավաղի վոտը խընդերքով,
Ինչ ուղեց, արվինք, հեան ել խընդերեցինք՝
Բանը վերջացնի զեղական կարգով:

Ախպեր, ասեցինք, ի՞նչ արիք իրար,
Խոսք էք կովացրել, արին հո չարիք.
Համ ծեծել տրվիր, համ ուղածըդ աս,
Արի վերջացրու, բոլ ելալ, հերիք:

— Հո՛ զիտեք, ասալ յես ել խըղճի տեր,
Չեմ ուղում ընկնեմ արինն եդ տըղի,
Դըրա/խիղանը մենակ ես գիշեր
Պետք է վոր զըցի տեղը ես պի...»

Մարդը խիղճ ունի՝ եսպես է տուում,
Սըրանից ավել ել ի՞նչ եք ուղում.
Բաց տըղամարդը, վոր նամուս ունի,
Լավ է խմանում ինչ պատասխանի...

Յերեկ իրիկուն եդ կողքիդ սընից
Կախ եյին արած յերեք հըրացան...
Քանի՛—քանի մարդ կորալ իր տանից,
Քանի՛—քանի մարդ դառալ մարդասպան...

Ո՞վ է մեղավոր: Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով է մեղավոր.
Բայց իմ կարճ խելքով ենքանն եմ տեսնում—
Ապրիլ չի լինիլ եսպես ամեն ուր:

Մինը իր կամքին՝ ինչ ասես՝ անի.
Մյուսը խոսելու իրավունք չունի.
Յես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
Են վո՞ր աստվածն է կարգ դրել եսպես...

Յերկունն էլ հայ են, ունեն մի հավատ,
Ել ընչի՞ մուժիկ, կամ ել ի՞նչ թավադ.
Նըրա արինը կարմի՞ր է մերից,
Թե՞ ավել հունար դուրս կըզա ձեռից:

Թե չե՞ թավադ ես, ինչ ուզես՝ անես,
Յես չըկարենամ քեզ մի խոսք ասե՞լ...
Ե՛հ, մի՛ խոսեցնի, աստված կըսիրես,
Թե չե մի դաշաղ կըզառնամ յես ել...»

Լուց ծերունին: Իրար դեմ ու դեմ
Թիկնած էյինք թե՛ կըրակի չուրջը,
Մեր առջև ձորն եր թըշչում խավարչաին,
Մեր դեմը խաղում գիշերվան շունչը:

1890

ՊՈՒՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ

Նըստած եմ մի ուր ու միտք եմ անում.
Միտք եմ անում, մի՛տք, ու չեմ կարենում
Մի հընար դըտնեմ՝ ցավերըս հոգամ...
Վէր կենամ, ասի, մեկի մոտ դընամ,
Կըրկին պարտք անեմ, գլուխը քարը,
Մինչև վոր տեսնենք ինչ կըլնի ճարը:
— Վողջո՞ւյն Պատնասի դըլխից սըբբադան...
Յետ նայեմ՝ տեսնեմ՝ իմ ծանոթ Մուսան:
— Վե՛ր կաց, բանաստե՛ղծ, կանչում է այսպես,
Վե՛ր կաց ներշնչվի՛ր, դուրս արի հանդես.
Տանջվում են ահա յեղբայրըդ թըշվառ,
Հեծում, հալածվում աշխարհից աշխարհ:
Յերկինք են հասել արցունք ու արյուն...
Ահա՛ քեզ համար բերել եմ ավյուն,
Հույս տուր վըհատին, ըսփոփիր վորբին,
Ույժ տուր պանդուխտին իր յերկար ճամբին:
Նայի՛ր՝ աղջիկը ի՛նչպես ծաղկել է.
Աչքերի մըթնից պայծառ ծաղկել է
Կյանքի արևը ու սիրտ է հուզում,
Անձնըվեր սիրո յերգեր է ուզում...
Ուրախ ու անհոգ դարունն էլ ահա
Բազմել է կանաչ սարերի վըրա,
Չորերը լըցվել, փըռվել հովիտում.
Հավըերն յերդում են, ծաղկունքը փըթթում...
Դու ել ըսթափվի՛ր, յերգիր քեզ նըման,
Վողջունիր չըքեզ գալուստը գարնան:
— Հերիք եր, Մուսա՛, յերկինքը վըկա,
Ել համբերելու սիրտ ու տեղ չըկա,
Այնպես կանեմ քեզ, վոր դու մոռանաս

Արյուն ու դարուն, պոետ ու Պարուսա :
Անիծված լինին այն որն ու տարին,
Յերբ դերի դառա յես քու քընարին .
Քեզ հետ մըտերիմ դառնալու որից
Ձըրկված մընացի կյանքում բոլորից . . .
— Այն տաղա՞նդը, այն ձի՞րքն հաղա,
Վոր տըվել եմ . . .

— Այ խաբերա,

Ահա յես ել այդ եմ լալիս .
Ինչո՞ւ այս ձիւրքն եյիր տալիս :
Ձըրկեա՞նք յիր միթե այնժամ,
Թե ինչ աշխարհք պիտի յես դամ :
Թող լինեյի մի կեղեքող,
Հավաքեյի միշտ փող ու փող .
Առաջ թեև «դադան» ու «ցեց»,
Կրդառնայի շուտով յես մեծ,
Վեհ բարերար
Ազդի համար,
Մեռած որս ել պըսակ տային .
— «Իր վորբ ազդից— միակ հային» :
Կամ թե տերտեր լինեյի թող,
Խաչը վըղիս մեռել թաղող,
Մուգրի վերև միշտ նըստեյի,
Իմ ապրուստը դըրըստեյի,
Ազդն ել աչքը տընկեր վըրսս .
— Իմ փըրկողը դու յես, վոր կաս :
Ահա այսպես բան լիներ մարդ,
Գրնար ապրեր լի ու հանգարտ,
Կամ սընդուրված մի ճոխ հիմար,
Վոր ապրում է լոկ իր համար,
Ուտում-քընում, յեխում-ուտում .
Լի՛, դո՛հ, ինչպես աղբակույտում
Հանդիստ ապրող վորդը պարտար :
Կրլինեյի հարդի մի մարդ,
Նույնիսկ յեթե դըլուխ այնժամ
Դատարկ լիներ հաղար անդամ
Քան թե հիմա իմ գրպանը :

Ահա կյանքում այս է բանը .
Թե չե՛ վինել ի ծնե դերի
Մերկ Մուսայի ու յերդերի,
Վորդիք ու կին
Թողած բախտին,
Մերձավորի ծաղը ու ծանակ,
Ուժից ընկնել անժանակ—
Թե պոետ եմ . . . ո՛ր, վո՛չ, Մուսա՛ .
Մի անարդար պատիժ է սա :
Յեզ ինձ մոտիկ
Փորձված մարդիկ
Դեռ շատ վաղուց նըկատեցին,
Կըռիվ արին, խըրատեցին,
Թե աշխարհքին մըտիկ արա .
Շատն ել խընդաց խեղբա վըրա . . .
Իսկ յես ա՛խ, յես,
Միշտ խենթ այսպես,
Գիշեր-ցերեկ թերթում դըրճեր,
Շինում եյի դատարկ յերդեր,
Միշտ քու քամով եյի թըռչում :
Ու միշտ բախտից հեռու փախչում :
— Այ ապերա՛խտ, ի՞նչ ես ասում,
Այն վո՞ր բախտն ես դու ամոտում,
Վոր չեմ տըվել քեզ իմ ձեռքով .—
Աստվածային հըզոր ձիւրքով
Այս ցած կյանքից հեշտ ու անթե
Թըռչել յերկինք, վերե՛վ, վերե՛վ,
Յավեր, հողսեր վողջ մոռանալ,
Դըժոխք իջնել, դըրախտ դընալ,
Մնչուն ըզգալ, թովիչ յերդել . . .
Վո՞ր բախտից եմ յես քեզ գըրկել :
— Ո՛ր, վո՞ր բախտից . . . ա՛յ, սեերե՛ս .
Ահա շարեմ, հիշիր ու տե՛ս .
Ինձ մի անդամ առան տարան
Հաշվապահի ուտումնարան,
Շատ խոսեցին,
Համոզեցին,

Թե կալարտես այս դպրոցում,
Ատտեստատը հետո ծոցում,
Ուր վոր դընաս,
Տեղ կունենաս,
Լա՛վ փողով տեղ բուզգալտերի.
Խաղեյինդ ել տարեցտարի
Միշտ կալեցնի քու ուճիկը,
Վերջը վըբան ե... աղջիկը:
Բայց դու յեկար միտքես մըտար,
Ինձ չըթողիր տեղես դադար,
Դավթարն աչքիս դարձավ դաժան,
Թիվ, կոտորակ, թըվանըչան
Ուղեղիս մեջ դարձան վորդեր,
Քիչ եր մընում սիրտըս պայթեր.
Յեվ յես խրոնամ, խենթ յերեխա՝
Փող ու աղջիկ թողի, փախա,
Թե չեմ կարող, յես չեմ կարող,
Յես զըբող եմ, զըբող, զըբող:
Սակայն ելի՛ բախաբս ժըպտաց.
Ձեռքս բըռնեց տարավ հանկարծ
Ու պիտերի տըվավ պաշտոն:
Վոչ լի որ կար ինձ ե փոչ տոն:
Մեծավորըս այնքան սիրեց,
Հին զըբչակոթն ինձ նըվիրեց,
Ընկերներս ել ինձ դաս տըվին—
Վոնց պըրփեկ խընդրատըվին:
Բայց դու ելի յեկար զըտար,
Խաղաղ դործիս մեջը մըտար,
Յես ել՝ հիմարս՝ խկույնեթ
Վեճ բաց արի ամենքի հետ,
Թե ի՞նչ բան ե՝ խեղճ դյուզացուն
Գերի շինել՝ վողջ տարին բուն
Տանել, բերել ու թալանել,
Այբու պղինձն ամուրդ անել...
Այս բոլորը քիչ եր կարծես,
Այնքան արիք, սատանի պես,
Վոր զըբեցի մեծիս պարտավ.

Նա յել— կո՛րի, կո՛րի, ասավ,
Մենք ենք տալի քեզ փոխ ու վարձ,
Դու՛ Մուսայի խեղբով ընկած՝
Վեր ես կենում մեր դեմ խոտում.
Այդպես պիտեր մենք չենք ուզում:
Սակայն աստված մեճ ե գուլթով.
Հայտնի կանտոր ընկա շուտով:
Լավ եր, ասի, այսուհետե
Կապրեմ աղատ, դործըս թեթե:
Հետըս յեկար, մըտար կանտոր,
Գործերս արիք խառնուփընթոր,
Քու յերեսից հենց նույն տարին
Իմ պաշտոնից ինձ դուրս արին:
Այսպես յեղա յես խայտառակ,
Համ ել ընկա պարտքերի տակ.
(Հո պոետի պարտքն ել դիտես.
Այդ լոկ պարտք չի ուրիշի պես,
Այլ աղաչին մի մեճ առակ,
Վեճ ու վըճիս ծանր ու բարակ):
Վո՛ր մեկն ասեմ, վորը թողնեմ.
Յերբոր տեսան շընորք չունեմ,
Այնուհետե քանի անդամ
Ծանոթ, ընկեր, լավ բարեկամ՝
Տերտերության տըվին խորհուրդ.
— Ա՛յ քեզ մեճ ժամ, լավ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, հարդ, մեծարանք,
Հարստություն, հանգիստ, հեշտ կյանք...
Իսկ յես՝ անփորձ, անխելք, հիմար,
Վողջ մերթեցի լոկ քեզ համար,
Պատրաստ կյանքից, բախտից փախած,
Գանձանակի թեփշին թողած,
Քընարն առա,
Պոես դառա,
Յերդ ու տաղով մըտա հանդես.
— Հե՛յ, Մուսայի ընկերն եմ յես,
Ձայն տըվի յես վողեորված:
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, բիրտ հըրհըռաց

Ժողովուրդը միաբերան,
Թուրքերէ ե խեղճն այս խեղճ արդան:
Հեռու կորի, խենթ պատանի,
Վոր անպիտան դործի, բանի,
Ուշք ու միտքը արվել յերգին՝
Մի չես նայում ես աշխարհքին...
Մենք մարդիկ ենք— դործ ենք անում,
Խենթ-մենթ բաներ չենք հասկանում:
Յես դռնցի.— խավա՛ր ամբոխ,
Պաշտում ես դու լսկ փայլ ու փող,
Չես հասկանում դու պոետին.
Յե՛ս, յերկընքի քընքուշ վորդին,
Յերգում եմ սե՛ր, ճըմարտություն...
Ու դընացի խըմբադրատուն...
— Տեր խըմբադի՛ր, պոետ եմ նոր,
Բերել եմ ձեզ փոտանալոր,
Ահա կարգամ ախանջ դրեք,
Չեր հանդիսում տեղալորեք:

«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք որ ու դիշեր,
Նայում եք անթարթ իմ հոգու խորքում...
Ինչո՞ւ չեք քընում, ինչո՞ւ չեք փակվում.
Բանաստեղծն արդեն տանջանքից հողնել՝
Ուզում է քընել, համլիտյա՛ն քընել...
Դուք ել քընեցեք, սևորա՛կ աչքեր,
Յերեկս անցել է, դիշեր է, դիշեր...»

— Վոչինչ, կոկիկ է: Խոսելով անկեղծ՝
Դուք վատ չեք դըրում պարոն բանաստեղծ.
Ամեն մի տոգում տասն են վանկերը.
Բայց ինձ աղքատ են թըլում հանդերը:
Հապա մի արվեք, ուղղեմ յես հիմա,
Տեսեք՝ թե վորքան սահուն դուրս կը դա:
Ուղղում եմ յես միշտ մեր պոետներին,
Յյապես եմ պոետ շինել բոլորին:

«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք ինչպես քաջքեր...»

Յես իսկույն ինչպես հալածված քաջքից՝
Փախա խըմբադրից ու երեն աչքից,
Յերգերըս ուղիղ տարա տըղարան:
Դուրս յեկավ աչպես մի նոր յերգարան:
Այնժամ մըտարակող մի թունդ պուբլիցիստ,
Հայտնի քըննադատ, բաղմադետ ու խիստ,
Սաստիկ վըրդովված, անաչառ հոգով
Ծաղրի առավ ինձ իրեն «ակնարկով»:
— Յես դեմ եմ, աստվ, բանաստեղծության,
Չըգվեցնում է ինձ այդ յերգի Մուսան:
Վոչ մտքեր են պետք, վոչ ձիրք, և վոչ խելք,—
Բառեր ու հանդեր— և ահա քեզ յերգ:
Հենց նոր դուրս յեկած այս խակ տըղան էլ
Գլխից այս տեսակ բաներ է հանել:
Ուրի՛չ բան ելին հին պոետները...
Նըրանք ել մեռան, տարան հետները
Տաղանդ ու յերգեր... ամե՛ն, ամեն բան
Մըտով նըրանց հետ Խալար դերեզման...
Դարձավ անապատ... էլ ո՞վ է մընում...
Ել ուրիշ պոետ մենք չենք ընդունում...
Վորքան ծաղրում ենք, նըրանք չեն լըում,
Վոչ էլ մեր ուզած բաներն են գըրում:
— Ո՞վ բըրետների, կույրերի յերկիր:
Դու մի՛ համատար իմ հեզ վորդեգիր.
Յես այն հանդուցյալ լավերից նույնպես
Լըսել եմ հաճախ դանդառներ պես-պես:
Սպանում են դեռ ծաղրով ու թուլնով,
Ապա պըճընում նըրանց անունով
Լախում են նըրանց փաստակը արդար,
Ու նորից... նույն հին կրեիվը վատթար...
Յերգում եմ ահա ճառագող որով,
Վառ Ամորթայի մաքուր շողերով,
Խոսում ես դու այն չըքերի մասին,
Վոր միշտ անտեղյակ առաջին լուսին,

Չեն հըրճվում նըրա ծագման հանդիսով,
Միայն կեսորին, ապուշ յերեսով
Յեխում են մըռայլ, տեսնում քընեած՝
Գըլխների վերև արևը կանգնած,
Ու ծունկ են չորում,
Որհներգ են յերգում,
Հի՛ն որհներգությունն ու հի՛ն հըրեչներ...
Բայց միթե նըրանք ապրում են անմեռ,
Յեվ այդպես անհաշտ այտոր ել քեզ հեռ...
— Ինչ հըրեչ, Մուսա՛, ինչ կույր ու բըրեռ,
Ի՞նչ բաներ ես դու քեզնից հընարում...
Յես այն եմ ասում, թե մեր աշխարհում
Պոետները վողջ տըխրել են, ցավել,
Վոր իրենց յերգի քընար ես տըվել...
Յես ել... ինչ ասեմ... մեղավոր եմ յես,
Ծույլ ու անչորք, անպետք, սևերես,
Մեր խեղճ տանըցիք վո՛րքան նախատում—
Բայց յես՝ միշտ համառ, չեյի հավատում,
Մինչև լըսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի:
Մի որ ինձանից արավ հարց ու փորձ.
— Ունի՞ս, հարցըրեց, մի պաշտոն կամ դորձ:
— Բանաստեղծ եմ յես, ասացի հըպարտ:
— Դըժվար է, ասավ, յերբ անգործ է մարդ:
— Բանաստեղծ եմ յես, կըրկնեցի մեկ ել:
— Հասկացա՞նք, ասավ, պարտալ ես յեղել...
Յեվ խեղճ ընկերըս յերբոր՝ սըրտացավ՝
Սա յեկ պետքական մի մարդ է՝ ասավ,
Այնպես ծիծաղեց մեր աղան փառփառ,
Վոր և հասարակ և մեծ վեհափառ,
Ով վոր խմացավ,
Ծիծաղը պըրծավ:
Բայց վերջն ավելի պարզեց խընդիրը,
Յերբ հողված դրրեց մեր լըրագիրը:
Բանաստեղծն, ասավ, թող մի գործ չի՛նի,
Վոր հացի վարձի դառնա արժանի.
Թե չե համառի ու մընա պոետ՝

Ի՞նչ հաշիվ ունի ապգը նըրա հետ:
Ազգը հո նըրան չի խընդրում գըրի,
Թեթի՞ն ել փող չունի՝ թե վոր վըճարի...
Թող քընա ապրի իրեն գըրիչով...
Այսպես ենք դատում մեր մաքուր խըղճով:

Ներշնչման համար
Այսպես է հարմար.—
Ով սովից մեռել՝
Նա յե լավ գըրել:
Կարող ենք մենք ել
Այսպես մըտրակել
Ու ծաղրել մի-մի,
Վոր առաջ դիմի...»

— Ո՛վ ախոս-յերկիր, մըտրակի մարդիկ...
Դե յե՛կ, սիրելի՛ս, տանեմ քեզ յերկինք.
Այնտեղ յերջանիկ վողխների հետ
Ձըվարթ կը խընդաս ու կերգես հավես.
Կամ կուզես թըռցնեմ, հանեմ Վոլխմպոս,
Վոր նեկտար ըմպես, ճաշակես ամբոս:
— Իմ ազնի՛վ Մուսա,
Ա՛յ եղպես խոսա:
Ի՛րավ, այս կյանքից յես շատ եմ գըզվել:
Ի՞նչ յերանություն՝ յերկնքում սուզվել,
Այն չըքնաղներին, վորոնք, անկասկած,
Նըման չեն իսկի մեր հայոց կանանց—
Լինել միշտ ընկեր
Ու սիրո յերգեր
Հըրենե՛լ,
Ձոնե՛լ,

Յերկրային չընչին հոգսերը թողած,
Կամ, վոտներն հանդիսս ժայռերից կախած,
Նըստել Պառնասի յերջանիկ գըլխին
Ու բարձրից նայել այս հիմար խալխին:
Բայց յես ունիմ կին, շատ յերեխաներ,
Նըրանց բանն այնտեղ ի՞նչպես կը լիներ...
— Ո՛, յերբ Պառնասի գազաթ վերանաս,

Ձափահներ ու կին պիտի մոռանան...
— Ո՛վ դու անիրավ, ի՞նչ եմ արեղ քեզ,
Վոր ինձ իմ տանից այդպես բաժանես:
Էե՛, լավ ե կըրկին, վոր յերկրում մընամ,
Ծաղրի, նեղութ՛յան մի կերպ զիմանամ...
— Գու կամքը լինի, ազատ բանաստեղծ.
Ընտրիր ուր կուզես՝ յերկինք թե յերկիր,
Բայց միշտ, ամեն տեղ յեղիր դու անկեղծ,
Մաքուր, սըրտալի քու յերգը յերգիր:

Կանգնիր միշտ վերե,
Ու՛ ինչպես արև՝
Նայիր լուսավոր,
Պայծառ ու հըզոր.
Քու կոչումն ե դա.
Յեվ, ինձ հավատա,

Բոլոր դանձերը, գոհարներն անգին
Չարժեն կարճատև քու ներշնչանքին:
— Ա՛յ, դու սատանա, ե՛լ կրդես խաբել,
Մեծ-մեծ խոսքերով աչքերըս կապել.
Ա՛յ, դու կեղծավոր, սիրուն անպիտան.
Յես լավ եմ տեսնում այժմ ամեն բան:
Դու ինձ ես մենակ միամիտ դըտել.
Հապա դե խոսիր ուրիշի մոտ ել,
Ա՛յ, թեկուզ մեզ մոտ, հենց իմ կրնկանը—
Ասա՛ թե մենակ փողը չի բանը...
Բայց ի՛նչ եմ ասում, հայոց զըրո՞ղը
Վաղուց ե արդեն ճանաչել փողը.
Յեվ յերկար, յերկար մեր վողջ հանճարով
Մըտածել ենք մենք զըժար որերով՝
Գըրողի պըսա՞կ,
Թե փողի քըսա՞կ...
Յեվ լավ ենք վըճուել...
Դեհ, զընա՛, Մուսա՛.

Գըրադարանս չինում եմ կտտա,
Թըքում եմ և քեզ և քու պըսակին,
Յերկըրպաղում եմ փողի քըսակին:
«Փողի քըսա՞կը, փողի քըսա՞կը,

Բարձրացընում ե մարդու հասակը,
Գեղեցկացնում ե հըրեշ տըգեղին,
Սըրբադործում ե դարչն ու աղտեղին:
Նըրա ուժն ե՛ վոր դարձընում ե լոկ
Անասուններին հարգի ու խելոք,
Կույսին, զառամին մոտեցնում իրար,
Չարին, վաշխավին շինում բարերար,
Պըճնում ճակատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան անլախճան փառքի:
Նա յե միշտ շարժում դատողի լեզուն,
Նա յե հասցընում աղոթքն աստըծուն,
Նըրա վըրա յե աշխարհքը կանդնած,
Նա մեր հողին ե, մեր յերկրորդ աստված:
Պոետն ել բընավ թե խոսել ե վատ,
Տուժել ե սաստիկ, զըղձացել ե շատ,
Յեվ այժմ ահա խելքի յե յեկել,
Սկսել ե նըրան որհնութ՛յուն յերգել»:

Յերգըս վոր լըսեց իմ դըժբախտ Մուսան,
Իսկույն հավաքեց իր փստա-փուսան.

— Դե՛հ, մընաս բարյավ,
Անսի՛րտ, անիրա՛վ,
Յես այսքան տարի
Ինչ վոր քեզ արի,
Բոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար...

1901



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԳԵՐ

է՛ջ

Նախերգանք	7
Հին որհնություն	9
Գութանի յերգը	11
Համերգ	12
Աստղերի հետ	13
Մարդարեություն	14
Հայոց լեռներում	15
Հայոց վեչտը	17
Ժամանակն անվերջ	18
Ընտրյալը	19
Վայրեջք	21
Parodia	22
Հայրենիքիս հետ	24
Վրաստանի համար	26
Իմ յերգը	28
Դրադարանքս	29
Քոչաքարում յես վազել եմ	30
Պատրանք	31
Նվեր Վրաստանի բանաստեղծներին	32

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

Գարնան առավոտ	37
Դժժար տարի	38
Ճախարակ	39

Աբազիլ	40
Սոխակի վեչտը	41
Կաքավի գովեր	42
Կաքավի վողբը	43
Մանուկն ու ջուրը	46
Նորից յեկան են հավքերը	47

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Հիմի բացե՛լ են հանդես	51
Յե՛տ յեկե՛ք	51
Հին աշխարհքը ամեն որ	51
Զուր եմ փախչում, ինձ խաբում	51
Հանի՞ ձեռքից եմ վառվել	52
Ի՞նչքան ցավ եմ տեսել յես	52
Յերազումքս մի մաքի	52
Վո՞նց ե ժրպտում իմ հոգին	52
Ի՞նչ ես թռչում, խեղև սիրտ	52
Լինե՛ր հեռու մի անկյուն	53
Մի հավք զարկի յես մի որ	53
Ո՞վ ե ձեռքով անում, ո՞վ	53
Հե՛յ ազահ մարդ	53
Ազատ որը, ազատ սերը	53
Քուն թե արթուն	54
Յերնեկ եսպես՝ անվերջ քեզ հետ	54
Կյանքըս արի՛ հըրապարակ	54
Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր	54
Աղբյուրները հընչում են ու անց կենում	54
Խայամն ասավ իր սիրուհուն	55
Ես ե, վոր կա	55

ԼԵԳԵՆԴՆԵՐ, ԲԱԼԼԱԴՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ

Փարվանա	59
Աղջկա սիրտը	65
Անիծած հարսը	69
Ախթամար	72
Թագավորն ու չարչին	75

Մի կաթիլ մեղրը	78
Չարի վերջը	84
Շունն ու կատուն	90
Անբախտ վաճառականներ	93
«Պողոս-Պետրոս»	98
Արծիվն ու կաղնին	101
Մոծակն ու Մրջյունը	103

ՊՈՆՄՆԵՐ

Սասունցի Դավիթը	109
Թմկաբերդի առումը	141
Ոհուշ	152
Լոռեցի Սաքոն	180
Մարոն	187
«Հառաչանք»-ից հատվածներ	193
Պոետն ու Մուսան	203
Բովանդակութուն	214

Պատ. խմբագիր՝ Նվ. Թումանյան
 Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
 Արբանյակ՝ Ա. Արզախանյան

Կլավիտի լիտոյր՝ Զ-1053. Հրատ. 5051.

Պատվեր 772. Տիրաժ 3000.

Բուլղի՝ 62X94. Տպագր. 13.5 մամ.

Մեկ մամ. 38,400 նշան.

Հանձնված է արտադրութան 2 հոկտ. 1939 թ.

Ատորագրված է տպագրութան համար 24 հունվ. 1940 թ.

«Ազգային գրադարան»



NL0342231

32198

5A